



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material






2976



17

4





1910

2003







XIV

946

# Թ Ի Ն Ը Վ Ի Ի Վ

## Ի ԲՐԻՍԹՈՒՄՅԱ ԸՄԻՏԵ

ԱՋԱՏ ԹԱՐԳՄԱՆԵԱՆ

Ի

### ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԵԱՆԷ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ԶՄԻՒՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԵԱՆ

1865

7976










Փ Է Ն Ը Վ Ի Է Վ







Ժ Է Ն Ը Վ Ի Է Վ

Ի ԲՐԻՍԿԱՅԻ ՇԱԽՏԻ

ԱՋԱՏ ԹԱՐԳՄԱՆԵԱՆ

Ի

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆԷ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՋՄԻՈՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆԷ

1865









# Ժ Ե Ն Ը Վ Ի Ե Վ

## Ք Լ Ո Ր Է Ա Ռ Ա Ջ Բ Ն

Ժ Ե Ն Ը Վ Ի Ե Վ : անո-տեո-նի-նը :



Ք Ի Ս Տ Ո Ն Է Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Այլև և Գերմանիոյ մէջ տարածուելով, կուսպաշտութեան խաւարը այս երկիրներէն փարատեց, ժողովրդոց վայրենական սուխորութիւնները ամբլեց և քաղաքականութիւնը յառաջացուց : Խոսպանացեալ և անբեր երկիրն անդամ քրիստոնէական հաւատով լուսաւորուած ժողովրդոց արդեամբը դուարթ երևոյթ մը ստացաւ, և զանազան կողմեր մեծատարած անտառները ցորենի արդիւնաշատ դաշտերու և ծաղկափթիթ պարտեղներու փոխուեցան :

Աւրոսայի այս մասերուն մէջ քրիստոնէութիւնը ծաւալած միջոցին, Ստորին – Նահանգաց մէջ՝ Պրապանտաի դուքս անունով խիստ ազնիւ իշխան մը կը բնակէր,



որ ընդհանրապէս պատերազմի մէջ ունեցած աներկիւղ քաջութեամբը, ինչպէս նաև անկեղծ բարեպաշտութեամբը, մարդասիրութեամբը և արդարասիրութեամբը ամենուն սիրելի և պատուելի եղած էր: Իւր դքսուհի կինը նոյն ազնիւ զգացումներն ունէր, ու երկուքնին ալ մէկ սիրտ և մէկ հոգի էին: Միայն աղջիկ մը ունէին Դէնրվիէյվ անունով, զոր յանչափա կը սիրէին և լաւ դաստիարակութիւն մը կու տային անոր:

Դէնրվիէյվ իւր մանկութենէն խիստ խելացի էր, և պատուական սիրտ մը ունէր. իւր բոլոր վարուց մէջ քաղցրութիւն մը և դիւրազգացութիւն մը կը տեսնուէր: Արք ժամանակին սովորութեանց համեմատ՝ դքսուհին ճախարակին առջևը նստած կ'աշխատէր, իւր հինգ տարեկան աղջիկը գեղեցիկ աթոռակի մը վրայ նստած՝ խիստ յաջողութեամբ իլը կը գործածէր, ու խիստ հաւասար և մաքուր թելեր կը շինէր: Մ'անելու ատենը՝ իւր մօրը մտացի հարցումներ կ'ընէր, և անոր իրեն ըրած հարցումներուն քաղցր, յստակ և խելացի կերպով ճիշտ պատասխաններ կու տար: Օ՛րինքը տեսնողները և իւր խօսքերը լսողները զարմացած կը մնային, և կը խոստովանէին որ այս աղջիկը օր մը զարմանալի գործեր պիտի ընէ: Տասը կամ տասներկու տարեկան եղած ատենը, երբ իւր մեծաշուք ծնողացը հետ եկեղեցի կ'երթար, իւր գեղեցիկ դիմաց վրայ վառուած անբիծ աստուածապաշտութեամբը, իւր բոլոր անձին վրայ փայլած անմեղութեամբը և անբծութեամբը, խարտեաշ մազերուն ոսկեգոյն երկար խոպոպիքներովը, սպիտակ հագուստովը, ու իւր հօ-



րը և մօրը մեջտեղը՝ կարմիր թաւշեայ աթոռակի մը վրայ  
 ճնրագրեալ, երբ իւր գեղեցիկ կապոյտ աչքերը ջերմեռան-  
 դութեամբ լցուած դէպ ՚ի երկինք կը վերցընէր, և զողջ-  
 մամբ դէպ ՚ի վար կը խոնարհեցընէր, կարծէիք թէ հրեշտակ  
 մ'էր որ աղօթք կ'ընէր :

Աստուգիւ իբրև մխիթարիչ հրեշտակ մը կ'երևէր՝  
 աղքատաց խրճիթները օգնութիւններ հասցընելով, և հի-  
 ւանդաց անկողնոյն քովը ծառայելով : Աղորմելի մանկանց  
 իւր ձեռօքը կարած զգեստներ կը հագցընէր, և իւր դոր-  
 ծածութեան համար իւր հօրմէն առած ստակները թըշ-  
 ուառ աղքատաց կը բաժնէր : Առտու և իրիկուն փոքր  
 կողով մը թէր անցուցած՝ հիւանդներուն տունը կը վա-  
 ղէր դաղաուկ, և իւր բաժինէն պահած առողջարար կե-  
 րակուրներ և համեղ պտուղներ կը տանէր անոնց :

Այս կերպով մեծնալով՝ Ժէնրվիէվ բարեպաշտու-  
 թեան, պարկեշտութեան և անմեղութեան կատարեալ  
 օրինակ մը եղաւ, և բոլոր խելացի մայրերը զան իրենց  
 զաւակացը կ'առաջարկէին :

Այս միջոցին պատահած մէկ պատերազմին մէջ՝ Մի-  
 կիամոնտ անունով հողակալ իշխան մը Պրասպանտի դուք-  
 սին կեանքը աղատեց : Միկիամոնտ իւր քաջութեամբը,  
 աղնիւ բնութեամբը և զգացումներովը երևելի եղած աս-  
 պետ մ'էր, որուն դէմքէն ամեն մարդ կը պատկառէր :  
 Արբ պատերազմէն դարձան, դուքսը զան իւր պալատը  
 բերաւ, և իւր զաւակին պէս սննչափ սիրեց որ իւր աղ-  
 ջիկը անոր հետ ամուսնացուց : Արբ Ժէնրվիէվ իւր ա-  
 մուսնոյն հետ իւր ճնողաց պալատէն իրենց բուն պալա-



տը երթալու օրը հասաւ, թէ դքսական պալատին և թէ բոլոր շրջակայից բնակիչները արտասուք կը թափէին : Ժէնրվիէվ իսկ, թէև իւր ամուսինը խիստ կը սիրէր, բայց իւր ծնողքէն զատուելուն համար՝ չկրցաւ իւր աչքէն աղբիւրի պէս վազած արտասուքը զսպել :

Մայրը վերջին անգամ իւր աղջկը դրկելով՝ ըսաւ .  
 « Երթա՛ս բարեաւ, սիրելի աղջկս, մայրդ և ես ծերացած ենք, ու հոս պիտի կենանք . կարելի է որ մէկ մ'ալ զմեզ չտեսնես, բայց Մատուած միշտ հետդ պիտի ըլլայ . անոր պատկերը միշտ աչացդ առջևը և սրտիդ մէջ ունեցիր, ինչպէս որ մեզմէ տրվեցար, և ամենևին անոր ճանապարհներէն մի խոտորիր . եթէ այսպէս ընես, այն ատեն մենք ալ քեզի համար անհոգ պիտի ըլլանք, և խաղաղութեամբ պիտի մեռնինք » :

Մտորմէ ետքը՝ մայրը լալով աղջկը իւր դողդոջուն թևոց մէջ դրկեց, և անընդհատ հեծկտանօք հազիւ կրցաւ այս խօսքերը ըսել անոր . « Երթա՛ս բարեաւ, Ժէնրվիէվ, երթա՛ս բարեաւ, աղջկս . Մատուած քու պաշտպանդ ըլլայ : Ճակատադիրդ ինչ է չեմ գիտեր, բայց սիրտս անորոշ և աղէտալի նախազգացութիւններով լըցուած է . երկրի վրայ մեր ամենէն մեծ երջանկութիւնը դուն էիր, ամենևին մեր սիրտը չվշտացուցիր ու միշտ բարի զաւակ մ'էիր . ո՛հ, նայէ որ միշտ բարի և առաքինի ըլլաս . բնաւ մի ըներ այնպիսի դործ մը, որուն համար թէ Մատուծոյ և թէ ծնողացդ առջև ամէնաս : Դարձեալ կ'ըսեմ՝ միշտ բարի և առաքինի մնացիր, ու Մատուած քեզի հետ կ'ըլլայ : Եւ եթէ այս աշխարհիս մէջ



մէկ մ'ալ զիրար չկրնանք տեսնել, անշուշտ երկինքը կը տեսնուինք :

Ասկէ ետե՛ ծնողքը դէպ 'ի կոմսը դարձան և ըսին անոր . « Քեզ կը յանձնենք մեր զաւակը, սա տա՛ր զան հետդ . մեր ամենէն մեծ հարստութիւնը ան է, ու քեզի արժանի : Միշտ սիրէ զան, և այսուհետե անոր հօրը և մօրը տեղը բռնէ » : Միկիամոնտ կոմսը անոնց ամեն կամքը կատարելու խոստացաւ, և յէնը վիե՛վի հետ ծրուկան վրայ եկաւ որ անոնց հայրական օրհնութիւնը ընդունի :

Այս միջոցին՝ ներս մտաւ Միկիամոնտի և յէնը վիե՛վի հարսանեաց արարողութիւնը կատարող սպիտակ մազերով և կարմրագոյն այտերով Նաոլֆ եպիսկոպոսը, ան ալ ձեռքերը երկու ամուսնացելոց վրայ դրաւ, և օրհնելով զանոնք, ըսաւ յէնը վիե՛վին . « Մի լար, ազնիւ տիկին, Աստուած այնպիսի մեծ բարօրութիւն մը սահմանած է քեզի որ ամենևին մտքերնէս չանցնիր : Օր մը պիտի դայ, որ բոլոր հոս ներկայ զանուողները ուրախալից արտասուօք անոր համար շնորհակալ պիտի ըլլան Աստուծոյ : Աթէ երբէք արտաքոյ կարգի բան մը պատահի քեզ՝ ըսածս միտքդ բեր . . . Արթա՛ք բարեաւ, Աստուած հետերնիդ ըլլայ » :

Այս բարեպաշտ և խոհեմ ծերունոյն խօսքերուն վրայ՝ ամեն ներկայ զանուողներուն սիրտը անորոշ նախազգացութիւններով լցուեցաւ . կարծէին թէ անոր գլուխը մեծ փորձութիւններ պիտի դան . բայց ամենքնին ալ երկնային Սախախնամութեան վրայ վստահանալով՝ իրենց



տրամութիւնը փարատեցին : Ահնրվիկ զոյնը նետած և  
 դողդղալով իւր էրկան օգնութեամբը իրեն համար պատ-  
 լաստուած շքեղ ձին հեծաւ , Աիկիամոնտ այ իւր պատե-  
 րազմական ձիուն վրայ ցատկելով , անոր հետ միատեղ ճամ-  
 քայ ելաւ բազմաթիւ ասպետներու ընկերակցութեամբը :



### Գ Լ Ո Ւ Խ Բ

Աիկիամոնտ պատերազմի կերպաց :

Այս կոմսին բերողը Ուէնտսի և Մոդէլի մէջ տեղը  
 քարձր ժայռի մը վրայ խիստ զուարճալի տեղ մը շինուած  
 էր : Այր կոմսը ամուսնոյն հետ հոն մտակցաւ , իւր բերդին  
 բոլոր ծառաները և հպատակները , այր ու կին , երիտա-  
 սարդ սղայ և աղջիկ , իրենց ամենէն շքեղ զգեստները հա-  
 զած ժողովուեր էին կոմսը և իւր կինը ընդունելու : Մեծ  
 դուռը ծաղկեայ պսակներով զարդարեր էին , և ճամբան  
 ծաղկիներ ախուռած էր :



Ամեն մարդ ծաղիահաս իշխանուհին անսնելու մեծ  
 փափաղ մը ունենալով՝ իրենց բոլոր նայուածքը Դէնը-  
 վիէվի վրայ դարձուցին, ու խիստ գոհ և ուրախ եղան .  
 վասն զի Դէնը վիէվի հրեշտակային ազնիւ դէմքը կը ցու-  
 ցընէր որ իւր սիրան ալ դէմքին պէս մարդասէր և հրեշ-  
 տակային է :

Իշխանուհին ձիէն իջնալէն ետև՝ քաղցրութեամբ ,  
 մարդասիրութեամբ և խանդաղատախառն ու անկեղծ  
 զղացմամբք բոլոր ժողովուրդը բարեւեց . ծերերուն հետ  
 ակնածութեամբ, զաւակնին գրկած կամ անոնց ձեռքեր-  
 նէն բռնած մայրերուն հետ սիրով կը խօսէր . անոնց ա-  
 նունը և տարիքը կը հարցընէր և առատութեամբ պար-  
 գէներ կը ցրուէր, այնպէս որ ամեն մարդ իւր վրայ կը  
 զմայլէր :

Դէնըվիէվ՝ ճամբան իւր ամուսինէն ընդունած խոստ-  
 ման համեմատ երբ իմացուց թէ այն տարի պատերազ-  
 մականները և ծառաները կրկին վարձք պիտի ընդունին,  
 հարատակները և հարկատուները հարկէ ազատ պիտի ըլ-  
 լան, և աղքատաց առատ ցորեն և փայտ պիտի բաժ-  
 նուի, բոլոր ժողովուրդը միաբերան ցնծութեան ձայներ  
 հանեցին, և իրենց ուրախութենէն արտասուք կը թա-  
 փէին, ու իրենց իշխանին և իշխանուհւոյն բարօրութեան  
 համար ջերմեռանդ բարեմաղթութիւններ կ'ընէին : Առմ-  
 սին ծերունի զինուորները, որոնք իրենց զինաւորէն պատ-  
 կառելով՝ զէնքերնին բռնած անշարժ կեցեր էին, չկրցան  
 իրենց յուզմունքը զսպել, և արտասուքնին սառւար ըն-  
 չացքնէն վար կը հոսէր :



Միկիամոնա և Չէնրվիէվ խիստ երջանիկ օրեր անցուցին, բայց այս երջանկութիւնը միայն քանի մը շաբաթ տևեց: Իրիկուն մը հացէն ետև՝ երբ երկու ամուսինները իրենց սենեակը նստած, Չէնրվիէվ բամբակ կը մանէր ու կ'երգէր, ու Միկիամոնա իր վիճովը անոր ձայնակից կ'ըլլար, յանկարծ բերդին առջև պատերազմական փողերու ձայներ լսուեցան:

« Ինչ կայ արդեօք, պոռայ կոմսը իր զինակրին, որ դէպ ՚ի իրեն կը վազէր:

— Պատերազմ ունինք, պատասխանեց զինակիրը: Մաւրիտանացիք Սպանիայէն Պաղղեոյ վրայ յանկարծ յարձակում ըրեր են, և ամեն կողմ ՚ի հուր և ՚ի սուր մատներու կը սպառնան: Այլը երկու ասպետներ կը ըստպասեն, որոնք թաղաւորին կողմէն հրամաններ բերած են: Աթէ հնար է՝ այս զիշեր ճամբայ ելել պէտք է անմիջապէս թաղաւորին բանակը հասնելու համար»:

Աոմսը խիոյն վար իջաւ, երկու ասպետները բարևեց, և ընդունելութեան մեծ օրահր հրամայուց զանոնք: Աոմսուհին ահուգողով խոհանոցը վազեց, որպէս զի ասպետները մեծարելու համար հարկ եղած պատրաստութիւնները ընել տայ. քանզի այս հին ատենները կոմսուհիները իրենց խոհանոցը մտնելու ամենեին չէին ամչնար:

Աոմսը բոլոր զիշերը իւր պատրաստութիւնները ընելու զբաղեցաւ. նուիրակներ զրկեց որ իւր երկրին ամեն կողմէն զինուորները ժողովեն, և իւր բացակայութեան ատենուան համար ամեն բան կարգի դրաւ:

Մերձարնակ ասպետները խիոյն վազեցին իւր բերդը



ամփոփուեցան, զոր իրենց զէնքերուն շառաշխնովը, զրահաւոր զօրականաց քայլերուն և կոշկաց խթաններուն ձայներովը կը հնչեցընէին :

Մոմսուհին ալ բոլոր դիշերը զինուորներուն կերակուր տալու և կոմսին ձերմկեղէնները և բոլոր հարկաւոր եղածները ծրարելու զբաղեցաւ : Առտու լուսնալուն պէս՝ բոլոր ասպետները սպառասպուռ զինեալ մեծ սրահին մէջ գումարուեցան. կոմսն ալ նոյնպէս սպառագինեալ ու իւր սաղաւարտին վրայ շքեղ փետուր մը դրած անոնց մէջ կը դանուէր : Երբդին մեծ դրան առջին ձիաւոր և հետեակ զօրքերը պատերազմի կարգով շարուած անոր կը սպասէին :

Այս միջոցիս Ժէնրվիէվ սրահը մտաւ, և ժամանակին ասպետական սովորութեան համեմատ՝ ձեռքովը իւր ամուսնոյն սուրը և նետը տալով, « Այս զէնքերը, ըսաւ անոր, Աստուծոյ և հայրենեաց փառաց համար դործածէ՛ հարստահարեալ անմեղութիւնը պաշտպանելու և յանդուգն մեղապարտները սարսափեցընելու համար ». և զուսատեալ անոր գրկացը մէջ ինկաւ՝ աղէտալի նախազգացութիւններով լցուած :

« Ա՛հ, Սիկիամոնտ, յաւերցուց Ժէնրվիէվ հառաչանք մը հանելով և երեսը թաշկինակին մէջ պահելով, ի՛նչ պիտի ընեմ՝ ես թէ որ մէկ մ՛ալ չվերադառնաս :

— Ա՛նհոգ եղեր, Ժէնրվիէվ, պատասխանեց կոմսը, առանց Աստուծոյ հրամանին՝ թշնամեաց մէջէն մէկը պիտի չկրնայ յաղթահարել զիս : Ամեն տեղ Աստուծոյ



աջոյն տակն ենք, պատերազմի դաշտին մէջ ալ՝ մեր բեր-  
դին մէջ ալ մեռնելու ենթակայ ենք: Միայն Աստուած  
կրնայ ամեն վայրկեան զմեզ անկէ պահպանել. ան է մի-  
այն բանակաց Աստուածը և աննուածելի պատնէշը: Ու-  
րեմն մի վշտանար, սիրելի ամուսինս, և ինձի համար ան-  
հոգ եղիր: Իմ հաւատարիմ տեսուչիս յանձնեցի, որ  
բերդին, կոմսութեան և քու վրայ հոգ տանի: Ասկէ  
ետե ոչ միայն բերդին տեսուչն է, այլ և բոլոր երկիր-  
ներուս գործակալը: Մնաս բարեաւ, սիրելիս, գ.քեզ Ա-  
մենակարողին պաշտպանութեանը կը յանձնեմ. յիշէ՛ միշտ  
զիս և աղօթք բրէ ինձի համար”:

Ժէնրվիէվ մինչև սանդուղին վարը անոր հետ ըն-  
կերացաւ. բոլոր ասպետները ետեէն իջան: Մեծ դուռը  
հասնելնաւն պէս՝ փողերը սկսան հնչուիլ, պաշտօնատար-  
ները սուրերը մերկացուցած արևուն շողացրնելով, կոմ-  
սին ներկայութիւնը բարեեցին: Իսկ Միկիամոնտ իւր ա-  
չաց արտասուքը չյայտնելու համար՝ աշխուժիւ մը ձիուն  
վրայ նետուեցաւ, և բանակին առջևը ինկաւ. անոր ե-  
տեէն բոլոր ասպետները և զինուորները շարժական կա-  
մուրջին վրայէն անցան: Ժէնրվիէվ մինչև անոնց անե-  
րեոյթ ըլլալը աշտարակին վրայէն ետեանէն պշուցեալ նա-  
յելէն ետե՝ իւր սենեակը փակուեցաւ, և բոլոր օրը բան  
մը չկրցաւ ուտել:





## ՊԼՈՒՏ Գ.

Կ՛ուտ ք՛ի-նի-նը :

Կուսին մեկնելէն ետև՝ յենթիկէվ խիստ առանձին  
 կեանք մը անցուց : Արշալոյսը ծագելուն պէս՝ իւր աշխա-  
 տութիւնը առած պատուհանին առջևը կը նստէր, ու իւր  
 արտասուքները բանեցած ասղնէգործին ծաղկանց վրայ ցո-  
 ղի կաթիլներու պէս կը վաղէին : Պատարագի զանգակին  
 ձայնը առնելուն պէս՝ բերդին մատուռը կը փութար և  
 ջերմեռանդութեամբ իւր էրկան պահպանութեանը հա-  
 մար աղօթք կ'ընէր : Ամենեին օր չէր անցըներ որ եկե-  
 ղեցի չերթայ, և կէս օրէն ետև իսկ առանձին քանի մը  
 ժամ շարունակ աղօթքով կ'անցընէր :

Բերդին բլրակին ստորին կողմը դանուած դիւղին աղ-  
 ջիկները իւր բոլորտիքը կը ժողվէր, անոնց մանել և կարել  
 կը սորվեցընէր, ու աշխատելու ատեննին՝ կարևոր և կրօ-  
 թայի պատմութիւններ կը պատմէր անոնց : Իւր ման-  
 կութենէն միշտ աղքատաց և հիւանդաց բարեկամն էր,  
 ու հիմա անոնց ճշմարիտ մայրն եղեր էր : Ամենեին թըշ-  
 ուտ մէկը չկար, որուն օգնութիւն չընէր. ամեն խրո-  
 ճիթները կը պտրտէր, ու հիւանդաց այցելութիւն կը  
 նէր. իւր քաղցր ու ճարտար խօսքերովը և խանդակաթ-  
 մարդասիրութեամբը ամենէն դառն դեղերն անգամ կ'ա-  
 նուշցընէր : Իրիկունները իւր ծառաներուն քովը մանե-



լով կանցրնէր, և շատ անգամ՝ լուսին եղած իրիկունները  
առանձին իւր սենեակը նստած՝ իւր վինը կը նուագէր և  
բարեպաշտ երգեր կ'երգէր: Ամեն բանէն առաջ բարե-  
կարգութիւնը և լաւ կենցաղավարութիւնը կը սիրէր, և  
իւր հրամանին տակը եղողներուն ապօրինաւոր դործոցը  
ամենեւին չէր ներեր:

Մոմսին կողմէն բոլոր ստացուածոց վրայ դրուած տե-  
սուչին անունը Մոլօ էր, որ մտացի, խորամանկ և կեղծա-  
ւոր մարդ մ'էր, ու իւր շողքորթ և յանկուցիչ խօս-  
քերովը ամենուն վատահոթիւնը շահելու կերպը գիտէր,  
սակայն մոլի և անխիղճ մէկն էր: Միայն իւր անձնական  
շահուն և զուարճութեանց կը մտածէր. ուղածը կ'ընէր  
և ամենեւին չէր մտածեր թէ ըրածը իրաւացի է՝ եթէ  
անիրաւ, միայն թէ իրեն օգտակար և հաճելի ըլլայ:  
Մոմսին մեկնելէն անմիջապէս ետքը՝ սկսաւ իրրե բացար-  
ձակ տէր վարուիլ ամենուն հետ:

Մոմսէն աւելի փառաւոր կը հազուէր, ամեն օր խըն-  
ճոյքներ կ'ընէր, ու իւր տիրոջ եկամուտները այսպէս կ'ո-  
չընչացրնէր:

Միւս կողմէն կոմսին հին և հաւատարիմ ծառայից  
հետ գոռոզութեամբ կը վարուէր. ամենէն յետին դոր-  
ծաւորաց վարձքն անգամ կը կտրէր, և աղքատաց պա-  
տառ մը հաց անգամ չէր տար: Միայն Ժէնրվիէվը  
կը յարդէր, և անսահման բարեկամութիւն ու սէր կը  
ցուցրնէր անոր: Իսկ Ժէնրվիէվ միշտ ծանրութեամբ  
կը վարուէր, ամենեւին ընտանութիւն չէր ընէր անոր հետ,  
ու շատ անգամ իւր պարտաւորութիւնները կը յիշեցրնէր



իրեն : Առջի բերան՝ Աղօ անոր հնազանդիլ ձևացուց ,  
 և իւր զեղխութիւնները անորմէ պահելու կը ջանար ,  
 բայց սակաւ առ սակաւ համարձակութիւնը ձեռք առաւ ,  
 և վերջապէս յանդգնեցաւ պարկեշտ տիկնոջ մը պատիւը  
 վիրաւորելու առաջարկութիւններ ընել : Դէնք վիէվ սոս-  
 կումով և սրտմտութեամբ մերժեց զանոնք : Այն օրէն  
 Աղօ անհաշտ ատելութիւն մը պահելով , ուղեց անորմէ  
 վրէժ առնուլ և միտքը դրաւ որ անոր կեանքը վերցրնէ :

Դէնք վիէվ կոմսին նամակ մը գրեց , որու մէջ Աղ-  
 օյի ընթացքը մի առ մի ստորագրեց , և աղաչեց զան որ  
 շուտով այն թշուառականը իւր քովէն հեռացրնէ :

Տրադօ անունով կոմսին խոհապետը , որ պարկեշտ  
 մարդ մ'էր , և ամեն բանէն աւելի իւր տիրոջը շահը նա-  
 խապատիւ կը սեպէր , կրցածին չափ Աղօյին անիրաւ խոր-  
 հրդոց դէմ կը դնէր : Ուստի կոմսուհւոյն գրած նամա-  
 կը վատահ մարդու մը ձեռքը դադանի կոմսին զրկելու յանձ-  
 նառու եղաւ . բայց խորամանկ Աղօն անոնց այս խոր-  
 հուրդը իմանալով , առտու մը խիստ կանուխ երբ կոմսու-  
 հին էրկանը զրկելու նամակը իւր սենեակին մէջ Տրա-  
 դոյին կը յանձնէր , Աղօ սուրը ձեռքը յանկարծ ներս մը-  
 տաւ , Տրադօն սպաննեց , և սկաւ սոսկալի ձայներ հա-  
 նել : Երդին բոլոր բնակիչքը վազեցին եկան ու նայեցան  
 որ Դէնք վիէվ դռնատեալ , սոսկումէն պաղած անձայն՝  
 աթոռի մը վրայ ինկեր էր , ու իւր ոտից ներքեւ Տրադօ  
 արեան մէջ կը լողար : Այս սպանութեան վրայ ամենուն  
 սոսկումը դրդուած ատեն՝ Աղօ ուղեց առաքինի կոմսու-  
 հւոյն վրայ անիրաւ և ծանր զրպարտութիւններ բերուա-

2976





արել, որոնց վրայ ամեն մարդ ապարան մնաց: Այնու-  
հետեւ անօրէն տեսուչը բերդին ամենէն ամուր աշտարա-  
կին մէջ կոմսուհին իբրև մեղապարտ բանտարկելէն ետև՝  
իւր ձեռքը կոմսին նամակ մը դրեց, որու մէջ նոյն ստա-  
յտը զրպարտութիւնները կրկնեց:

Այսին իւր տիրոջ բնութիւնը շատ աղէկ կը ճանչնար,  
գիտէր որ կոմսը առաքինի, արդարակորով, վեհանձն և  
զթած, բայց միանգամայն դիւրագրգիռ, նախանձոտ,  
բարկասիրտ և իւր բարկութիւնը զսպելու անկարող մէկն  
էր: «Այն, կ'ըսէր ինքնիրեն այս անօրէնը, որչափ և ա-  
ռաքինի ըլլայ մարդ, իւր զսպել չկրցած մէկ պակասու-  
թիւնը կը նմանի արջին կնճիթէն անցած երկաթեայ ման-  
եակին, որով մարդ դիւրութեամբ ուղած տեղը կը քա-  
շէ զան»: Այս կը յուսար որ կոմսը բարկանալուն պէս՝  
իւր կոմսուհի կնոջ դէմ սոսկալի հրամաններ և կարելի  
է անոր մահուան դատակնիքը զրկէ:





## ՔԼՈՒԹ Գ.

## Առճառ-էին Բանտարին մէջ:

Քերդին ամենէն սոսկալի աշտարակը մեղապարտներուն բանտն էր, որուն առջեւն ժամանակաւ Դէնրվիէվ անցած ատենը կը սոսկար, և բանտարկեալներուն վրայ կը դժար, բայց հիմա այս աշտարակին ամենէն խորունկ ստորերկրեայ բանտին մէջ զինքը բանտարկեր էին: Այս խաւար, ցուրտ և խոնաւ բանտը իրեն իրրե զերեզման մը կերեէր. մոխրագոյն պատերուն շատ կողմերը մամուռներով պատած էին ու զետինը կարմիր աղիւսներով յատակուած էր: Արևուն ճառագայթները և լուսնին քաղցր լոյսը այս ահուելի բնակարանին մէջ չէին թափանցեր, նեղ վանդակապատէ մը ներս եկած տկար լոյսը կարծես թէ բանտին սոսկալի երևոյթը ցուցնելու համար էր. բանտին մէկ կողմը բուռ մը յարդ տարածեր էին, որ իրեն թէ նստարանի և թէ անկողնոյ տեղ կը ծառայէր. իւր քովը քիչ մը սև հաց և հողէ ամանի մը մէջ քիչ մը ջուր դրեր էին: Աղորմելի բանտարկեալին աչքերն ու այտերը լայէն բոլորովին ուռեցեր էին:

Այսու ամենայնիւ՝ երբ իւր սրտի առաջին յուզմունքը քիչ մը հանդարտեցան, ջերմեռանդու թեամբ ծնկան վրայ եկաւ, ձեռքերը միացուց ու աչքերը դէպ ՚ի երկինք վերցնելով՝ այս աղօթքը ըրաւ. « Ա՛վ ողորմած և ան-



Համեմատ <sup>ձ</sup>այր, որ երկինքն ես, լսէ թշուառացելոյս, որ երկրիս խորունկը փակեալ կը տառապիմ, ուրիկից աչքս առ քեզ կը բարձրացընեմ: Բոլոր աշխարհ թողուց զեա, ու քեզմէ զատ ապաստան մը չունիմ: Ամենեին մէկը չկայ որ իմ անհնարին տառապանացս վրայ դուժ ունենայ, և ձայնս մարդկային ահանջ մը չկրնար լսել: Բայց դուն, ով Տէր, իմ արտասուքս կը տեսնես ու հառաչանքս կը լսես. քանզի դուն ամեն տեղ ես, նոյն իսկ այս խաւարին բանտին մէջ ներկայ ես: <sup>ձ</sup>այրս և մայրս դու իսս եկածը չեն գիտեր, և ամուսինս հեռի երկիր մը կը գանուի: Մտերիմ բարեկամներս կուզեն ինձ օգնութեան ձեռք մը կարկառել, բայց չեն կրնար բան մը ընել: Սակայն քու աջդ ամեն տեղ կը հասնի. դուն միայն կարող ես բանտիս դռները բանալ: Ով երկնային Աստուած, դժաւ ինձ:

Այս աղօթքէն ետե տրամութեամբ լցուած անձայն՝ յարդերուն վրայ նստաւ. « Ա՛հ, ըսաւ ինքնիրեն, աշխարհիս ամենէն թշուառ և աղքատ մարդիկն իսկ ինձմէ աւելի երջանիկ են. քանզի անոնք ամեն օր կապոյտ երկինքը և կանաչազարդ գեղեցիկ դաշտերը կը տեսնեն: Փոխանակ դքսուհի և դքսական իշխանուհի մը ըլլալու, ինչո՞ւ արդեօք հովուուհի մը կամ յետին մուրացկան մը չըլլայի. որչափ աւելի երջանիկ պիտի ըլլայի արդեօք: Ափսոս, իմ ունեցած բոլոր տխուրաններս և հարստութիւններս մերկացայ, ու հիմա բան մը չունիմ: Արեւն անդամ որ բոլոր աշխարհ կը լուսաւորէ, իւր լոյսը ինձմէ կը խրնայէ: Այսու ամենայնիւ, շարունակեց՝ վերստին յորդ արտասուք թափելով, անտեքունչ արարածոց աէրը դու



ես, ով Տէր իմ Աստուած, ուրեմն իմ վշտացեալ հոգւոյս արևը եղիր: Այո՛, ամեն անգամ որ իմ խորհուրդներս առ քեզ կը բարձրացրնեմ, հոգւոյ հանդարտութիւն մը կը զգամ, և վիշտերով բեռնաւորուած սիրտս թափած արտասուքներովս կը թեթեւայ”:

Այս միջոցին՝ պատուելի եպիսկոպոսին իրենց երթաք բարեաւ ըսած ատեն՝ ըրած մարդարեւական գուշակութիւնները յիշեց: “Այո է արդեօք, ըսաւ աչքերը բանտին բոլորտիքը շրջելով, այս է ինձի համար գուշակած երջանկութիւնդ, պատուելի հայր: Արդեօք երջանկութիւն ըսածդ՝ ծաղկեայ պսակներով զարդարուած յալթութեան կամարներուն տակէն անցնելէս ետև՝ այս ըստորերկրեայ բանտը մտնելս է: Սակայն, ով Աստուած, կարելի է որ այս բանտարկութիւնը իմ երջանկութեանս համար ըլլայ: Այո, զմեզ սիրելուդ համար՝ փորձութիւններ կը զրկես մեզ, որոնք քու դաղանի բարիքդ են. քանզի թշուառութեան երևոյթին տակը երջանկութեան և օրհնութեան գանձ մը կը պահես, ինչպէս որ դառն և կարծր պատեանի մէջ ախորժելի պտուղ մը կը գտնենք: Ռատի հնազանդութեամբ դժբաղդութեանս կը համբերեմ իբրև քու հայրական կամօքդ ինձ եկած: Միայն քեզ կը մտածեմ, ով Աստուած, և իմ հալածիչներուս դէմ ամենեկին տրտունջ մը չունիմ: Թէ որ հրամանդ այս է, ով Տէր, թող կատարուի: Քու սուրբ կամօքդ ինչպէս որ կը հաճի՝ թող այնպէս տնօրինէ, միայն թէ քու շնորհացդ մէջ պահպանէ զիս, և մէկը պիտի չկրնայ ինձ վնաս հասցընել՝ եթէ դուն չթողուս”:



Այս աղօթքէն ետե՛ իւր սիրտը մխիթարութիւն մը  
 զգաց, որպէս թէ ներքին ձայն մը իրեն այսպէս ըսէր .  
 « Քաջալերացիր, Ժէնրվէկ, իրաւ է որ քիչ մը պի-  
 տի քաշես, բայց Աստուած քեզ օգնութեան պիտի հաս-  
 նի : Այսօր դուն մարդոց աչաց առջին յանցապարտ կե-  
 րեիս, բայց օր պիտի դայ որ քու անմեղութիւնդ արեւէն  
 աւելի պայծառ պիտի փայլի » : Այս խորհրդածութիւնն  
 ները հանդարտ քունի մէջ ընկղմեցին զինքը :



### ՔԼՈՒԲ Ե .

Ժէնրվէկ քանդօ՞նն թէ՛ պողայ զաւանի մը ին թնի :

Ժէնրվէկ արդէն քանի մը ամսէ ՚ի վեր բանտին  
 մէջ իւր յղութեանը պատճառաւ կը տառապէր, ու Առ-  
 լոյէն զատ ուրիշ մարդու երես չէր տեսներ, որ անդա-  
 դար իւր մեղապարտ առաջարկութիւնները կը կրկնէր ա-  
 նոր, և կը պնդէր որ Ժէնրվէկ իւր կամքը կատարէ,  
 որպէս զի իւր պատիւն ու ազատութիւնը ընդունի : Բայց  
 համեստ կինը այսպէս կը պատասխանէր միշտ . « Աւելի  
 կ'ուզեմ՝ մարդոց առջև անպատիւ երեւիլ, քան թէ իրօք



ըղայ, աւելի կ'ախորժեմ անակողութեամբս այս աշտարակին խորունկը տառապիլ, քան թէ մեղօք թագաւորաց դահր ամբառնայ” :

Այսու ամենայնիւ՝ օրէ օր իւր տառապանքը կ'աւելնային, քանզի իւր ծննդաբերութեան ժամանակը մօտեցեր էր. վերջապէս Աստուծոյ անհուն ողորմութեամբը անփաստողայ զաւակ մը ունեցաւ այն ստորերկրեայ ցուրտ և խոնաւ բանտին մէջ՝ ամեն տեսակ խնամքէ զրկուած, առանձինս ու խաւարին մէջ: Այնչափ իւր սիրտը Աստուծոյ լցուած էր, որ ամենևին չզգոհեցաւ: “Ո՛վ սիրտսուն զաւակ, ըստ զան իր գրկաց մէջ սեղմելով, ահա ծնար, բայց ո՛ւր, այս ստորերկրեայ սոսկալի բանտին մէջ, եկու արտիս վրայ հանդէ, որ դքեղ տաքցունեմ: Ափսոս, ողորմելի մայրդ կտոր մը կտաւ իսկ չունի որ դքեղ ամփոփէ: Ամենևին մէկը չկայ որ իրեն դղայ մը արդանակ մատուցանէ, աւանդ, ի՞նչպէս քու խեղճ մայրդ պիտի կարենայ դքեղ անուցանել” :

Այս ըսելով իւր նայուածքը միանգամայն և իւր զաւակը դէպ ՚ի երկինք վերցուց, ու աղբիւրի պէս արտասուք թափելով ըսաւ. “Ո՛վ Տէր, այս զաւակը քու կդէ, դու ինձ պարգևեցիր, ու ես բողորովին քեզ կը նուիրեմ զան: Այո, իմ առաջին հոգս պիտի ըլլայ զան քեզ նուիրելու: Սակայն՝ որովհետեւ չեմ կրնար քու սուրբ տաճարներէդ մէկը զրկել զան, և դուն այս ստորերկրեայ բանտին մէջ ալ ներկայ ես: Ես օգնական ձեռք մը չկայ որ զան մկրտութեան աւազանին վրայ բռնէ, և ոչ իսկ քահանայ մը որ հայրենի և մայրենի պարտաւորութիւն-



ները կնքահօր յիշեցրնէ : Աւափ , սիրասուն զաւակ , պէտք է որ մայրդ քեզ մայրութիւն միանգամայն և կնքահարութիւն ընէ : Աթէ զիս և զաւակս ողջ պահես , ով Աստուած իմ , կը խոստանամ որ ճշմարիտ հաւատոյ մէջ պիտի մեծցրնեմ զան , քու պատուիրաններդ անոր պիտի սորվեցրնեմ , որ զքեզ ճանչնայ , պաշտէ , իւր ամեն նրմանիները սիրէ , և զան ամեն տեսակ մոլութիւններէ պիտի հեռացրնեմ , որպէս զի կարող ըլլամ քու իբրև աւանդ ինձ յանձնած այս սիրելի և անդին զանձդ օր մը ամեն մեղքերէն և մոլութիւններէն անապական քեզ վերադարձրնել ” : Արկար ատեն լռութեամբ աղօթք ընելէն ետև ջրով կուժը ձեռքը առաւ , զաւակը մկրտեց և անունը դրաւ Յաւակ . “ Քանզի , ըսաւ , ցաւոյ և վշտաց մէջ ծնար ” :

Այն ատեն իւր ղենջակին մէջ ամփոփելով իւր ծրնկաց վրայ առաւ զան . “ Ահա , այս պիտի ըլլայ քու խանձարուրդ ” , ըսաւ , ու իւր տխուր նայուածքը իւր քովը դրուած կտոր մը կարծր և սև հացին վրայ դարձրնելով յաւելցուց . “ Ահա , խեղճ զաւակ , այս է մեր ամեն կերակուրը . բայց հող չէ , մօրդ արտասուքը զան պիտի կակղցրնեն , և Աստուծոյ օրհնութիւնը երկուքնուս ալ պիտի բաւականացրնէ ” :

Անգամ մը երբ զաւակը իւր ծնկացը վրայ քնացուցեր էր , անոր երեսը նայելով հառաչեց . “ Ավ Աստուած , բարեհաճէ քու նայուածքդ այս ողորմելի արարածին վրայ դարձրնելու : Ահ , այս տխուր , մութ և ցուրտ կամարներուն տակ՝ արեւուն լոյսէն և տաքութենէն զըր-



կուած և քիչ օղով ծաղիկ մը անդամ իւր պայծառութիւնը և գոյնը պիտի կորսնցընէր, պիտի թառամէր և ոչնչանար: Ա՛հ, Աստուած, ի՞նչպէս այս քնքուշ արարածը պիտի կարենայ ապրելու: Պահպանէ, ո՛վ Տէր, այս դժբաղդ մանկան կեանքը, որ իմ սիրոյս առարկան է և որուն համար ուրախութեամբ իմ կեանքս կը զոհեմ: Եւ այց դուն ինձմէ աւելի կը սիրես զան, ու մայր մը իւր զաւակը սիրածէն աւելի ամեն մարդերն ալ կը սիրես: Քանզի ըսիր, Տէր իմ. «Աթէ մայր մը իւր զաւակը մոռնայ իսկ, ես չեմ կրնար մոռնալ զան»:

Այսպէս խօսելու ատենը՝ զաւակը արթնցաւ, և առաջին անգամ իւր մօրը ժպտեցաւ. Ժէնրվիէյլ ալ ժրպիտ դէմք մը ցուցուց անոր. առաջին անգամն էր որ ողորմելի դքսուհին բանտարկուելէն ետքը կը ժպտէր. «Ա՛հ, կը ժպտիս, սիրասուն զաւակ, ըսաւ զան իւր սրտին վրայ սեղմելով. աս արդելանին ահռելի երեւոյթը հողդ չէ՛ բնաւ: Ա՛յո՛, ժպտէ, զաւակս, ժպտէ միշտ. այդ ժպտով ինձ շատ բաներ ըսել կ'ուզես, թէ՛ Մի՛ լար, մայր իմ, այլ ուրախացիր: Ստոյգ է որ դուն ազքատ ես, բայց Աստուած խիստ հարուստ է. դուն անօղնական մնացած ես, բայց Աստուած զօրաւոր է և ձեռնտու: Դուն զիս շատ կը սիրես, սակայն Աստուած զքեզ ալ զիս ալ շատ աւելի կը սիրէ: Ա՛հ, ժպտէ, սիրասուն զաւակ, ժպտէ. որչափ որ ժպտիս, մայրդ պիտի ջայ աշխարհի վրայ»:

Քանի մը օրէն ետքը՝ Աոլօ վերապին գալով, խռովեալ և վայրենի դէմքով մը անոր առջևը ներկայացաւ. «Ա՛լ համբերութիւնս հատաւ, ըսաւ անոր, գոնէ զա-



ւակիղ֊վրայ զթա : Թէ որ տակաւին կամացս դէմ դնես ,  
 զաւակիղ հետ մեռնելու պատրաստուէ : Ժէնրվելվ հան-  
 դարտ և աներկիւղ կերպով պատասխանեց անոր . « Ա-  
 լելի կուզեմ հազար անգամ մեռնիլ , քան թէ այնպիսի  
 դործի մը հաւանիլ , որուն համար Աստուծոյ , պատկա-  
 ռելի ծնողացս , ամուսնոյս և բոլոր առաքինի անձանց առ-  
 ջև ամօթով պիտի մնամ » : Այդ սպառնալից նայուած-  
 քով մը անոր նայելէն ետև՝ բարկութենէն գունատեալ  
 դուրս ելաւ , և երկաթեայ դուռը այնպիսի ուժով մը  
 քաշեց , որ բանտին հիմերը կարծես թէ սասանեցան , և  
 ձայնը երկար ատեն նեղ բակերուն մէջ հնչեց :



## Գ Լ Ո Ւ Բ Զ .

Ժէնրվելվ Սեկսոնոսի նամակ և գրէ :

Այս գիշեր մօտ՝ Ժէնրվելվ լսեց որ իւր բանտին  
 փոքր պատուհանը կամաց մը կը զարնեն : « Տիկին , ըսա-  
 քաղար և սրտաբէկ ձայն մը . տակաւին արթնուն ես . ո՛հ ,



ինչպէս ըսեմ. այն դարչելի Արօն, Աստուած անոր ա-  
նօրէնութեանց պատիժը տայ :

— Ա՛յլ ես դուն, հարցուց Ժէնրվել, ոտք ելել-  
լով և պատահանին մերձենալով :

— Աշտարակին պահապանին աղջիկն եմ, պատաս-  
խանեց ձայնը. կը յիշես այն երկար ատեն հիւանդու-  
թիւն քաշող Պէրթան, որուն դուն այնչափ բարիք ըրի-  
լուր հիւանդութեանը մէջ, ես ան եմ, տիկին, ու կ'ու-  
զեմ իմ երախտադիտութիւնս յայտնել քեզ. բայց ա-  
ւանդ, սոսկալի գոյժ մը պիտի հաղորդեմ. որոշուեցաւ որ  
այս դիշեր սպաննուիս. կոմսը այսպէս հրաման է ըրեր,  
քանզի Արօնին խօսքին հաւատալով՝ զքեզ իրօք յան-  
ցաւոր կը կարծէ : Այս դաղանը այսօր կոմսէն նամակ մը  
ընդուներ է, որուն մէջ կոմսը հրամայեր է որ գլուխդ  
կտրեն, ստոյգ զիտեմ : Արօնին՝ այս հրամանը դահլիճնե-  
րուն ըրած ատենը լսեցի : Օւաւակդ ալ միատեղ պի-  
տի սպաննեն. քանզի կոմսը զան իւր զաւակը ճանչնալ  
չուզեր է : Ա՛հ, տիկին, երբ այս քստմնելի հրամանը լը-  
սեցի, իսկոյն փախայ անկէ, ու աչքս չկրնալով գոցել,  
եւր նայեցայ որ ամեն մարդ խոր քունի մէջ ընկղմեցան,  
հիւանդութեանս չնայելով ոտք ելայ ու դժուարութեամբ  
մինչև հոս եկայ : Քանզի մեծ ցաւ պիտի ըլլար սրտիս,  
թէ որ ինձ ըրած բարերարութեանցդ համար շնորհակալ  
ըլլալու և վերջին հրամաններդ կատարելու չգայի : Թէ  
որ դաղանիք մը ունիս հաղորդելու, ըսէ՛ ինձ և բնաւ մի  
երկմտիր անկեղծութեանս վրայ, որպէս զի դաղանիքդ քե-  
զի հետ չթաղուի, ու կարելի է որ մը կարենամ անմե-  
ղութեանդ համար վկայութիւն տալ” :



Ժէնըվիէզ այնչափ սուկաց, որ իւր շփոթութենէն երկար ատեն չկրցաւ բերանէն խօսք մը հանել, վերջապէս ըսաւ անոր.

“Սիրելի և ազնիւ զաւակ, ըստ որում բարեսրտութեամբդ ինձ օգտակար ըլլալ կուզես, շուտով ճրագ մը, մելան, թուղթ և գրիչ բեր”։ Արիտասարդ աղջկը իսկոյն անոր հրամանը կատարեց, և Ժէնըվիէզ սկսաւ գրել. բայց բանտին մէջ աթոռ կամ սեղան մը չգտնուելուն համար՝ քարերուն վրայ տարածուելով՝ հետեւեալ նամակը գրեց.

“Սիրելի ամուսինս,

“Ստորերկրեայ բանտիս ցուրտ քարերուն վրայ տարածուած՝ այս վերջին նամակս քեզ կը գրեմ. դայն կարդացած ժամանակդ՝ մարմինս երկար ատենէ ՚ի վեր փոշի դարձած պիտի ըլլայ։ Քանի մը վայրկեանէն յաւիտենական արդարութեան առջև պիտի ներկայանամ. քանզի իբր մեղապարտ մահուան դատապարտուեր եմ, բայց Աստուած վկայ կը կանչեմ որ ես անմեղութեամբ կը մեռնիմ. Աստուծոյ սուրբ ներկայութեան առջև և յաւիտենականութեան եզրին վրայ կը բողոքեմ այս դրապարտութեան դէմ. հաւատա՛ ինձ որ այս աշխարհէս բաժնուելու ժամանակս սուտ չեմ խօսիր։

“Աւագ, սիրելի ամուսինս, աւելի քեզ կը ցաւիմ, որ այնպիսի դիւային շարախօսութենէ մը խարուեցար, եթէ ոչ անկարելի է որ դուն քու կնոջդ և զաւակիդ մահուան հրաման տաս։ Բայց եթէ որ մը սխալմունքդ ձանձնաս,



նէ, չըլլայ որ ցաւիս . դուն միշտ սիրեցիր զիս՝ զիտեմ,  
չէ որ քեզմէ է իմ մահն, ես Նախախնամութեան հար-  
ուած մը կը սեպեմ զայս :

“ Սակայն այսպիսի անխորհուրդ գործ մը ընելուդ հա-  
մար չըլլայ որ Աստուծմէ ներումն խնդրելու մոռնաս .  
միտքդ ըլլայ որ այսուհետեւ մէկը չդատաւարտես, մինչև  
որ զան չխօսեցընես : Թող այս անխորհուրդ դատաստանդ  
վերջին սխալածդ ըլլայ, ու այս ակամայ մեղքիդ փո-  
խարէն՝ անթիւ առաքինի և ազնիւ գործեր գործէ :  
Քանզի այս է միայն անդարմանելի մեղաց դեղը : Յա-  
ւելը և տրտմելը բանի մը օգուտ չունին : Ասկէ զատ՝ երկ-  
նից համար մտածէ, ուր քու Եկնը վիէվդ նորէն պիտի  
տեսնես, ու հոն անոր անմեղութիւնը և հաւատարմու-  
թիւնը պիտի ճանչնաս : Քարձեալ հոն և առաջին ան-  
գամ քու զաւակդ պիտի տեսնես, զոր քու աչքերդ չու-  
ղեցին երկրի վրայ տեսնել : Հոն շարագործները չեն կրո-  
նար զմեզ իրարմէ զատել :

“ Այսու ամենայնիւ՝ միայն քանի մը վայրկեան ու-  
նիմ ապրելու . մահուանս ժամը հասած է : Իմ անմե-  
ղութիւնս քեզ ճանչցընելով վերջին պարտաւորութիւնս  
կատարած կ'ըլլամ :

“ Մեր երջանիկ օրերուն մէջ ինձ ցուցուցած սիրոյդ  
համար շնորհակալ եմ և քեզի համար ունեցած սէրս  
հետս գերեզման կը տանիմ :

“ Քեզ կը յանձնեմ իմ բարի ծնողքս, դուն անոնց  
բարի զաւակ մը եղիր, ու իրենց տառապանացը մէջ մխի-  
թարէ զանոնք : Ափսոս, մահաբեր ժամս հասած ըլլա-



լուն՝ չեմ կրնար անոնց նամակ գրել, բայց դուն լսե՛ս ա-  
նոնց թէ իրենց յէնդվիւզը յանցանք չունէր և անմեղ  
մեռաւ, թէ ևս վերջին ժամուս մէջ անոնց վրայ կը մը-  
տածէի, և անոնց ինձ տուած բոլոր խնամոցը համար  
չնորհակալ եմ բոլոր սրտէ :

« Իսկ այն անմիտ Աղօն չըլլայ որ բարեութեանդ մէջ  
սպաննեա . ներէ անոր ինչպէս որ ևս կը ներեմ, կը լսեմ,  
սիրելիս, կ'աղաչեմ քեզի . քանզի չեմ ուզեր որ յաւի-  
տենասկանութեան մէջ հետս որ և է ոխ մը տանիմ, և իմ  
պատճառաւ կաթիլ մը արիւն անդամ հոսի :

« Չըլլայ որ գլուխս կտրողներն ալ պատժեա, ընդ  
հակառակն անոնց և ընտանիքնուն բարիք ըրէ, քանզի ա-  
նոնք հնազանդելու պարտաւորեալ են և ևս հաւատարի  
եմ որ ահամայ զիս պիտի սպաննեն :

« Բարի Տրագօն, որ այնպէս անմեղութեամբ մահ-  
ուան զոհ եղաւ, քու խիտ հաւատարիմ ծառաներէդ  
մէկն էր : Անոր այրի կնոջ հող տար, և անոր որբերուն  
հայրն եղիր . այս ընելով՝ նախրական պարտք մը կատա-  
րած պիտի ըլլաս, քանզի զքեզ սիրելուն համար զոհ ե-  
ղաւ : Չըլլայ որ մոռնաս անոր անմեղութիւնն ալ հրա-  
տարակելու :

« Ամանակս բերող աղնիւ աղջիկն ալ վարձատրէ,  
քանզի երբ բոլոր աշխարհ զիս անօգնական թողուցին և  
Աղոյի առջև կը դողային, ան միայն ինձ հաւատարիմ  
մնաց :

« Հպատակացդ արդարաւէր և բարի եղիր, չըլլայ որ  
ծանր հարկեր դնես . բոլոր ձեզ թափեա արդարակորով



դատարարներ, արժանաւոր եկեղեցականներ և յաջող բր-  
ժիշկներ ընտրել անոնց համար: Տրտունջ մը կամ հար-  
կաւոր դործ մը ունեցողներուն աղերասանքը մտիկ ըրէ, ու  
ամեն բանէն աւելի աղքատաց բարիք ըրէ: Ափսոս, եւ  
քու հպատակացդ մայրն ըլլալու տոշեր էի, իմ տեղը  
դուն անոնց բարիք ըրէ: Հիսնա անոնց համար կատարե-  
լու կրկին պարտաւորութիւն ունիա:

« Աւերջապէս իմ վերջին ողջոյնա կու տամ քեզի-  
չըլլայ որ ցաւիս, սիրելի ամուսին, եւ ուրախ եմ որ պի-  
տի մեռնիմ, քանզի այս կեանքը կազմ և դառնութեամբ  
ու ցաւեղով լեցուն է, բայց եւ որչափ և մեղաւոր ըլ-  
լամ՝ անմեղ պիտի մեռնիմ, բողբոջիւն անմեղ Արդի  
ամբաստանութիւններէն, ու անշուշտ Տէր իմ հողուցս  
կը դժայ: Նարձեալ կըսեմ, մնաս բարեաւ, հողուցս  
խաղաղութեանը համար աղօթք ըրէ. հաշտուած և սի-  
րալից սրտով կը բաժնուիմ քեզմէ և եմ մինչև զե-  
րեզմանը

« Բու խանդակաթ և հաւատարիմ կինդ

«ԺԵՆԸՎԻԷՎ»

Այս նամակը գրած ատենը Դէնրվիէվ հեղեղի պէս  
տարտասուք կը թափէր, այնպէս որ մեղանին հետ խառ-  
նուելով՝ նամակը դրեթէ անքնթեռնելի եղեր էր: Աւեր-  
ջապէս լրացրնելով զայն Արթային յանձնեց, ու ըսաւ.  
« Այս նամակը զգուշութեամբ պահէ, ամենեւին մտր-  
դու մի ցուցրներ, էրիկս պատերազմէն դառնալուն պէս՝  
ձեռքովդ անոր յանձնէ »:



Այս բանով խնդրելով իւր թանկագին մարդարտեայ մանեակը հանեց, նորապի աղջկան առաւ ու բաւ. « Ինձ բրած ծառայութեանդ փոխարէն ընդունէ, սիրելի որդեակ, այս մանեակը որ հարսանեկան զարդս էր, և ամուսնոյս ինձ նուիրած օրէն ՚ի վեր գրեթէ երբէք վրայէս չհանեցի: Քու օժտիդ համար պահէ զայս, քանզի քանի մը հազար ոսկոյ արժողութիւն ունի: Քայց կը խրատեմ քեզ, չըլլայ որ վստահութիւնդ աշխարհային հարստութեանց վրայ դնես: Յիշէ միշտ որ այս մանեակը քու իշխանութեանդ գլուխը զարդարեց, որուն գլուխը պիտի կտրեն քանի մը վայրկեանէն:

« Իմ օրինակէս սորվէ որ բնաւ մէկու մը սիրոյն կամ անձնութեանը վրայ չվստահիս: Ափսոս, երբէք մտաքէս չէր անցներ որ այս մանեակը ինձ պարզեողը օր մը գլուխս կտրելու հրաման ընէ, ուրեմն վստահութիւնդ միայն Աստուծոյ վրայ դիր: Հիմա շուտով գնա ասկէ, և միշտ բարի և խոհեմ մնացիր:

« Պէտք է որ սիրտս հիմա առ Աստուած դարձնեմ և պատրաստուիմ յաւիտենականութեան մէջ մտնելու. երթա՛ս բարեաւ »:





## ՔԼՈՐԻ Է՝

## Երկ- քահիճները :

Զապիւ թէ նորասի աղջիկը անկէ հեռացեր էր, երբ բանտին երկաթեայ դուռը մեծ դղողիւնով բացուեցաւ. երկու հողի սպառապուռ զինեալ ներս մտան՝ մէկը վառուած ջահ մը բռնած և միւսը՝ ահաղին սուր մը: Այս երկու մարդերը ջահին լուսովը տեսան որ Դէնրվիէվ իւր որդին զրկած աղօթք կ'ընէր:

“Ո՞տք ելիր, ըսաւ սուրը բռնողը խիստ ձայնով մը, և որդւոյդ հետ հետերնիս եկու:

— Ո՛հ, աէր Աստուած, սրուաց Դէնրվիէվ, դուրացուր զիս, քու ձեռքդ եմ”, ու ոտք ելաւ, և դողդոջուն քայլերով անոնց հնազանդեցաւ:

Չահակիրը անոր առջեէն կը քայլէր և սուսերակիրը ետեէն կու դար, ու հետերնին մեծ շուն մը կար: Այն ջապէս ստորերկրեայ երկար բակի մը մէջէն անցնելով՝ երկաթեայ մեծ դրան առջև հասան: Այն ատեն ջահակիրը ջահը մարեց և այն դուռը բանալով՝ դուրս ելան ու մեծ անտառ մը մտան: Այնտեղ գեղեցիկ գիշեր մ'էր, աստղները երկնից երեսը կը փայլէին, լուսինը մտնելու մօտ էր, ու զով հով մը ծառերուն տերեւները կը շարժէր:

Երկու մարդիկը ամենեին խօսք մը չըլին մինչև որ Դէնրվիէվը անտառին հեռաւորագոյն կողմը ստարին և



ախուր եղևիններով, կնճխներով և կաղամախներով շար-  
ջապատած ամայի տեղ մը հասան :

Հոն գահճիճներէն մէկը կենարով, «Օնկան վրայ ե-  
կու, տիկին», ըսաւ անոր. Ժէնր վիել Տնազանդեցաւ :  
«Օ, աւակդ ինձ տուր, ու դուն Հինց, անոր աչքերը կա-  
պէ», ըսաւ՝ մանկան քնքուշ թևերէն բռնելով ու սու-  
րը վերցընելով. բայց Ժէնր վիել զան իւր գրկացը մէջ  
սեղմելով, աչքերը դէպ ՚ի երկինք վերցուց, և ուժով  
պռուաց. «Ո՛վ Տէր, թող մեռնիմ ես, բայց այս ման-  
կան դժա :

— Տնազանդէ, կրկնեց անգութ մարդը, և զաւակդ  
ինձ յանձնէ :

Բայց Ժէնր վիել ըտրով և հառաչելով շարունակեց.  
«Ո՛վ բարի մարդիկ, ինչ սրտով այս փոքր և անմեղ  
մանուկը պիտի սպաննէք. խեղճը ինչ յանցանքի տէր է,  
որաւ մնաա մը հասալցած է : Օ, ոհեցէք զիս, կամաւ կը  
մեռնիմ ես, ահա զլուխս կ'երկնցընեմ, զարկէք. բայց  
կ'աղաչեմ՝ այս զաւակս աղաատ թողուցէք, ու զան իմ  
ճնողացս տարէք, և եթէ այս բանս ձեզ արգիլուած է,  
կ'աղաչեմ՝ իմ կեանքս ալ ազատեցէք, և այն չէ թէ ինձ,  
այլ այս թշուառ մանկան համար : Աթէ կուզէք՝ կը  
խոսատանա՞մ ձեզ որ մինչև ՚ի մահ այս անաւտէն դուրս  
չեմ ելնելու ու մարդոց մէջ չեմ մտնելու : Մտածեցէք որ  
ես ձեր իշխանաճին եմ, ու ձեր ոտքը խոնարհեալ կը  
պաղատիմ. եթէ երբէք ձեզ չարութիւն մը ըրի, սպան-  
նեցէք զիս, եթէ յանցանք մը գործեցի, զոհեցէք զիս,  
բայց դուք զիտէք որ ես անմեղ եմ. ո՛հ, որ պիտի դայ



որ պիտի զղջաք այս օրուան թափած արտասու այս չգթալ-  
 նուղ համար : Գթափրտ եղիք ինձ, Մատուած ալ ձեզ  
 կը գթայ : Արկրաւոր վարձքով մը խաբուելով՝ այնպիսի  
 մեղքի մէջ մի մտնէք, որուն պատիժը յաւիտեանս  
 պիտի ըլլայ : Մարդիկներէն աւելի Մատուծմէ վախցէք .  
 կ'ուզէք որ ձեզի համար ըսեն թէ Մատուծմէ աւելի Ար-  
 լօն կը յարգէք : Անմեղ արիւնը մի թափէք . քանզի  
 անմեղ արիւնը մինչև երկինք կը բարձրանայ ու Մատու-  
 ծոյ վրէժխնդրութիւնը կը բողոքէ, և մարդասպանը բնաւ  
 հանգստութիւն չունենար :

— Ինձ արուած հրամանները 'ի դործ կը դնեմ, տի-  
 կին, պատասխանեց սուրբ բռնող անձը . բայց այս հրա-  
 մանները թէ արդարացի ըլլան և թէ ոչ, ինձ չեն վե-  
 րաբերիր, այլ Արլօն ու կոմսը համար պիտի տան Մա-  
 տուծոյ անոնց համար” :

Սակայն Ժէնրվիէվ անդադար կ'աղաչէր և կը պա-  
 դատէր որ զինքը ազատ թողուն . “ Աերցուցէք անդամ  
 մը աչքերնիդ դէպ 'ի երկինք, ըսաւ անոնց, լուսինը կար-  
 ծէք թէ ձեր դործելու ծանր ոճիրը շտեմներու համար  
 եղևիններուն ետին կը պահուի . տեսէք ինչպէս կարմրեր է,  
 կարծէք թէ արիւնով թաթաւեր են զան . ամեն ան-  
 դամ որ անոր այսպէս վախճանիլը տեսնէք, ձեզ այն-  
 պէս պիտի երեւի որ անմեղի մը արիւնը թափելնուղ հա-  
 մար զձեզ կը յանդիմանէ : Այո՛, լուսինը որչափ և  
 երկնից վրայ բարձրացած և բոլոր աշխարհս լուսաւորէ,  
 ձեզի արեամբ ներկուած պիտի երեւի : Մտիկ ըրէք,  
 ինչպէս հողմը կ'ըսկսի շնչել, ինչպէս ծառերուն ձայ-



որ կը հանէ, ու տերեւները կը դողացնէ. ահա բոլոր բը-  
նութիւնը անմեղի մը ահուելի սպանութեան վրայ կը սու-  
կայ. այսուհետեւ տերեւներուն իւրաքանչիւր շնչինը զձեզ  
պիտի սարսափեցնէ: Արկնից երեսը եղած անհամար աս-  
տղները կը տեսնէք, ասոնք նոյնչափ աչքեր են, որոնց-  
մով Աստուած զձեզ կը տեսնէ: Արկնային այս կամարին  
ստըւ պիտի համարձակիք այսպիսի ծանր ոճի մը գոր-  
ծելու. մտածեցէք անդամ մը որ աստղներէն վեր վրէժ-  
խնդիր Աստուած մը կայ, որ օր մը իւր գահին պատուան-  
դանին ներքեւ զձեզ դատաստանի պիտի կանչէ:

“Ո՛վ Աստուած, որբոց և այրեաց հայրն ու պաշտ-  
պանը, հաճէ այս մարդոց սիրտը կակրցրնել, որոնք ան-  
շուշտ կին ու զաւակ ունին. բարեհաճէ անոնց թեր բը-  
նելու, հրամայէ որ թշուառ մօր մը և այս ճշող թըշ-  
ուառ մանկան խնայեն. մի թողուր որ իրենց խղճմտան-  
քը կրկին մարդասպանութեամբ բեռնաւորեն”:

Այս մարդոց մէկը, որ մինչև այն միջոցին խորունկ  
լուծիւն պահեր էր, իւր աչքէն վազած կաթիլ մը ար-  
տասուքը սրբելով՝ ըսաւ իւր ընկերին. “Նիկեր, ալ չեմ  
կրնար համբերել, սիրտս կտոր կտոր կը լայ, թողունք զան  
որ ապրի: Թէ որ դուն արիւն հոսելու փափաղ ունիս,  
դնա՛ սուրդ Արդյին կոկորդը մխէ. քանզի ան է յանցա-  
ւորը. այս աիկինը ամենուն աղէկութիւն ըրած է, յիշէ  
վերջին հիւանդութեանդ մէջ քեզ ըրած բարիքը:

— Ստիպուած ենք ահամայ հնազանդելու, պատաս-  
խանաց միւսը. եթէ անոր խնայենք՝ մեր կեանքը պիտի  
կորսնցրնենք, ու Արծն զան ալ դտնել տարով, նորէն



սպաննել պիտի տայ. գիտես աղէկ որ զան զլխատած ըլ-  
լայնիս ցուցրնելու համար հրամայեց մեզ որ անոր երկու  
աչքերը հանենք ու իրեն տանինք :

— Այս բանս արդեւք չկրնար ըլլալ որ զան շապան-  
նենք, աս ալ մտածելու բան է, կրկնեց շինց. մտիկ  
ըրէ ինչ ընել պէտք է՝ որպէս զի չմասնուինք. երդում  
ընել կու տանք տիկնոջ որ այս անտառէն դուրս չելնէ,  
և քու շանդ երկու աչքերը հանելով Աղօյին կը տա-  
նինք, որ զանոնք մօտէն քննել չուզելով՝ մեր խաբէու-  
թիւնը պիտի չհասկրնայ, միայն դուն քու շունդ պիտի  
կորսնցրնես. բայց մտածէ, բարեկամ, թշուառ մօր մը  
և անմեղ մանկան մը կեանքը այս անասնոյն կեանքէն շատ  
աւելի թանկագին չե՞ն քեզի համար: Բարեկամ Քո-  
րէնց. անդու՞թ մի ըլլար :

— Այս երբէք անդու՞թ չեմ, սրատասխանեց Քո-  
րէնց, վկայ է Աստուած. բայց Աղօ պիտի կատղի երբ . . .

— Աղօ կ'ըսես և ուրիշ բան չես մտածեր. յայտ-  
նի բան է որ անմեղները ազատելը բարեգործութիւն մ'է,  
և բարի գործ մը ընելու համար պէտք չէ մարդ վախնայ,  
այլ պէտք է վտանգը աչք առնէ: Այժմէ գլուխնիս առ-  
ժամանակեայ գծբաղդութիւն մ'ալ դայ, պէտք չէ որ  
հոգերնիս ընենք, քանզի կանուխ կամ ուշ ըրածնուս բա-  
րի պատուհները պիտի տեսնենք :

— «Շատ աղէկ, թող ըսածդ ըլլայ», ըսաւ վերջա-  
պէս միւսը :

— Ասոր վրայ Ժէնրվիէվին դարձաւ ու մեծ երդում  
մը ընել տալէն ետև, որ երբէք այն անասպատէն դուրս



չելնէ, իւր շինց ընկերն ալ նոյնպէս իւր սուրին վրայ  
երդմնեցուց որ մարդու բան չըսէ, և երբէք չերթայ զան  
տեսնելու :

— Սակայն երկու դահիճները աւելի ապահով ըլլա-  
լու համար՝ լեռներու և հովիտներու մէջ անցընելով՝ քա-  
նի մը մղոն հեռի անտառին խիտ ամայի կողմը տարին  
զան, ուր ամենեւին մարդու ոտք կոխած չէր : շոն բարձր  
եղևնի ծառի մը տակ Եկնրվիկով ոգեսպառ և զրեթէ  
նուազած գետինը ինկաւ, երկու դահիճները զան հոն  
թողուցին և աներեւոյթ եղան :

Արբ բերդը հասան, Աղօն առանձին իւր սենեակը  
քաշուած դտան՝ գլուխը երկու ձեռաց մէջ պահած ու  
յուսահատ կերպարանքով : « Ահա Եկնրվիկ կոմսու-  
հայն աչքերը բերինք », ըսաւ Քորէնց դրան սեամին վը-  
րայ կենայով և իւր ձեռաց մէջ շան աչքերը ցուցընելով :

— Աչքերս չտեսնան զանոնք, պոռաց Աղօ սոսկալի  
ձայնով մը, ու յանկարծ ոտք ելնելով ձեռքը դաստա-  
պանին վրայ դրաւ. « ո՞վ որ այսուհետև այն թշուառա-  
կանին անունը տայ ինձ, այս սուրը անոր սիրտը պիտի  
մխեմ : Շնորհով դուրս ելէք, ու մէկ մ'ալ զձեզ չտես-  
նեմ . . . » :

« Օարմանալի բան, կ'ըսէր ինքնիրեն, տակաւին ե-  
րէկ վրէժխնդրութեան խորհուրդը ինձ քաղցր կերեւէր,  
ու հիմա այնպէս սոսկալի և այնպէս անտանելի կ'ըլլայ,  
որ լաւ ևս ունէի կենացս մէկ մասը կորսնցընելի քան թէ  
այսպէս բան մը պատահէր : Ափսոս, իւր կրկն հնազան-  
դողը միշտ դժբաղդ է » :



## ԳԼՈՐԲ Զ.

Եղևիլը Ժէնըվէզէն օգնութեան կը հասնի :

Ժէնըվէզի կրկար ատեն նուազեալ մնաց, վերջա-  
ջապէս սթափելով ինքզինքը առանձին իւր որդւոյն հետ  
ամայի անտառին մէջ դտառ : Առսինը արդէն շատոնց  
վախճաններ էր, երկնից երեսը ամպերով ծածկուելով  
խիստ մթնցեր էր, սաստիկ հողմը ծառերուն մէջէն կը  
մռնէր, Ժէնըվէզի դիտուն վրայ բու մը տխուր ձայներ  
կը հանէր, և իրմէ քիչ մը հեռու՝ դայլ մը կ'ուռնար . Ժէ-  
նըվէզի ասոնք տեսնելով ահ ու դողի մէջ ինկառ :

“Ո՛վ Տէր, պողաց, սիրտս սարսափով պատած  
է . բայց քու ներկայութիւնդ զիս կը հանդարտեցնէ . քու  
առջևդ մթութիւնը կը փարատի, դուն զիս կը տեսնես և  
երբէք երեսի վրայ չես թողուր անոնք որ քեզ կը վրա-  
տահին : Ղահիճներուն ձեռքէն զիս և զաւակս ազա-  
տեցիր, օրհնեալ ըլլայ Նախախնամութիւնդ, անշուշտ  
հիմա ալ պիտի չթողուս որ վայրենի դազաններուն կե-  
րակուր ըլլանք : Միայն քեզ վստահելով աներկիւղ պի-  
տի ապրիմ” :

Այսպէս ծառին տակը նստած՝ իւր զաւակը ծնկաց  
վրայ պառկեցուցեր էր . իւր ձեռքերը միացուցած ու  
աչքերը դէպ ՚ի երկինք վերցուցած կ'ըսպասէր որ առա-  
ւօտ ըլլայ : Բայց, սփտոս, առտուան լոյսը իրեն նոր ցա-



ևեր պատճառեց. աշնան տխուր և ամպամած առաւու-  
մէր, բոլոր շրջակայ տեղերը վայրենի և դժնդակ երե-  
ւոյթ մը ունէին: Ամեն կողմ՝ չոր ժայռերէ, տխուր ե-  
ղեւիններէ և փշալից մացառներէ ուրիշ բան չէր տես-  
նուէր. առաւուան օդը շատ ազդու ցուրտ էր, և շատ  
չանցաւ սկսաւ ձիւնախառն սաստիկ անձրև դալ:

Ժէնըվէզի ցուրտէն կը սարսուէր, ու իւր սիրասուն  
զաւակը օդին խոնաւութենէն, ցուրտէն և անօթութենէն  
տանջուելով՝ սկսաւ լալ և ճչել: Ժէնըվէզի բոլոր շր-  
ջակայ տեղերը պարտեցաւ որ ապաստանուելու համար  
խոռոչ մը կամ ժայռի ձեղք մը, և ապրելու համար  
վայրի պտուղներ դտնէ. . . : Քայց այն կիսամերկ մաձառ-  
ներուն մէջ մրդիկ մը անդամ չդտաւ, այն ատեն իւր  
քնքուշ ձեռքերովը սկսաւ խիտ և կէս սառած երկիրը  
փորել, ձիւնը իւր մատներէն վազած արիւնէն ներկուե-  
ցաւ. վերջապէս տեսակ մը վայրի արմատներ դտաւ, գո-  
րոնք ահռաներովը կակղցուց և իւր զաւակին տուաւ:

Անկէ ետե՛ թէ և յետին սաստիճան ոյժը կտրեր էր,  
բայց իւր ճամբան շարունակեց անձրևին և ձիւնին մէջ՝  
առանց զխոնարու թէ ուր կ'երթայ. վերջապէս լեռի մը  
վրայէն՝ չոր ժայռերու քովը կանաչազարդ ձորակ մը տես-  
աւ. մեծ դժուարութեամբ լեռէն իջաւ, ու եղեւիններով  
պատապարուած ժայռի մը մէջ չափաւոր բացուածք մը  
դտաւ, որու մէջ մտնելու համարձակեցաւ և երկու կամ  
երեք հոգի ապաստանուելու չափ մեծութեամբ քարայր  
մը տեսաւ: Այս քարայրին մօտ բիւրեղի նման յստակ  
աղբիւրի մը խոխոչիւնը լսեց, որ ժայռին կողէն կը բրդ-



խէր : Ժայռին երկայնութեամբը դդու մի նսնն տունկ մը  
կախուած էր . բայց տերեւները չորցեր էին , և գրեթէ  
փտած պտուղները դեանի վրայ պիտուած էին , բայց չէին  
ուտուեր : Ժէնը վիէյվ հովէն և անձրեւէն քարայրին մէջ  
ապաստանուեցաւ , բայց չափազանց կը պաղէր , և անօ-  
թութիւնը խիստ կը տանջէր զինքը . իւր դաւակն ալ  
նոյնպէս անօթութենէն կը ծչէր և կու լար : Աերջապէս  
յուսահատեալ ծնկան վրայ եկաւ , իւր որդին դեանի  
վրայ դրաւ , ու իւր նայուածքը դէպ ՚ի երկինք վերցրնե-  
լով և ձեռքերը միացրնելով աղօթք ըրաւ . « Ո՛վ Աստ-  
ուած , բարի և գթած Տէր , հաճէ քու նայուածքդ  
արտասուող մօր մը և իւր ողորմելի որդւոյն վրայ դար-  
ձրնելու : Դուն որ մերկ և դժնդակ եղանակին մէջ իսկ  
այս ժայռին բոլորտիքը թռչող ազուաւները կը կերակրես ,  
և դեռինը սողացող մանր որդերուն անդամ ձեռուան  
խիստ եղանակին մէջ իրենց կերակուրը կը մատակարարես ,  
կարող ես այս չոր անապատին մէջ իմ և որդւոյս կեանքը  
պահպանելու . քարերը անդամ քու ձայնիդ հնազան-  
դելով մեզ հաց պիտի մատակարարեն : Ա՛յն , երկնաւոր  
ձայր , դուն պիտի չթողուս որ մենք կորսուինք , այլ  
ինչպէս որ մեզ ապաստան մը շնորհեցիր , անշուշտ մեր  
կերակուրն ալ պիտի հոգաս » :

Յանկարծ ամպերը ցրուեցան , արեւը երեւելով սկաա-  
քաղցր տաքութիւն մը դգացրնել քարայրին մէջ , և յան-  
կարծ խոտերու խոշիւն մը լսուելով քարայրին դրան ստջեր  
եզնիկ մը երեւցաւ : Ա՛յս կենդանին մարդոցմէ ամենեւին  
հալածուած չըլլալով կոմսուհիէն շխտեցաւ , այլ քա-

0151



բայրին մէջ մտաւ և յէնդիկէ՛վի առջև կեցաւ . քանզի այս քարայրը իւր բնակարանն էր : Աղորմելի կինը նախ վախցաւ , բայց քիչ քիչ համարձակութիւն առնելով սկսաւ շոյել զան . եղնիկն ալ յայտնի կը ցուցնէր որ այս բարեկամութեան նշաններուն անզգայ չէր . այն ատեն յէնդիկէ՛վ մտածեց որ անասնոյն կաթովը զինքը և զաւակը սնուցանէ . “ Ա՛վ Տէր , հարկաւորութիւնը ինչ բանի չստիպեր թշուառ մայր մը ” , ըսաւ իւր զաւակին բերանը եղնիկին ստինքին մօտեցրնելով : Այս եղնիկը , որուն ձողը դայէ՛ մը յափշտակուեր էր ու իւր կաթին առատութենէն անհանգիստ կը լար , սուանց դժուարութիւն ցուցնելու՝ իւր ստինքը անոր ներկայացուց : Մանուկը յաղելով՝ քնացաւ , և յէնդիկէ՛վ զան իւր զգեստուց մէկին մէջ ամփոփեց ու քարայրին մէջ յարմար տեղ մը դրաւ որ քնանայ :

Ենդիկէ՛վ իւր զաւակին պէտքը հողալէն ետև՝ դուրս ելաւ , և ժայռերուն զառ ՚ի վայրը բուսած վայրի դդումներէն քանի մը հաս ժողվելով՝ անոնց մէջը փորեց և աղբիւրին ջրովը մաքուր լուալէն ետև՝ կանաչ խոտեր ժողվեց , քարայրը դարձաւ ու իւր ձեռքովը եղնիկին կերցուց . այս անասունը իւր երախտազիտութիւնը յայտնելու համար՝ զանոնք լնցրնելէն ետև իւր բարերարին ձեռքը լեզեց : Այն ատեն յէնդիկէ՛վ յաջողեցաւ առանց դժուարութեան անոր կաթը փորուած դդումներուն մէջ կթելու . և ճնկան վրայ դալով՝ կաթով լեցուն դդմամանը երկու ձեռքը դէպ ՚ի երկինք վերցուց և սկսաւ աղօթք բնել . “ Ա՛վ Տէր , այս թանկագին սարգիսիդ հա-



մար ընդունէ երախտագիտութեանս արատաւքը . այն ,  
այս կաթը քու բարերարութեանդ մէկ շնորհքն է . այս  
երաշտ ապառաժներուն մէջ տեղը այս աղբիւրը դուն  
բղխեցուցիր որ ես իմ ծարաւութիւնս անցրնեմ . դուն  
այնպէս տնօրինեցիր որ թռչնիկ մը այս անբեր անապա-  
տին մէջ դդումի սերմ մը ձգէ , որպէս զի քու պարգե-  
ներդ ամփոփելու համար ամաններ շինեմ . դուն իմ քայ-  
լերս այս մարդասէր անասունին բնակարանը առաջնոր-  
դեցիր , ու հիմա՝ ոչ ես և ոչ զաւակս անօթութենէ,  
մեռնելու երկիւղ չունինք . վստահութիւնս միայն քու  
վրադ դնելով՝ հանդարտութեամբ այս դառն ձմեռուան  
վերջը պիտի սպասեմ” :

Այս խօսքերէն վերջը խմեց զայն . “ Ա՛հ , ի՛նչ քաղցր  
լմայելիք է այս , ըսաւ , բոլոր կենացս մէջ ասկէ բալե-  
համ բան մը խմած չէի : Ա՛վ Աստուած , երբ ծնողացս  
փառաւոր սեղանը կը նստէի , ո՞րչափ քիչ դիտէի քու  
պարգեւացդ յարդը . անոնց համար բաւական շնորհակալ  
չըլլայուս և աղքատաց շատ բարիք չընելուս համար նե-  
րումն կը խնդրեմ . Ա՛հ , չէի դիտեր այն ատենը թէ անօ-  
թութիւնը դժգնակ բան մ’է , ո՞չափ մարդոց չէի կրնար  
աւելի համեղ կերակուրների հոգալ առանց մեծ կորուստ  
մը ընելու” :

Այս կաթով աղէկ մը կշտանալէն և բոլոր սրտէ Աս-  
տուծոյ շնորհակալ ըլլալէն ետե՛ ժայռերուն և ծառոց  
հին կոճղներուն վրայէն փափուկ և չոր մամուռ ժողվեց ,  
քանի մը անգամ իւր ղենջակը լեցուց , ու քարայրին ներ-  
սի կողմը իրեն և իւր որդւոյն համար անկողին մը սրատ-



բաստեղէն ետե՛ք բնակարանին դուռը պատող եղեւիննե-  
լու ամուր և խիտ ոստերը աւելի ցածցուց, որպէս զե-  
անձրեւէն և հովէն աւելի պատասպարուի :

Հինօրեայ եղեւինի մը վարի կողմը Ճէնրվելիվ ողորկ  
և չոր փոքր ճիւղ մը տեսնելով՝ կտրեց զայն, անհաւա-  
սար երկայնութեամբ երկու կտոր բռաւ, և ուրիշ նուրբ  
և կակուղ ճիւղով մը զանոնք իրարու վրայ հաստատելով՝  
խաչ մը շինեց, բնակարանին ամենէն յարմար կողմը արն-  
կեց, և մամուռներուն վրայ նստաւ :

Վանաչ վարադոյրի պէս դրան առջեւը իջած ճիւղե-  
լոն մէջէն ներս մթնշաղ լոյս մը կը թափանցէր, ու  
քարայրին փոքր տարածութիւնը եղնիկին շնչառութենէն  
կը տաքնար : Այն ատեն Ճէնրվելիվ բուխ սրտով Աս-  
տուծոյ շնորհակալ եղաւ որ զինքը այն ստորերկրեայ մութ  
բանտին մէջէն ազատեց ու այնպէս ապաստան մը տուաւ,  
ուր Աղօյի հալածանքներէն վախ չունէր :

Այսու ամենայնիւ՝ կը մտածէր որ շատ նեղութիւն-  
ներ պիտի կրէր տակաւին, բայց իւր յոյսը չկտրելով՝ ան-  
միջապէս իւր նայուածքը խաչին վրայ դարձուց և ա-  
ղօթք բռաւ :

“Ո՛վ Տէր իմ Փրկիչ, որ իմ սիրոյս համար խաչին  
վրայ մեռար, օշնութիւնդ վրայէս պակաս մի բներ, ևս  
միշտ խաչդ աչացս առջեւը պիտի ունենամ, որպէս զե-  
միշտ քու սէրդ յիշեցրնէ ինձ. քու օրինակիդ հետեւե-  
լով համբերութեամբ պիտի տանիմ և քեզի հետ պիտի  
կրկնեմ միշտ. Հայր իմ, թող քու կամքդ կատարուի,  
և ոչ իմս” :



Այս աղօթքէն ետև իւր զաւակը դրկացը մէջ սեղ-  
մած՝ քաղցր քունի մէջ ընկղմեցաւ, և հաւատարիմ  
եղնիկը որ երբէք իւր քովէն չէր զատուեր, իւր ոտից  
քովը պառկեցաւ:



### Վ Ա Ո Ր Բ Բ

Անտառին ձէլ ժեղքէն ըսած խորհրդածառնէն:

Ձէնը վիել վ այս անտառին մէջ ճգնաւորի պէս կեանք  
մը կ'անցընէր. ձմեռը անցաւ, ամառը եկաւ, որուն յա-  
ջորդեց նաև ձմեռը ու ամենեւին տարօրինակ բան մը  
չպատահեցաւ:

Ամառը խիստ տաք եղած ժամանակ՝ երբ լռիկ ժայ-  
ռերուն և եղեւիններուն մէջ նստած՝ աղաւաններուն և  
փայտփոր կանաչ թռչուններուն կտուցի ձայնէն ուրիշ  
բան չէր լսեր. աշնան տխուր դիշերները՝ երբ ցուրտ լու-  
սինը այս ամայի անտառը կը լուսաւորէր ու ձմեռ ժա-  
մանակ քարայրին մէջ փակուած՝ ձեան անհուն տարա-



ճութեան վրայ երբ իւր նայուածքը կը շրջէր և վայրի գաղաններուն հետքերէն ուրիշ բան չէր տեսներ, այն ատեն՝ իւր ծնողքը, ամուսինը, բարեկամները և կամ գոնէ մարդկային դէմք մը տեսնելու փափագ մը կը զգար. « Ա՛հ, ինչպէս երջանիկ են, կ'ըսէր, անոնք որ ընկերութեան մէջ են և կրնան իրարու հետ խօսիլ ու իրենց ցաւը և ուրախութիւնը իրարու հաղորդել. որչափ անմիտ են անոնք որ այս քաղցր երջանկութեան յարդը չեն դիտեր, և շատ անգամ իրարու կեանքը դառնութեամբ կը լեցընեն »:

Իսկ այց անմիջապէս քաջալերուելով ինքնիրեն կը պատասխանէր. « Ա՛յլ Աստուած, քեզի հետ հաղորդակցելու երջանկութիւնը մարդոց հետ հաղորդակցելու երջանկութենէն շատ աւելի անասման քաղցր է: Թէև մենք բնակեալ տեղերէ հեռացած ըլլանք, թէև անբեր անապատի և դիշերուան մէջ ըլլանք, բայց դուն մեր քովն ես. ինչ ուրախութիւն է մեզ որ ամեն ժամ քեզի հետ խօսելու երջանկութիւնը ունինք »: Այսպէս միշտ Աստուծոյ հետ հաղորդակցելու և անոր հետ խօսելու սովորութիւն ընելով՝ օրուան ժամերը իրեն համար վայրկենի պէս կ'անցնէին:

Թէև արմատներ և վայրի պտուղներ փնտռելու և քաղելու համար շատ ժամանակ կ'անցընէր և մեծ ներութիւն կը կրէր, սակայն շատ անգամ անգործ կը նրստէր, ու չէր դիտեր թէ ինչպէս իւր ժամանակը անցընէ, այն ատեն կ'ըսէր ինքնիրեն. « Ինչո՞ւ համար ես ասեղ և դերձան կամ բուրդ չունենայի, որ իմ այսպէս երկար



և տաղտկալի անդործ ժամերս օգտակար աշխատութեամբ մը կարճեցրնէի, ու ինձ և զուսկիս զգեստներ շինէի. շատ մարդիկ աշխատութեան համար կը զանգատին, բայց կեանքը առանց աշխատութեան տխուր և տաղտկալի կը լայ, ամենէն ծանր աշխատութիւնը դատարկութեան հետ բաղդատելով քաղցր է”:

Շատ անգամ կը ցուէր որ կարդալու համար գոնէ գիրք մը շունէր. “Գիրք կարդալու օգտակար և զուարճալի է, կըսէր. սակայն, ո՞վ Աստուած, աշխարհիս ամեն կողմը տարածուած քու գործերդ խիստ կըթական գրքեր են”: Այն ատեն սկսաւ առաջուանէ, աւելի մեծ ուշադրութեամբ բնութեան հրաշալիքները դնել. ամենաչնչին ծաղիկը, ամենափոքր միջատը անգամ խիստ մօտէն քննելով Աստուածային գիտութեան և մարդասիրութեան նշանները կը տեսնէր:

Գարնան մէջ երբ արեւուն ճառագայթները քարայրին մէջ կը թափանցէին, ուրախութեամբ մը կըսէր. “Ո՞վ բարերար Աստուած, ստուգիւ արեւը քու հայրական մարդասիրութեանդ ամենազեղեցիկ պատկերն է. քանզի Յիսուս քու որդիդ մեզ ըսաւ. ‘Արկնային Հայրը՝ արեւը բարիներուն վրայ ալ կը ծագէ, շարերուն վրայ ալ՝ ուրեմն ես ալ պէտք եմ իմ թշնամեացս անգամ բարիք ընել եթէ կարենամ”:

Իւր սննդեան համար վախցած առեւնը՝ թռչնոց դայլայիկը լսելով կըսէր. “Դուք զուարթ էք, և կերգէք միշտ, ո՞վ սիրուն փոքրիկ արարածներ, պէտք չէ՞ որ ես ալ ձեզի պէս ուրախանայի և երգէի. բայց Յիսուս



բաւ մեղ. ' Տեսէք երկնից թռչունները, ոչ կը սերմանան, ոչ կը հնձնեն և ոչ կ'ամբարեն, և սակայն երկնային Հայրը զանոնք կը սնուցանէ: Այլ ապաքէն զուք անոնցմէ աւելի ընտրելի էք': Այո, Աստուած իմ, դուն զիս այս ամեն թռչուններէն շատ աւելի կը սիրես, ու ես անոնցմէ աւելի գոհ ըլլալ պէտք էի, և ամենեւին հոգ ընել պէտք չէի այս ամայի անապատին մէջ իսկ, ուր թէև մարդկային ձեռք մը ինձի համար չէ սերմանած և չէ հնձած":

Անտառին մէջ տեղ տեղ ծաղիկներ տեսնելով կ'ըսէր. "Դուք ալ, գեղեցիկ ծաղիկներ, Աստուծոյ խնամատարութիւնը կը հաստատէք: Յիսուս ձեզի պէս պարզ ծաղիկներ ցուցնելով, բաւ. ' Տեսէք դաշտաց ծաղիկները, ոչ կ'աշխատին և ոչ կը հիւսնեն, սակայն ես կ'ըսեմ ձեզ թէ Մոդոնն իսկ իւր ամեն շքեղութեամբը չկրցաւ երբէք ամենաչնչին ծաղիկի մը պէս հաղուիլ: Արեմն եթէ Աստուած դաշտերուն խոտը այսպէս կը հաղցրնէ, ոչ ապաքէն զձեզ աւելի շքեղ պիտի հաղցրնէ, ով անհաւատ մարդիկ': Աւստի չեմ ուզեր ես ալ անհաւատ կամ կարճամիտ ըլլալ, թէև այս տեղ չեմ կրնար ոչ մանել, և ոչ կարել, սակայն ինքզինքս պիտի շտանջեմ ըսելով. Արդեօք ի՞նչ պիտի ուտեմ, ի՞նչ պիտի խմեմ, և ի՞նչ պիտի հագնեմ, այլ Աստուծոյ 'Աստիանսամութիւնը հոգացած է ինձ պէտք եղածը":

Ամառը սաստիկ տաք եղած ժամանակ՝ երբ իւր ծարաւութիւնը անցրնելու համար աղբիւրին քովը կ'երթար, "Այլ Տէր, կ'ըսէր, այս աղբիւրին իմ ցամքած շրթունքս



զովայուցածին պէս՝ քու Աստուածային խօսքերդ ալ  
 հոգիս կը զովացընեն, ինչպէս որ դուն ըւիր. «Ալ որ  
 ծարաւի է՝ թող ինձ դայ և ես անոր ծարաւութիւնը  
 կ'անցընեմ ու իմ անոր տուած ջուրս կենդանի ջուրի  
 աղբիւր մը պիտի ըլլայ յաւիտեանական կենաց համար» :  
 Այո՛, այս հոգեւոր աղբիւրը, որ է ճշմարիտ հաւատքը,  
 ամեն միսիթարութիւններով և սուրբ ուրախութիւննե-  
 րով կը լեցընէ այսօր իմ հոգիս, որ արտաքին միսիթա-  
 րութիւններէն և ընկերային կենաց զուարճութիւններէն  
 զրկուած է» :

Անմարդարնակ անտառը շրջապատող ահռելի ժայ-  
 ուերը քննելով, որոնք հազարաւոր տարիներէ ՚ի վեր դա-  
 րերուն և մըրիկներուն դէմ դրած էին, Յիսուսի այս  
 խօսքերը կը յիշէր թէ՛ «Ալ որ իմ խօսքերուս ականջ  
 կը դնէ և անոնց կը հետեւի, կը նմանի այն մարդուն,  
 որ իւր տունը ժայռերուն վրայ կը շինէ : Աս ալ քու  
 խօսքերուդ վրայ իմ փրկութեանս հիմերը պիտի դնեմ,  
 որպէս զի ժայռերուն պէս հաստատ ըլլան» :

Փուշերը և տատասկներն անգամ կարեւոր դասեր  
 կը մատակարարէին իրեն. «Աթէ ասոնք խաղող կամ  
 ուրիշ ընտիր պտուղներ բերէին, կ'ըսէր, ինձ աւելի հա-  
 ճելի և աւելի օգտակար պիտի ըլլային. բայց Յիսուսի  
 խօսքին համեմատ՝ անկարելի է փուշերէն խաղող և տա-  
 տասկներէն թուղ քաղել. քանզի բարի ծառը բարի ար-  
 տուղ կու տայ, իսկ անպիտան ծառը անպիտան պտուղ :  
 Արեմն աշխատիմ ես ալ բարի ծառի մը նմանիլ և  
 կրցածիս չափ բարիք ընել : Չեմ ուզեր երբէք նմանիլ



փուշերու և սատասկներու, որոնք բարի ստուղ չեն սար  
և վերաորելն զատ ուրիշ բան չեն ըներ”:

Մհա այսպէս բնութեան հրաշալեաց վրայ սքանչա-  
նալով, անոնց վրայ բարեպաշտ խորհրդածութիւններ կը-  
նէր և իւր ժամանակը կանցընէր, բայց ոչ գարնան ա-  
րեւը, և ոչ նոյն իսկ դարունը իւր ծաղիկներովը և թրու-  
չուններովը այս անապատին մէջ իբեն այնչափ քաղցր և  
այնչափ կրթական երեւցաւ, որչափ իւր որդւոյն ներկա-  
յութիւնը և դաստիարակութիւնը:

Մեն օդը — դեղեցիկ օրերը իւր զաւակը գրկած դուրս  
կենէր, ու քարայրին առջևը կը պտրտէր՝ գորովանօք  
անոր հետ խօսելով, թէ, և այն չէր կրնար տակաւին իւր  
խօսքերը հասկնալ, և եթէ իբր ՚ի պատասխան՝ մանուկը  
իւր փոքր բազուկները ժպտով մը մօրը կերկնցընէր, այս  
քաղցր ժպտը բոլոր անտառը կը շքեղացընէր, և իւր  
բորբախքը և դած տխրութիւնը կը զուարճացընէր. այն ա-  
տեն կինը ծնկան վրայ դալով կըսէր. “Մի Տէր, որ-  
չափ շնորհակալ ըլլամ աս սիրելի զաւակս ինձ բաշխե-  
լուդ համար՝ քիչ է. այս դժնդակ բնակութեան մէջ  
ամեն օր ինձ ուրախութիւն, մխիթարութիւն և զուար-  
ճաղի զբաղմունքներ կու տայ: Մի երկնային Հայր, բա-  
րեհաճէ՛ զան օրհնելու, մեծցընելու և երջանկացընելու:  
Մհ, ինչպէս շողողուն են անոր անոր աչքերը, ինչպէս  
անոր դեղին ճակատը ոսկեգոյն խոպուկներով զարդար-  
ուած է, և ինչպէս յստակ են անոր վարդագոյն այտերը.  
Ոհ, ինչ հանդարտութեամբ կուրծքիս վրայ կը հանդէն.  
չատ իրաւամբ Պրկիչը այն խօսքը ըսաւ թէ. ‘Նթի, այս



փոքր մանկանց ջնամանիք, երկնից արքայութիւնը պիտի չկարենաք մտնել: Արչափ ցանկալի էր որ աշխարհիս մարդիկը այս անմեղ մանկան պէս հպարտութենէ, նախանձութենէ, ռիսակալութենէ և ամեն տեսակ վշտասակար մոլութիւններէ ազատ ըլլային. այն ատեն ստուգիւ արքայութիւնը մեր սրտերուն մէջ պիտի ունենայինք, այն ատեն այս մանկան իւր մօրը կուրծքին վրայ եղածին պէս մենք ալ աշխարհիս մէջ երջանիկ կեանք մը պիտի ունենայինք”:

Եւ ատ անգամ եկեղեցի երթալու մեծ խղճ մը կը զգար. “Ինչպէս երջանիկ են անոնք, կը ըսէր, որ անթիւ հաւատացելոց բազմութեան հետ կը միանան և եկեղեցի կ'երթան Աստուծոյ խօսքը լսելու համար: Ահ, եթէ զանգակին ձայնը միայն առնուի, ստուգիւ ինքզինքս երջանիկ պիտի սեպէի: Սակայն, կրկնեց, համայն բնութիւնը, երկինքը և երկիրը նոյնպէս քու տաճարդ են, ու Աստուած, և զքեզ սիրող ու փափաքող սիրտը քու սեղանդ: Աւրեմն այս ժայռուտ անապատը թող քեզ նուիրուած իմ տաճարս ըլլայ և իմ սիրտս անոր սեղանը”:

Չմեռը երբ չէր կրնար դուրս ելնել, քարայրին մէջ փոքր խաչին առջևը ծնկան վրայ կ'ու դար և աղօթք կ'ընէր:





## ՅԼՈՐԹ Ժ

## Յաւակին քաւարի արահաւ-նի-նը :

Մնչպէս որ երբեմն փուշերու և վայրի խոտերու մէջ  
գեղեցիկ ծաղիկ մը կը գտնուի, այսպէս և յէնր վիե՛վե  
զաւակը այս առանձնութեան մէջ հրեշտակային գեղեց-  
կութեամբ կը մեծնար ու կը զարգանար, թէև միայն  
խոտերով, արմատներով, կաթով և ջրով կը սնանէր, և  
իւր զգեստը այժեամի մորթէ էր, զոր մայրը որ մը աղ-  
ուէսի մը բերանէն յափշտակեր էր :

Իւր իմացականութիւնը քիչ քիչ տարածուելով  
սկսաւ առարկաները ճանչնալ մօրը խօսքերը հասկընալ և  
զանոնք կրկնել :

Ենր վիե՛վե որ երկար ատենէ ՚ի վեր մարդկային ձայն  
մը լսած չէր, շափազանց ուրախութիւն մը զգաց երբ ա-  
ռաջին անգամ անոր խօսիլը լսեց. այն ատեն ժամերով  
անոր հետ կը խօսէր, ու քիչ ժամանակի մէջ քարայ-  
րին և ձորակին մէջ եղած առարկաներուն անունները  
սորվեցուց, այնպէս որ անոր վրայ փոքր խօսակցութիւն-  
ներ ընելու կարող եղան :

Յաւակին իմացականութեան զարգացումը և իւր մայ-  
րական սիրոյն առաջին զգացումները յէնր վիե՛վե ան-  
պատմելի ուրախութիւն մը պատճառեցին, և ամեն օր



այսպիսի նորանոր զուարճութիւններ զգալով՝ ձմեռուան  
ամենէն խիստ օրերը իրեն համար քաղցրութեամբ անցան :

Չմեռուան վերջերը՝ Յաւակ հիւանդացաւ և երկար  
ատեն չկրցաւ քարայրէն դուրս ելնել : Իսկ զարնան  
սկիզբները առողջանալով, զեղեցիկ առտու մը՝ Եկե-  
նը վիէվ զան փոքր ձորակը տարաւ :

Յաւակ իւր խելքը բացուելէն ՚ի վեր առաջին ան-  
գամ զարնան զեղեցիութիւնը տեսնելով՝ այս երեւոյթը  
իրեն մեծ տպաւորութիւն ըրաւ . ուստի բնութեան զե-  
ղեցիութեան վրայ զմայլելով՝ յանկարծ կեցաւ և աչքը  
իւր բոլորտիքը շրջելով, «Մայր իմ, ըսաւ, այսօր ամեն  
բան փոխուած կը տեսնեմ, ամեն բան առաջուանէ ա-  
ւելի զեղեցիկ է : Այս անտառը ձիւնով պատած էր և  
այսօր այնպէս կանաչազարդ զեղեցկացած է, որ եղեւին-  
ները անոնց քովը սև կ'երեւին . թուփերն ու ծառերը,  
որոնք ասկէ առաջ մերկ էին, և հազիւ քանի մը զեղ-  
նած տերեւներ ունէին, հիմա քնքուշ և կանաչ տերե-  
ւերով ծածկուած են : Արեւը աւելի պայծառ կ'երեւի  
և ջերմութիւն մը կը տարածէ ամեն կողմ : Ղեփներ  
նայէ, մայր իմ, որչափ զեղեցիկ գոյնզգոյն անթիւ ծա-  
ղիկներ բուսած են : Զապա այս հեշտալուր ձայները ի՞նչ  
են, որոնք ոստերուն մէջ և թուփերուն տակը կը լսուին .  
եկու տեսնենք՝ ուրկից կ'ելնեն այս ձայները, եկու,  
մայր իմ » :

Եկենը վիէվ մամուռով պատած և զեղին ուփիներէ  
հովանացած ժայռի մը վրայ նստաւ, իւր զաւակն ալ



ճնկացը վրայ նստեցուց, և ձմեռուան մէջ ու դարնան առջի օրերը ըրածին պէս՝ քանի մը բուռ վայրի տունկերու հունտեր նետեց իւր առջևը: Անմիջապէս բազմաթիւ թռչուններ եկան հոն ժողվուեցան զանոնք ուտելու: «Ահա այս թռչուններն են, ըսաւ մայրը, որ այնպէս հեշտալի կերպով կ'երգեն:

— Ո՛վ փոքրիկ զեղեցիկ արարածներ, պոռայ մանուկը ուրախութենէն յափշտակուելով, այնպէս ներդաշնակաւոր երգողը դուք էք, ո՛հ, այո՛, ձեր ձայնը ազուաներուն ձայնէն աւելի քաղցր է, որոնք ձմեռուան մէջ այնպիսի տխուր կերպով կը կանչեն, և դուք անոնցմէ աւելի զեղեցիկ էք: Տայց ըսէ ինձ, մայր իմ, ի՛նչ է պատճառը որ բնութիւնը այսպէս զեղեցիկ է այսօր. այս ամեն հրաշալի բաները ո՛վ հոս ամփոփեց. չեմ կարծեր որ հիւանդութեանս ժամանակ դուն զարդարած ըլլաւ այս անտառը, քանզի վայրկեան մը քովէս չզատուեցար, ասկէ զատ չեմ կարծեր որ դուն կարող ըլլաս ասոնք ընելու:

— Ա՛չ, սիրելի զաւակս, ես կարող չեմ բան մը ընելու, պատասխանեց մայրը. կը յիշե՛ս՝ արդէն ըսի քեզ թէ մենք երկնային շայր մը ունինք, որ արևը, լուսինը և աստղները ստեղծեց, նոյն հայրերնիս է որ այս ամեն տեսածներդ զարդարեց՝ որպէս զի մենք զուարճանանք:

— Ա՛հ, ինչպէս բարի և ճարտար է մեր երկնային շայրը, ըսաւ Յաւակ՝:

Այն ատեն Դէնրվիէվ սորվեցուց անոր թէ ինչպէս Աստուած աշխարհս ստեղծեց, և թէ Աստուած է մի-



այն բացարձակ Տէր և իշխան տիեզերաց. առանց անոր հրամանին՝ տերև մը անդամ չչարժիր, ու մեր պիտոյիցը համար ամեն բան առաջուց հողացած է, և մենք պարտիմք ամեն ժամանակ սիրել, պաշտել և փառարանել զան :

Նետեւեալ առտու՝ Յաւակ զան խիտ կանուխ արթնցուց, որպէս զի երթան տեսնեն թէ Աստուած նոյն զիշերը ուրիշ ինչ ըրաւ. յէնդ վիել ժայռերուն մէջ տեղը ելակներ տեսնելով՝ իւր որդւոյն ցուցուց որ հասածները ժողովէ : Յաւակ անոնցմէ իւր մօրը տուաւ և ինքն ալ կերաւ. « Ա՛հ, ինչպէս բարի է Աստուած, ըսաւ, որ մեզ այսպիսի ախորժելի պտուղներ կուտայ :

— Ա՛յո՛, զաւակս, բայց մի մոռնար անոր շնորհակալ ըլլալու » :

Ա՛յն ատեն Յաւակ ծնկան վրայ դայով և իւր նայուածքը դէպ 'ի երկինք վերցրնելով ըսաւ. « Շնորհակալ եմ, բարի Աստուած, որհնեալ ըլլայ անունդ որ մեզ այսպիսի աղւոր ելակներ տուիր որ ուտենք » :

Ա՛յս ըսելով դարձաւ իւր մօրը հարցուց. « Ա՛րդ երբ Աստուած լսեց իմ խօսքերս, մայր իմ » :

— Ա՛յո՛, անշուշտ, պատասխանեց մայրը ժպտելով, ու զան իւր զրկացը մէջ սեղմելով, մտքէտ անցած խորհուրդներն անդամ գիտէ : Աստուած ամեն բան կը տեսնէ, կը լսէ և գիտէ » :

Յաւակ ամեն օր կ'ուզէր որ մայրը զինքը փոքր ձուրակը տանի որ հոն զբօսուն և խօսակցին :

Նետեւեալ իրիկունը անձրև դայով, նոր տերեւներ



և ծաղիկներ բացուեր էին . Յաւակ մեծ ուրախութեամբ իւր մօրը քովը վազելով , “Մայր իմ , ըսաւ , տես , ինչպէս նոր ծաղիկներ բացուեր են այս իրիկուն , բայց այս կոկոնն ալ նայէ , կ'երեւի թէ Աստուած այս գիշեր ժամանակ չէ ունեցեր զայն լմնցրնելու :

— Ա՛յ , զաւակս , պատասխանեց Ժէնրվիէվ , Աստուած ամենակարող է . մէկ վայրկենի մէջ կրնայ բոլոր անտառը ծաղկեցրնել և չորցրնել :

— Բայց ըսէ ինձ , կրկնեց Յաւակ , ինչպէս Աստուած մութ տեղը և առանց ճրագի կրցաւ աշխատիլ :

— Աստուած ճրագի հարկաւորութիւն չունի , ցորեկուան պէս գիշերն ալ կը տեսնէ , ու մինչև ամենաճածուկ և անթափանց տեղերը պահուած դաղանի բաներն ալ կը տեսնէ” :

Աստու մը Յաւակ ուրախութեամբ մօրը քովը վազելով ըսաւ . “Մայր իմ , եկու հետս որ խիստ գեղեցիկ բան մը ցուցրնեմ քեզ” : Աւ մօրը ձեռքէն քաշելով մացառներուն քովը տարաւ . “Նայէ , մայր իմ , այս փշալից մացառներուն ներսը շինուած գեղեցիկ բան մը կայ” :

— Թռչունի բոյն է այն , զաւակս , պատասխանեց Ժէնրվիէվ . ինչպէս որ բնակելու համար մենք քարայր մը ունինք , թռչուններն ալ բոյն ունին , որ խիստ ճարտարութեամբ շինուած է : Մէջը նայէ , կրկնեց Ժէնրվիէվ զաւակը վերցրնելով , թռչնիկները կը տեսնես , դեռ ոչ փետուռ ունին , ոչ կրնան թռչիլ և ոչ բոյնէն դուրս ելնել” :

— Ինչպէս գեղեցիկ և քնքուշ փոքրիկ թռչուններ



ին . . . . : Քայց ըսէ ինձ , մայր իմ , միթէ ցուրտէ և  
անօթութենէ չե՞ն վնասուիր :

— Ա՛յ , սիրելի զաւակս , բարերարն Աստուած զա-  
նոնք պատասպարելու համար հոգ տարած է : Քոյնին մէ-  
ջը մամուռներով և տունկերու փափուկ աղուամաղով  
պատած է , որպէս զի թռչնիկները տաքնան և հանգիստ  
ըլլան . բոյնը կըր ձե մը ունի , որպէս զի ասդիս անդին  
զարնուելով չվնասուին : Տես ինչ ճարտարութեամբ այս  
թռչնիկներուն հայրն ու մայրը այս զարմանալի բոյնը շե-  
նած են , որուն նմանը մենք չենք կրնար շինել : Աստ-  
ուած սորվեցուցած է անոնց որ իրենց ձագերուն պահ-  
պանութեանը համար բոյն շինեն : Ղիշերը , առտու և  
իրիկուն օգը զովանարուն պէս՝ մայրը կը վազէ կու դայ ,  
և իւր թեւերը անոնց վրայ տարածելով՝ բոյնին մէջ կը  
նստի , որպէս զի ցուրտէն զանոնք պատասպարէ : Այս մա-  
ցառներուն փուշերն անգամ իրենց ծառայութիւն կը  
մատուցանեն . վասն զի վատ և որկրամոլ ազգաւները  
զանոնք ուտելու համար եկած ժամանակնին՝ փուշերէն  
կ'արգելուն և չեն կրնար անոնց մօտենալ : Քայց այս  
թռչնիկներուն մայրը խիստ փոքր ըլլալուն՝ առանց վի-  
րաւորուելու զիւրութեամբ փուշերու մէջէն կ'անցնի : Ար-  
տեսնեն , սիրելի զաւակս , բնութեան մէջ ամեն բան ,  
փուշերն անգամ , Աստուծոյ բարութիւնը և նախախնա-  
մութիւնը կը յայտնեն " :

Ժէնը վիէվ իւր խօսքը դեռ լմնցուցած չէր , երբ  
թռչնիկներուն մայրը թռչելով մացառներուն մէջ մտաւ  
և բոյնին ծայրը կեցաւ : Անմիջապէս բոլոր ձագերը գր-



լուխնին վերցուցին և ճառագործելով կառուցնին բացին, ու մայրերնին անոնց ուտելիք տուաւ: Ասոնք տեսնելով Յաւակ ուրախութենէն կը ցատկէր:

«Թռչնիկները, կրկնեց Դէնըվիէվ, իրենց ուտելիքը հողալու անկարող ըլլալով, մայրերնին իրենց կը բերէ, եթէ բերած հունտերը մեծ և կարծր ըլլան, մայրը զանոնք կը փշրէ, իւր բերանին մէջ կը կակղցընէ, ու այնպէս կու տայ: Միթէ Աստուծոյ այս կարգադրութիւնը զարմանալի չէ. Աստուած իւր բոլոր արարածոց, մինչև ամենափոքր թռչնոց պէտք եղածը նախախնամութեամբ առաջուց հողացած է. նոյն նախախնամութիւնը մեր վրայ ալ ունի. այո՛, սիրասուն զաւակս, մինչև այս վայրկենիս զքեզ ամեն վտանգներէ ազատեց, և միշտ պիտի պահպանէ»:

— Այո՛, մայր իմ, բարի Աստուած զմեզ մինչև ցայսօր խնամեց, ու զիս ալ քեզ տուաւ որ սիրես. այո՛, ստոյգ զիտեմ որ այս թռչունին իւր ձագերը սիրելէն աւելի զիս կը սիրես. առանց քեզի ես շատոնց կորսուած էի»: Այս ըսելով իւր մօրը պարանոցը փաթթուեցաւ:

Յաւակ ամեն օր նորանոր բաներ կը գտնէր իւր մօրը ցուցընելու և անոնց վրայ հարցումներ ընելու, և որովհետև մօրը միակ հողը անոր դաստիարակութիւնն էր, և Յաւակ զբօսնելու համար տղայական խաղալիք մը չունէր և ոչ ընկեր մը, որ իւր երջանիկ կեանքը խանդարէր, ուստի իւր իմացականութիւնը քիչ ժամանակի մէջ մեծ յառաջադիմութիւն ստացաւ: Յաւակ իւր մօրը վրայ չափազանց սէր ունէր, ամեն առտու ամենազեղեցիկ ծա-



զիններ ժողովելով փունջ մը կը շինէր, և իւր ձեռքը  
 եղէգով հիւսած գեղեցիկ փոքր կողովներու մէջ ելակ-  
 ներ, վայրի մորմենիներ և ուրիշ վայրի պտուղներ կը  
 ժողովէր ու իւր մօրը կը տանէր զանոնք. և իրենց մերկ  
 քարայրը խղունջներով, խեցեմորթներով և փայլուն քա-  
 րերով կը զարդարէր :

Բնութեան իւրաքանչիւր հրաշալիքը Յաւակին մեծ  
 տպաւորութիւն կ'ընէր. ծաղիկներուն բացուիլը, պտուղ-  
 ներուն աստիճանաբար հասուննալը, թռչուններուն մեծ-  
 նալը, արեւուն ծագիլը, վախճանիլը, ծիածանին երե-  
 ւիլը իւր զարմանքը կը զրաւէին, և շատ անգամ Յա-  
 ւակ իւր մայրը կը կանչէր որ իւր հետը բնութեան վրայ  
 զմայլի, ու երկուքնին միատեղ Ամենակարողին շնորհա-  
 կալ կը լլային որ իրենց համար այնչափ բաներ ստեղծեր էր :

Դէնը վիէվ իւր որդւոյն այնպէս մեծնալը տեսնելով,  
 ուրախութեան արտասուք կը թափէր և կ'ըսէր. “ Ա՛վ  
 Տէր, անմեղ սիրտը թէև անապատին մէջ ըլլայ, ար-  
 քայութեան մէջ կը կարծէ զինքը, և գլխի սիրող ու  
 միշտ իւր սրտին մէջ ունեցող անձը դժբաղդութեանց և  
 փորձութեանց մէջ իսկ երկնային երջանկութիւն մը կը  
 զգայ ” :

Դէնը վիէվ զգուշացուց իւր զաւակը այս կողմերը ա-  
 ուստութեամբ գտնուած թիւնալի տունկերէն, որոնք խիստ  
 փայլուն և գեղեցիկ գոյներ ունէին, և պատուիրեց որ ա-  
 ուանց իրեն ցուցնելու՝ բան մը չուտէ : Սորվեցուց անոր  
 նմանապէս անհնազանդութեան, յամառութեան, անձ-  
 նահաճութեան և որկրամոլութեան վտանգները : “ Այս



պակասութիւնները, կ'ըսէր, թունաւոր տունկերէն աւելի վտանգաւոր են. մեղքը շատ անգամ այս տունկերուն կը նմանի, որոնք փայլուն կ'երեւին, բայց անոնց գործածութիւնը մահացու է: Այո՛, շատ անգամ չարութիւնը բարիք գործելէն աւելի մեր սիրտը կը դրաւէ և մեր միտքը կը հրապուրէ, բայց պէտք է զգուշանալ Աստուծոյ կամաց դէմ գործելէն":



### ՔԼՈՒԹ ԵՍ.

Չէ՛տը անպատիւն ՌԷ:

Այս անմեղ զբօսանքներով դարունը և ամառը անցուցին ու աշունը եկաւ. երկնից երեսը դրեթէ միշտ խիտ և տխուր ամպերով ծածկուած էր, երկիրը նոր բան մը չէր բուսցրներ, թռչունները իրենց երգերը դադրեցուցեր, և անոնցմէ շատերը՝ այն կողմերէն հեռացեր էին, ծաղիկները կը թառամէին ու կ'ոչնչանային, և տերեւ-



ներքը դեղներով ինքնին կ'իյնային և կամ ցրտաշունչ հողմերուն սաստկութենէն դիւրութար կ'ըլլային :

Դէնը վիէվ՝ ձմեռուան մօտենայուն վրայ սիրտը անհանգստութեամբ լցուած՝ քարայրին դուռը նստեր տըխութեամբ այս աստիճանաւոր աւերման երեւոյթը կը դիտէր : Այս միջոցին Յաւակ իրեն մօտենայով ըսաւ .  
 «Մայր իմ, միթէ Աստուած այսուհետեւ պիտի չսիրէ զմեզ . իւր բոլոր պարգեւները մի առ մի կը ջնջէ, արդեօք աշխարհս պիտի ոչնչացընէ» :

— Ա՛յ, զաւակս, պատասխանեց Դէնը վիէվ . որչափ որ մենք բարի և խոհեմ ըլլանք, Աստուած միշտ պիտի սիրէ զմեզ . երկրիս վրայ ինչ որ կայ՝ դիւրեղծական և ապականացու է, միայն Աստուածային սէրը յաւիտենական կը մնայ : Տնութեան այս մերկացումը ուրիշ բան չէ, բայց եթէ ձմեռուան մօտենայուն նշանը . ձմեռուան վերջը դարունը կու գայ, այսպէս կ'ըլլայ ամեն տարի . նոյնպէս ալ ամեն տառապանքներէն ետեւ ուրախութիւններ կը հետեւին, թէև մարդ հաւատար երբ նեղութեան մէջ կը գտնուի : Սակայն ես պիտի չյուսահատիմ ու վստահ պիտի ըլլամ, և իմ վշտացս մէջ միայն ապագայ երջանկութեան վրայ պիտի մտածեմ, որպէս զի քեզի պէս հանդիստ և ուրախ ըլլամ» :

Դէնը վիէվ իւր ձմեռուան պատրաստութիւնները կը տեսնէր . ամեն օր վայրի խնձորներ, տանձեր, կաղիններ, սալորներ, և վերջապէս ինչ ուտելի պտուղներ որ գտնէր կը ժողվէր . ասկէ զատ՝ Յաւակին օգնութեամբը բաւա-



կան արմատներ կը հանէր և եղնիկին համար չոր խոտեր  
կ'ամբարէր : Բայց կերակուրէն աւելի իւր հաղուստը կը  
մտածէր , իւր միակ զգեստը այնչափ տարիներէ , ի վեր  
գիշեր ցորեկ հագնելով պատառ պատառ եղած էր . լա-  
ւով քարայրին դուռը նստած կապերտները փուշերով և  
խոտի թելերով իրար կը կապընէր , բայց անօգուտ տեղը .  
« Աւագ , կ'ըսէր հառաչելով , որչափ երջանիկ պիտի ըլ-  
լայի այսօր , եթէ ասեղ մը և քանի մը թել դերձան ու-  
նենայի : Ընկերութեան մէջ ապրող որչափ մարդիկ կան ,  
որոնք Աստուծոյ անթիւ բարիքը կը վայելէն , և ամե-  
նեւին չեն մտածեր անոր շնորհակալ ըլլալու » :

Ցաւակ անոր խորունկ տրտմութիւնը տեսնելով ըսաւ  
օր մը . « Մայր իմ , կը յիշե՞ս , անցեալ օր երբ ես կը  
հարցընէի քեզ թէ ինչու մեր եղնիկը բուրդերը կը թա-  
փէ , պատասխանեցիր թէ Աստուած տարին երկու ան-  
գամ նոր զգեստ կու տայ անոր . ուրեմն , մայր իմ , ին-  
չու կը յուսահատիս , բարի Աստուած անշուշտ քեզ ալ  
նոր զգեստ մը պիտի տայ , քանզի անտարակոյս զքեզ մեր  
եղնիկէն շատ աւելի կը սիրէ » :

— Իրաւունք ունիս , պատասխանեց Ժէնրվիէլ  
ժպտելով , պէտք եմ անհոգ ըլլալ . Աստուած մեր պէտ-  
քը կը հոգայ , ան որ անասնոց և ծաղկանց նոր զգեստ-  
ներ կու տայ , անշուշտ մեզ ալ պիտի տայ » :

Քանի մը օրէն ետև՝ իւր որդւոյն պատուիրելով որ  
չըլլայ թէ քարայրէն դուրս ելնէ , ծառէն կտրած խոշոր  
փայտ մը առաւ ձեռքը , կաթով լեցուն դղմամանը իւր  
պարանոցէն կախեց , և հեռի տեղեր գնաց որ ուտելի



պտղոց ուրիշ ծառեր զանե: Քարծր լերան մը գաղափք  
 համեմտով, ծառի մը տակ նստաւ որ քիչ մը ոգի առ-  
 նու, և քանի մը ումայ կաթ խմելով զովանայ: Յան-  
 կարծ սոսկալի դայլ մը տեսաւ, որ բերանը ոչխար մը ա-  
 ռած լերան միւս կողմէն վազելով կու գար. երբ ժէնը-  
 վիէվին մօտեցաւ, զան տեսնելուն պէս՝ կանգ առաւ, և  
 կայծակնացայտ ու կատաղի աչօք անոր կը նայէր: ժէ-  
 նը վիէվ յայնչափ սոսկաց որ սկսաւ դողալ, բայց իսկոյն  
 քաջալերուելով, իւր քովը դրած փայտը յափշտակեց,  
 դայլին վրայ յարձակեցաւ, և անոր գլխուն այնպէս սաս-  
 տիկ հարուած մը իջեցուց, որ դայլը շփոթեցաւ, ոչխարը  
 բերանէն թողուց և մինչև լերան ստորտը գլորեցաւ,  
 ուսկից ոռնալով փախաւ: ժէնը վիէվ ոչխարին քովը  
 ծնկան վրայ եկաւ, անոր բերանին մէջ քիչ մը կաթ  
 թափեց, և աշխատեցաւ որ զան կենդանացնէ, բայց  
 խեղճ անասունը արդէն մեռեր էր:

Այս անասունին երեւոյթը ժէնը վիէվի մտաց մէջ  
 խիստ ցաւազին խորհուրդներ արթնցուց: «Խեղճ ոչխար,  
 ըսաւ, ուրեմն դուն իմ ծնած երջանիկ երկիրներս կը  
 բնակէիր. երկար ատենէ ՚ի վեր այս սիրելի հայրենիքէս  
 ամենեւին բան մը տեսած և լսած չէի. ինչո՞ւ կենդանի  
 չըլլայիր, ո՞հ, ի՞նչ ուրախութեամբ դ.քեզ պիտի սնուցա-  
 նէի և խնամէի, և ի՞նչպէս զաւակս պիտի ուրախանար  
 դ.քեզ տեսնելով. կարելի է որ ամուսնոյս բազմաթիւ հօ-  
 տերէն ըլլաս, և դուցէ իսկ իմ ունեցած բաժինէս: Ա՛հ,  
 Տէր Աստուած, պոռաց անոր վրայ քննելով, ի՞նչ կը  
 տեսնեմ, այո՛, այս ոչխարը մեր հօտերուն մէջէն է, ահա



մեր հովիւներուն նշանը : Ա՛հ, ինչո՞ւ դուն կենդանի չըլլայիր, և ինչո՞ւ մարդկային ձայն մը չունենայիր որ ես քեզ հարցունէի թէ ինչ կ'ընէ իմ ամուսինս, արդեօք պատերազմէն ետ դարձա՞ւ, արդեօք իւր Դէներ վիէվին վրայ տակաւին կը մտածէ՞, և ինձի դէմ սրտմտա՞ծ է տակաւին, թէ իմ անմեղութիւնս ճանչցաւ : Ա՛ւայն, այն այսօր առատութեան մէջ կ'ապրի, ու ես այսօր առանձնութեան և թշուառութեան մէջ կը թաւալիմ" :

Յանկարծ միտքը խորհուրդ մը ծագեցաւ : « Ա՛յս տեղս սիրելի հայրենիքէս շատ հեռու պիտի չըլլայ, ըսաւ ինքնիրեն, եթէ ոչ այս դայլը պիտի չկրնար ոչխարը մինչև հոս բերել : Ա՛րդեօք առնում զաւակս հայրենիքս դառնամ" : Արկար ատեն մտածելով յորդ արտասուք կը թափէր, և իւր սիրտը ուժգնութեամբ կը բարակէր, վերջապէս ըսաւ. « Ա՛չ, աւելի աղէկ է որ հոս կենամ, քանզի մեծ երդում մը ըրած եմ, եթէ ըսեմ թէ վախէս ըրի այն երդումը, դարձեալ իրաւուք չէ որ ես զայն դրժեմ : Այլ ո՞վ դիտէ՞ կարելի է որ այս յանդուզն ընթացքով՝ կեանքս ազատող երկու անձանց մահուան պատճառ ըլլամ : Ա՛չ, ո՛չ, ես հոս պիտի մնամ, որչափ որ Աստուած կամի : Այժմ Աստուծոյ կամքը զիս այս անապատէն դուրս հանել է՝ օր մը քանի մը դժասիրտ անձանց քայլերը այն անբնակ կողմերը կ'առաջնորդէ. աւելի աղէկ է թշուառութեան համբերել քան թէ խիղճս բեռնաւորել" :

Ա՛յն ատեն զնաց աղբիւրին եղերքէն կարծր և սուր խեցի մը դտաւ, անով ոչխարին վրայի մորթը հանեց և



աղբիւրին ջրով լուալէն և արեւուն շորցընելէն ետե՛ իւր վրայ հաղաւ, և իրիկունը ուշ ատեն ետ դարձաւ: Յաւակ հեռուէն զան տեսնելուն պէս՝ անոր առջեւը գնաց և ուրախութենէն պոռաց. «Ո՛ւր մնացիր, մայր իմ, զիս մեծ անհանգստութեան մէջ թողուցիր»: Բայց յանկարծ զարմացմամբ կանգ առաւ, վասն զի մութէն և վրայի մութէն զան ճանչնալով անմիջապէս ետ քաշուեցաւ, որ քարայրին մէջ պահուի, երբ իւր մօրը քաղցր ձայնը լսեց որ կ'ըսէր. Մի վախնար, սիրելի զաւակս, ետ եմ:

— Դուն ետ, մայր իմ, պոռաց Յաւակ ետ դառնալով, օրհնեալ ըլլայ Աստուած. բայց ըսէ ինձ՝ ի՞նչ է այդ վրայինդ, հիմա ինձի պէս հաղուած ետ, այդ ըզզեատը ո՛ւրկից գտար:

— Բարերարն Աստուած զրկեց ինձ այս զգեատը:

— Ես քեզ չըսի՞, սիրելի մայր իմ, թէ Աստուած ձկնուան համար քեզ նոր զգեատ մը պիտի տայ: Ի՞նչ հաստ և թաւուտ սպիտակ զգեատ մ'է՛ այդ, յաւելցուց ձեռքովը շոշափելով, ստուգիւ Աստուծոյ մէկ պարզեւն է՛ այս՝:

Այս ըսելով քարայրին մէջ մտան, Յաւակ աման մը լեցուն կաթ, և պտուղներով լեցուն փոքր կողով մը բերաւ իւր մօրը: Այն ատեն Ժէնրվիէյ մի առ մի պատմեց անոր թէ ի՞նչ կերպով այս զգեատը ձեռք ձգեր էր:

Չմեռը սաստկանալով Ժէնրվիէյ և Յաւակ պարտաւորեցան քարայրէն դուրս ջեղնել. միայն օդը — բաց զեղեցիկ օրերը ձորակին մէջ քիչ մը պտրտելու կ'ելնէին:



« Միեւն զաւակս, ըսաւ օր մը Ժէնրվիւզի իւր որդւոյն՝ պարտած ատեննին, Աստուծոյ մարդասիրութիւնը և հայրական խնամքը ձմեռուան մէջ անգամ ամեն տեղ կրնանք տեսնել: Տես ինչպէս արեւը ձիւնին վրայ քաղցր լոյս մը կը տարածէ, իւր ճառագայթները զարկած ժամանակը կարծես թէ կարմիր, կապոյտ և կանաչ կայծեր կ'արձակէ վրան: Թէև ամեն ծառերը իրենց տերեւներէն մերկացած են, բայց Աստուած եղեւիններուն տերեւները կանաչ թողուցած է, որպէս զի անտառին անասունները պատսպարան մը կարենան գտնել: Վի ծառին խոխուներուն վրայ ձմեռուան խիստ եղանակին մէջ անգամ կապոյտ և թարմ մրգիկներ կը գտնուին, որպէս զի թռչունները իրենց սնունդը գտնեն:

Մեր աղբիւրը ամենեւին չսառիր, որպէս զի անոնք և մենք կարենանք անկէ ջուր խմել. ջուրին բոլորաիւրը տեսակ մը ջրային խոտեր կ'աճին, որոնցմով բազմաթիւ թռչնիկներ կը սնանին: Աստուած ամենադժնդակ եղանակին մէջ անգամ իւր շնորհքը և բարութիւնը իւր արարածոց կը ցուցնէ՝:

Վէշ Եղ և սաստիկ հով եղած օրերը՝ Յաւակ քարայրին դրան առջև սերմեր և հունտեր կը սփռէր, և տեսակ տեսակ թռչուններ կը մերձենային հոն՝ որ ուտեն, շատ անգամ այլ չոր խոտեր կը դնէր քարայրէն դուրս, ու այժեամբները և նապաստակները անօթեցած վազելով հոն կու գային, և վերջապէս այս կենդանիները այնչափ ընտանեցան, որ նապաստակները իւր ձեռքէն կու դային ուտելու, և այժեամբներուն հետ կը խաղար, կը ցատկէր և կը վազէր:



Չմեռուան երկար գիշերները՝ յինքն վիճել մեծ ան-  
հանգստութիւն կը կրէր . քանզի Յաւակ առջի իրիկու-  
նէն կը քնանար , և ինքը առանձին մութ քարայրին մէջ  
նստած երկար ատեն արթուն կը կենար և չէր կրնար  
քնանալ . “ Արչափ երջանիկ պիտի ըլլայի , եթէ ճրագ  
մը , գեղեցիկ դիրք մը , և կամ կանեփ և իլ մը ունե-  
նայի : Իմ ծառաներէս ամենէն յեօփնը անգամ այսօր  
ինձմէ աւելի երջանիկ է . անոնք չմեռուան երկար գի-  
շերները խիստ տաք սենեկի մէջ կ’անցընեն , ճրագին լու-  
սովը կը մանեն , և խօսակցութեամբ ու ծիծաղներով  
երկար իրիկունները վայրկեաններու պէս կ’անցընեն ” :

Բայց անմիջապէս իւր սիրտը առ Մատուած փոխե-  
լով , իւր արտում խորհուրդները կը մոռնար . “ Ինչպէս  
երջանիկ է մարդ որ Մատուծոյ կը հաւատայ և իւր  
յոյսը անոր վրայ կը դնէ : Մռանց քեզի , ո՛վ Մատուած  
իմ , հիմա այս միջոցիս մէկը պիտի չըլլար , որուն հետ  
կարենայի խօսակցիլ : Մռանց քեզի՝ շատոնց ես յուսահա-  
տութենէ և տաղտկութենէ պիտի մեռնէի : Իուն միայն ,  
ո՛ երկնային Հայր , կարող ես կենաց ամեն վիճակին մէջ  
քաղցր մխիթարութիւններ տալու ” :





## ՔԼՈՒԹ ԺԵՎ

ԺԵՆՐՎԻԷՎ ԷՐ ԿԻՆՏԻՄԱՆԱՅ :

ԺԵՆՐՎԻԷՎ Է ԽԵՐ ՈՐՈՂԻՆ ԱՅՍԱԿԷՍ ՎԵՅՐ ԽԱՐԻ ԽՐԵՆՅ  
ԱՅՐԻՆ ԱԷՋ ԱՆՅՈՒՅԻՆ : ԲԱՅՅ ԵՐԺՆԵՐՈՐԴ ՃԻՆՈՒԱՆ ԱԷՋ  
ԿՐԱԾ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԻՆ ԱՄԵՆՐ զԵՐԱՉԱՆՅԵՅ : ՅՈՐԴԱՌԱՍ  
ՃԻՆ զԱՅՐՎ ԼԵՆՆԵՐՆ ՈՒ զԱՇՏԵՐՐ ԱԿԱՏԵՅ , Է ԿԱՂՆԻՆԵ-  
ՐՈՒՆ ՈՒ ՈՒԻՆՆԵՐՈՒՆ ԱՄԵՆԷՆ ՈՒԹԵՂ ՈՍՏԵՐՆ ԱՆՈՂԱՄ ՃԵԱՆ  
ՏԱՆՐՈՒԹԵՆԷՆ ԽՈՐՏԱԿԵՅԱՆ :

ՊԱՐԱԱՅ ԱՆԴՐ ԺԵՆՐՎԻԷՎ ՔԱՐԱՅՐԻՆ ՄՈՒՍՔՐ ՏԱՌՈՅ  
ՈՍՏԵՐՈՎՐ ԿՐ զՈՅԷՐ Է ԽԵՐ ՈՐՈՒՅՆ ՏԵՍ ՄԱՄՆԱՅԻՆ ԱՆ-  
ԿՈՂՆՈՅՆ ԱԷՋ ԿՈՒՂԷՐ ԱԿԱՍԱՎԱՐՈՒԻՂ , ՔԱՆՈՒ ՏԻՍԻԱՅԻՆ  
ՏՈՂՄՐ ՍԱՍՏԿՈՒԹԵԱՄՐ ՎԻՇԵՐՈՎ ՃԵԱՆ ՏԱՏԵՐՐ ՄԻՆԿԷ ՆԵՐԱ  
ԿՐ ՍԱՆԷՐ , Է ԱՆԿՈՂԻՆՐ ԹՐՉԵՐՈՎ զԱՆ ԿՐ ՍԱՌԵՅՐՆԷՐ ,  
ՈՒ ՔԱՐԱՅՐԻՆ ՈՐՄԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՍԱՌՈՅԵՆԵՐ ԿՐ զՈՅԱՅՐՆԷՐ :  
ԱՂՆԻԿԻՆ ԲՆԱԿԱՆ ՍԱՔՈՒԹԻՒՆՐ ԲԱԼԱԿԱՆ ԷՐ ԱԼ ԱՅՆ-  
ԱԻՍԻ ՍՈՍԿԱԼԻ ԳՈՒՐՍՐ ՄԵՂՄԱՅՐՆԵՐՈՒ : ԱՂՈՒԷՍՆԵՐՐ ԳՈՒՐ-  
ԱԷՆ ՆԵՂՈՒԵՐՈՎ ԿՐ ԱՌՈՒԱՅԻՆ , Է ՂԻՇԵՐՆԵՐՐ զԱՅԼԵՐՈՒՆ  
ՈՒՆԱՅՐՈՒ ՃԱՅՆԵՐՐ ԲՈՐՐ ԱՆՍՏԱՌՐ ԿՐ ՏՆԷՅՐՆԷՐՆԷՐ :

ԺԵՆՐՎԻԷՎ ԱՆՍՏԱՆԵՐԻ ԳՈՒՐՍԻՆ ԱԿԱՍՃԱՌԱՒՐ Է ԽԵՐ  
ՈՐՈՒՅՆ ՏԵՍ ՎԱՅՐԻ զԱՉԱՆԱՅ ԿԵՐԱԿՈՒՐ ԸՂԱՅՐՈՒ ԵՐԿԻՒ-  
ՂԷՆ ԱՄՐՈՂՉ ՂԻՇԵՐՆԵՐ ԱՅՔՐ ԶՈՅԿԱԾ ԱՆՅՈՒՅ : ՅԱԼԱԿ  
ՈՐ ԽԵՐ ՃԻՂՄ ՏԱՍԱԿԷՆ ԽԻԱՍ ԿԵԱՆՔ ՄՐ ԱՆՅՐՆԵՐՈՒ ՍՈՒ



վոր էր՝ ցուրտին կը դիմանար և խիստ առողջ էր : Սա-  
կայն յէնը վիէվ դքսական քնքուշ իշխանուհին, որ խիստ  
փառաւոր պալատի մէջ խնամով մեծցած էր, ալ չէր  
դիմանար այն ցուրտ և խոնաւ քարայրին մէջ բնակե-  
լու . “ Ո՛հ, ըսաւ սառած արտասուք թափելով, քիչ մը  
կրակ ունենայի, ուրիշ բան չէի ուզեր առ այժմ . բայց  
այս չըլլալէն զատ՝ կարելի է որ ցուրտէն այս անսահման  
անսպաստին մէջ մեռնիմ : Սակայն, ո՛վ Տէր, թող քու  
կամքդ կատարուի, քու հրամանիդ հնազանդ եմ” :

Իւր վարդազոյն քնքուշ դէմքը փոխուեր և մեռե-  
լատիպ զոյն մը առեր էր, իւր քաղցր աչքերը կապիճ-  
ներուն մէջ խռոչելով իրենց փայլունութիւնը կորսն-  
ցուցեր էին, ու ինքը այնչափ նիհարցեր էր, որ զայն  
տեսնողը պիտի վախնար :

“ Ի՛նչ ունիս, սիրելի մայր իմ, պուստ Զաւակ  
տրտամութեամբ, բոլորովին այլակերպ ես եղեր :

— Սիրելի զաւակս, պատասխանեց յէնը վիէվ, ծա-  
նրը հիւանդ եմ և կարծեմ որ պիտի մեռնիմ :

— Պիտի մեռնիս, ի՛նչ ըսել է մեռնիլ . դուն ա-  
մենեւին ատոր վրայօք բան մը չըսիր ինձ :

— Պիտի քնանամ ու մէկ մ'ալ պիտի չարթննամ :  
Ե՛յն ատեն աչքս արեղակը պիտի չտեսնէ, ականջներս  
քու ձայնդ պիտի չսեն, մարմինս պտղ երկրի վրայ ան-  
ըզգայ տարածուած պիտի մնայ, այն ատեն պիտի չկր-  
նամ ամենեւին մէկ անդամս շարժել, և վերջապէս մար-  
մինս պիտի փոփ և 'ի հող դառնայ” :



Այս խօսքերուն վրայ Յաւակ անոր պարանոցը փաթ-  
թուեցաւ, և միայն այս խօսքերը կրցաւ բերանէն հա-  
նել. «Մի մեռնիր, մայր իմ, մի մեռնիր, կ'աղաչեմ»:

— Մի լար, սիրասուն զաւակ, մեռնիլը և չմեռ-  
նիլը ձեռքս չէ, այլ Աստուած այնպէս կ'ուզէ և կ'ըլլայ:

— Դուն չքսիր ինձ, մայր իմ, թէ Աստուած բա-  
րի է, ինչպէս կրնայ քեզ այսպիսի չարութիւն մը ընել:

— Ա՛յ, սիրելի որդեակ, Աստուած ինքը մշտնջենա-  
ւոր ըլլալով, մեզ ալ մշտնջենաւոր կեանք մը կու տայ:  
Այս խօսքս այսպէս բացատրեմ քեզ. կը յիշե՞ս՝ զգեսա-  
ներս հինցած ըլլալուն համար վրայէս հանեցի . . . . ու  
Աստուած աւելի աղէկը տուաւ ինձ, ահա նոյնպէս այս  
իմ մահկանացու մարմինս պիտի մերկանամ, որ հող պի-  
տի դառնայ, ու ես <sup>է</sup>օր Աստուծոյ քով պիտի երթամ,  
այն ատեն այս ողորմելի մարմնոցս տեղ՝ ուրիշ աւելի դե-  
ղեցիկ մը պիտի տայ. այն, հոն, երկինքը եւ երջանիկ  
պիտի ըլլամ, հոն ամենեւին պաղէն և հիւանդութիւն-  
ներէն պիտի չվախնամ, հոն ոչ լաց կայ և ոչ տառա-  
պանք, բայց եթէ՛ յաւիտենական ուրախութիւն: Ինչ-  
պէս որ դարունը ձմեռէն զեղեցիկ է, այնպէս ալ երկին-  
քը երկրէս զեղեցիկ է: Ամենէն զուարթ դարունը երկ-  
նից հետ բաղդատելով տխուր և տրտում գիշերի կը  
նմանի: Բարի և առաքինի մարդը օր մը երկինքը պիտի  
ելնէ:

— Մայր իմ, ես ալ հետդ կու գամ, ու չեմ ու-  
զեր հոս վայրենի դաղաններուն հետ մինակ մնալ, քանզի  
անոնց հետ խօսեցած ապենա՝ անոնք ինձ սրտասխտան չեն



տար, ես ալ կ'ուզեմ այս մարմինս մերկանալ ու քեզի  
հետ մեռնիլ :

— Ո՛չ, սիրասուն որդեակ, դուն տակաւին պիտի  
ապրիս . բայց եթէ բարեպաշտ եւ առաքինի մնաս, ան-  
շուշտ օր մը պիտի դաս զիս դանեա երկինքը, քանզի դուն  
ալ օր մը պիտի մեռնիս : Բայց մտիկ ըրէ՛ ուրիշ ի՛նչ  
պիտի ըսեմ քեզ . երբ տեսնես որ ալ չեմ խօսիր, շուն-  
չըս կը դադրի, աչքս կը մարին, շրթունքս կը դունա-  
տին, եւ ձեռքերս պրկեալ եւ սառած կը մնան, երեք օր  
եւս քովս կեցիր, այն ատեն մարմնոյս անտանելի հոտէն  
պիտի հասկընաս որ մեռած եմ . ուստի ձգէ այս անա-  
պատը ու դէպ ՚ի արեւելեան կողմը ուղղակի գնա . երկու-  
կամ երեք օր քայլելէդ ետեւ՝ այս անտառին ծայրը պի-  
տի հասնիս, եւ մեծ քաղաք մը պիտի տեսնես, որու մէջ  
անթիւ մարդիկ կը բնակին :

— Անթիւ մարդիկ, պոռայ Յաւակ զարմանքով,  
եւ կը կարծէի թէ այս աշխարհիս մարդկային արարած-  
ները մինակ մենք ենք, ինչո՞ւ մինչեւ հիմա այդ բանը չը-  
սիր ինձ : Ո՛հ, եթէ քայլու ոյժ ունենայիր, հիմա խ-  
կոյն այն քաղաքը կ'երթայինք :

— Ափսոս, զաւակս, այն քաղաքին մարդիկն են,  
որոնք զիս ալ դքեզ ալ պիտի մեռցընէին, ու զմեզ  
վայրենի դազաններու մէջ այս անապատը աքսորեցին :

— Արեմն ես ալ չեմ ուզեր անոնց քով երթալ .  
եւ կարծէի թէ անոնք ամենքնին ալ քեզի պէս բարի  
են, մայր իմ . միթէ այն մարդիկն ալ պիտի չմեռնի՞ն :

— Ա՛յո, աշխարհի վրայ ամեն մարդ մահկանացու է :



— Ա՛հ, արդեօք չե՞ն գիտեր թէ օր մը իրենք ալ պիտի մեռնին :

— Ա՛յո՛, գիտեն, բայց իրենց ընթացքը չեն ուզղեր ու զեղխութեամբ կ'ապրին : Արկիւրը անոնց խիստ պատուական պատուներ կու տայ, զորոնք այս անապատին մէջ չենք կրնար գտնել, խիստ ընտիր ըմպելիներ կը խմեն և խիստ քաղցրահամ կերակուրներ կ'ուտեն : Օտարկանց ամեն գոյները ունեցող պատմութեաններ կը հագնին, ու երեւելի մարդիկ աստղի պէս փայլող ուրիշ թանկագին զարդեր ալ ունին : Ննակութիւննին այնչափ զեղեցիկ է, որ չեմ կրնար բերանով պատմել : Չմեռուան մէջ իսկ այնչափ աղէկ պատասպարուած են, որ ամենեւին ցուրտ չեն զգար, և գիշերները իրենց սենեակները օրուան պէս կը լուսաւորեն : Բայց ասոնց մեծ մասը Աստուծոյ այս ամեն բարութեանց համար ամենեւին չեն մտածեր անոր շնորհակալ ըլլալու, ընդհակառակն զիրար կ'ատեն, իրարու նեղութիւն կու տան, և իրարու հետ կը կռուին : Թէև գրեթէ ամեն օր իրենցմէ մէկը կը մեռնի, բայց ողջ մնացողները ամենեւին հողերնին չեն ըներ, և անկարգ ընթացքնին կը շարունակեն, կարծես թէ յաւիտեանս երկրի վրայ պիտի ապրին :

— Արեմն ստուգիւ չեմ ուզեր անոնց մէջ մտնել, ըսաւ Յաւակ, այն մարդիկը ոչ միայն մեր անտառի գայլերէն աւելի վատ են եղեր, այլ մեր եղնիկէն ալ անմիտ, որ ամենեւին մեր խօսքերը չհասկընար : Աերակուրնին իրենց ըլլայ, աւելի աղէկ կ'ընտրեմ վայրենի անասնոց հետ ուտել, քանզի ասոնք բաց ՚ի գայլէն խաղաղու-



Թե ամբ կ'ապրին իրարու հետ, և հանդարտութեամբ խոտ  
 և սոււնկ ուտելով կը սնանին. այն, աւելի կ'ուզեմ գա-  
 զանաց մէջ մնալ, քան թէ մարդոց քով երթալ:

— Այսու ամենայնիւ պէտք ես երթալ, անոնք քեզ  
 չարութիւն մը պիտի չընեն: Մտիկ ըրէ՝ ուրիշ ինչ պի-  
 տի ըսեմ. մինչև հիմա քու երկնային Հօրդ վրայօք խօ-  
 սեր էի, բայց դուն երկրի վրայ ևս հայր մը ունիս, ինչ-  
 պէս որ զիս մայր ունեցար:

— Հայր մը ունիմ երկրի վրայ, պոռաց տղան ու-  
 րախութեամբ, և ուր է հիմա, արդեօք ան ալ քեզի  
 պէս է, և Հօր Աստուծոյ պէս անտեսանելի չէ:

— Այն, սիրասուն զաւակ, ըսաւ մայրը, դուն զան  
 պիտի տեսնես ու պիտի խօսիս հետը:

— Պիտի տեսնեմ ու պիտի խօսիմ հետը, բայց  
 ինչո՞ւ ինքը չի գար զմեզ տեսնելու, և ինչո՞ւ զմեզ ա-  
 ուանձին այս վայրի անապատին մէջ թողուցած է, ար-  
 դեօք ան ալ այն չար մարդիկներէն մէկն է:

— Ա՛չ, զաւակս, հայրդ բարի է, բայց չզիտեր որ  
 մենք այս անապատին մէջ կը բնակինք, և չզիտեր իսկ  
 որ տակաւին կենդանի ենք: Այսպէս համոզուած է թէ  
 մենք սպաննուեցանք, քանզի մարդիկ սուտ խօսքերով  
 հաւտացուցին իրեն թէ ես խիստ յանցաւոր եմ:

— Սուտը ի՞նչ կը նշանակէ, ընդմիջեց Յաւակ:

— Չեղածը կամ մարդու մտքէն չանցածը խօսին  
 է. օրինակի համար՝ մարդիկ իրարու կ'ըսեն թէ զիրար  
 կը սիրեն, քանի որ զիրար կ'ատեն. ահա այս է սուտ  
 խօսիլը:



— Ինչպէս կը լայ այդ բանը , ամենեւին այդպիսի խորհուրդ մը եկած չէ միտքս : Ա՛հ , ինչ տարօրինակ էակներ են եղեր մարդիկ :

— Այսպէս ուրեմն սուտով մը հայրդ խաբեցին” , ըսաւ Ժէնրվիէվ աչքէն վազած արտասուքը սրբելով , ու անոր հասկըցածին չափ իւր պատմութիւնը անոր պատմելէն ետե՛ յաւելցուց . “ Տես այս ոսկի մասնիս , զոր քու հայրդ սուած է ինձ :

— Հայրս սուած է քեզ . ո՛հ , տուր ուրեմն որ մօտէն նայիմ զայն . մեր երկնային հօր գեղեցիկ պարգեւները , ինչպէս են արեւը , լուսինը , աստղները և ծաղիկները արդէն տեսած եմ , բայց երկրային հօրս պարգեւները տեսած չեմ տակաւին” :

Ժէնրվիէվ մասնին մատէն հանելով անոր սուտ . “ Ա՛հ , ինչ գեղեցիկ է , ըսաւ Յաւակ . հայրս ասիէ ուրիշ գեղեցիկ բաներ ունի՞ , և ինձ ալ պիտի տայ :

— Անշուշտ , ըսաւ Ժէնրվիէվ մասնին վերստին մատը դնելով : Արբ ես մեռնիմ , այս մասնին մատէս հանէ առ , քանզի մինչև մեռնելս կուզեմ պահել զայն , ինչպէս որ սէրս և հաւատարմութիւնս մինչև ցմահ պահեցի : Անոր վրայ ունեցած սէրս այս մասնիին ոսկիին պէս մաքուր էր , և հաւատարմութիւնս յաւիտենական , ինչպէս կը ցուցնէ մասնիս շրջանակը , որ ամենեւին վերջ չունի , և ժամանակին մշանջենաւորութիւնը կը նշանակէ : Արբ մարդոց մէջ մտնես , Սիկիամոնտ կոմսը հարցուր , քանզի հայրդ այսպէս կը կոչուի : Ազաչէ դիմացդ ելնող մարդոց որ զքեզ անոր քովը տանին , բայց



քառ ան ըլլալդ և ինչ պատճառսս կոմսին քովը երթալ  
 ուղեղդ մարդու մի ըսել, մատնին ալ ամենեւին մէ-  
 կու մի ցուցրներ : Զօրդ սուջեւը ելնելուդ պէս՝ մատնին  
 անոր տուր և ըսէ . « Զայր իմ , մայրս այս մատնին քեզ  
 կը դրկէ որ քու որդիդ ըլլալս ճանչնաս : Քանի մը օր է  
 միայն որ մեռաւ , և վերջին անգամ մ'ալ քեզ բարե-  
 լելով՝ կ'ըսէ թէ ինքը անմեղ էր և քու ըրածիդ համար  
 կը ներէ քեզ . երկրի վրայ դքեզ տեսնել չկրնալով , յոյս  
 ունի վերստին երկինքը տեսնելու : Ար խնդրէ որ միշտ ա-  
 ռաքինի կեանք մը ունենաս , իրեն համար չցաւիս , և դեռ  
 խնամես » : Ամեն բանէն աւելի , սիրելի զաւակս , մի մոռ-  
 նար իմ անմեղութիւնս և հաւատարմութիւնս ապացու-  
 ցանելու անոր , ու ըսէ որ մինչև կենացս վերջին շունչը  
 նոյն բանը հաստատեցի քեզ և իւր անունը տալով մե-  
 ռայ : Խօսք տուր ինձ , զաւակս , որ այս ամեն ըրած-  
 ներս մի առ մի պիտի ըսես իրեն , ու ապահովցուր զան  
 որ մինչև մեռնիլս դքեզ սիրածիս պէս զան ալ կը սի-  
 րէի , պատմէ նաև թէ ինչ կեանք անցուցինք այս անա-  
 պատին մէջ , և ինչ վիճակի մէջ մեռայ : Ատղաչեմ  
 զինքը որ իմ մարմինս ասկէ վերցրնէ , ու իւր նախահարցը  
 դերեզմանին մէջ թաղել տայ , քանզի ես անոնց անար-  
 ժան չեի » :

« Այս խօսքն ալ ըսեմ որ մինչև հիմա չես զիտեր :  
 Այս ալ քեզի պէս հայր և մայր ունիմ . եթէ անոնք իմ  
 դժբաղդութենէս ետև կենդանի մնացին , աղաչէ հայրդ  
 որ դքեզ անոնց քովը տանի . երբ անոնք իրենց սիրելի  
 թոռը տեսնեն , անսահման ուրախութիւն մը պիտի ըղ-



դան, և դժբաղդութեան եօթն տարիներու տառապանք-  
 նին պիտի մոռնան: Քանզի աւանդ, ըսաւ հեղեղի պէս  
 արտասուք թափելով, հայրս և մայրս ինձ համար շատ  
 արտասուք թափած և խիստ վշտացած են: Ո՛հ, սիրելի  
 ծնողքս, որչափ կը փափաքէի մեռնելէս առաջ ձեր ակ-  
 նածելի դէմքը վերատին տեսնելու, և դուք ոչ նուազ  
 անձկանօք պիտի ցանկայիք զիս տեսնել եթէ կենդանի ըլ-  
 լայս զիտնայիք. բայց, ափսոս, դուք իմ մարմինս երկար  
 ատենէ ՚ի վեր հեռի անապատի մը մէջ հող դարձած  
 կը կարծէք: Ե՛նչ ուրախութիւն որ երկինքը վերատին  
 զիրար պիտի տեսնենք. եթէ այս մխիթարութիւնը չու-  
 նենայինք, այս աշխարհիս վրայ մեր կրած նեղութիւն-  
 ները անտանելի պիտի ըլլային, և մենք խեղճ մարդկային  
 արարածներ յուսահատութեան մէջ պիտի տառապէինք:  
 Առ լա՛ս, խեղճ զաւակ, ու կը ցաւիս որ քիչ ժա-  
 մանակէն մայրդ պիտի կորսնցընես, Աստուած քեզ  
 բարի հայր մը տալով՝ քու կորուստդ պիտի մոռցընէ,  
 սրբէ ուրեմն աչացդ արտասուքը, հայրդ զքեզ խանդա-  
 կաթ պիտի սիրէ, գորովանօք պիտի խնամէ, և բնաւ պի-  
 տի չձանձրանայ զքեզ զգուելէ ու իմ վրայօքս հարցում-  
 ներ ընելէ, և ամեն անգամ որ զքեզ տեսնէ՝ պիտի չի  
 կրնայ իւր վշտալից և միանգամայն ուրախալից արտա-  
 սուքը զսպելու:

Ժէնը վիէվ լայէն ոյժը հատնելով հեծկտանօք խօսքը  
 ընդմիջեց. և մամռային անկողնոյն վրայ երկնցաւ. սակայն  
 այն աստիճան տկարացեր էր որ երկար ատեն չկրցաւ բե-  
 բանէն խօսք մը հանել:



ՔԼՈՐԻ ԺԳ.

Յաւանի իւր հասարակը կը սորվէ :

Չմեռուան սաստիկ ցուրտը սակաւ առ սակաւ մեղմանալով՝ քաղցր և ամոքախառն օդերը սկսեր էին : Արեւը քարայրին ներքը կը թափանցէր, և զգալի տաքութիւն մը կը տարածէր. որմերուն վրայ եղած սառցոյցները հալեր էին. սակայն Ժէնրվիէվի հիւանդութիւնը օրէ օր կը ծանրանար, և իւր մահուան մօտենալը զգալով՝ պատէն կախուած խաչելութիւնը վար առաւ, իւր քովը դրաւ, ու մահուան պատրաստուեցաւ :

«Ափսոս, ըսաւ, ուրեմն զրկուած եմ մահուան անկողնոյս քով՝ քահանայ մը ունենալու միտիթարութենէն, որ Չերմեռանդ խրատոյցներով քաջալերէ զիս, և իւր բարերար ձեռօք կենաց հացը տայ ինձ, որպէս զի զէպ 'ի յաւիտենականութիւն ընելու մեծ ճանապարհորդութեանս մէջ զօրացնէ զիս : Բայց, ո՞վ Տէր, ո՞ յաւիտենական քահանայապետ, դուն քովս ներկայ ես, քանզի լքեալ և թախծեալ անձը առանձին չես թողուր, ու քեզի համար նեղութիւն կրող և հառաչող մարդոց օղնութեան կը հասնիս և կը զօրացնես զանոնք, ըստ որում՝ ըսիր. «Նրան առջև կեցած կը զարնեմ, թէ որ



մէկը ձայնս լսելով բանայ ինձ, այն ատեն ներս պիտի մտնեմ ու բնակութիւնս հոն պիտի հաստատեմ”:

Այս խօսքերէն ետե՛ երկար ատեն լռութեամբ աղօթք րուս ձեռքը ջերմեռանդութեամբ միացուցած և աչքը դէպ ՚ի յերկիր խոնարհեցուցած:

Յաւակ դիշեր ցորեկ իւր մօրը քովէն շէր դատուեր, ու այնչափ տրտում էր, որ ոչ ուտել կ’ուզէր և ոչ խմել: Իւր ձեռքէն և կած ամեն ծառայութիւնները կ’ընէր անոր, և խանդակաթ սիրով կը խնամէր զան. թեւերը հասածին չափ բարձրութենէ խոնաւ որակերը չոր մամուռով կը մաքրէր, որպէս զի չըլլայ թէ մզուած ջուրը իւր հիւանդ մօրը վրայ թափի: Շատ անգամ ժայռերուն վրայէն և ծառոց կոճղներուն բոլորախէն մամուռներ կը ժողովէր, որպէս զի իւր մօրը աւելի չոր անկողին մը պատարաստէ:

Արբեմն աղբիւրէն զով ջուր կը բերէր և կ’ըսէր անոր. “Օտարաւի ջնս, մայր իմ, շրթունքդ բոլորովին չորցեր են, և դուն հրատապ կը տոչորիս”: Արբեմն մաքուր կաթով լեցուն դդմաման մը կը բերէր ըսելով. “Խմէ՛ քիչ մը, սիրելի մայր, պատուական կաթ է, դեռ հիմա կ’թեցի”:

Աւ զայն խմցրնելէն ետե՛ լայով կը համբուրէր իւր մայրը և կ’ըսէր. “Մայր իմ, սիրելի մայր, ինչո՞ւ քու տեղդ ես հիւանդանայի և ջմեռնէի”:

Առտու մը Ժէնրվիէվ քաղցր, հանդիստ և երկար քունէ մը ետե՛ հանդարտութեամբ արթնցաւ և սկաւ իւր բոլորախէր մնատել փայտեայ փոքր խաչելութիւնը, զոր սերտիւ դրկած պատկելով քունին մէջ կորսնցուցեր



էր : Յաւանկ անոր ինչ ուղերը հասկընալով՝ դտաւ և սուաւ զայն անոր . « Բայց , մայր իմ , հարցուց , այս փայտի կտորը ի՞նչ կ'ընես , որ միշտ ձեռքդ կը բռնես :

— Սիրելի զաւակս , ես կարծէի թէ տակաւին շատ պիտի ապրիմ , եթէ ոչ՝ մինչև հիմա քեզ սորվեցուցած էի : Բայց այսօր կը տեսնեմ որ կարևոր բան մը ամենեւին երկարել պէտք չէ եղեր : Արդէն սորվեցուցի քեզ թէ մեր երկնային <sup>ճայրը</sup> Արդի մը ունի , որ ամեն բանի մէջ իրեն հաւասար է , բայց չկրցայ պատմել թէ ինչ գործեր ըրաւ այս Արդին մեզի համար , ըստ որում աշխարհէս և մարդոցմէ հեռի խոր առանձնութեան մէջ բնակելուդ համար՝ շատ բաներ պիտի չկարենայիր հասկընալ : <sup>Սիմա</sup> որ դիտես թէ երկրի վրայ մարդիկ կան , և անոնց սովորութիւնները և քնութիւնները կը ճանչնաս , հիմա որ մեռնիլ ինչ ըսել է դիտես , <sup>ճոր</sup> Աստուծոյ Արդւոյն պատմութեան ամենէն երեւելի մասերը քեզ սորվեցընեմ . այն ատեն պիտի հասկընաս թէ այս ձեռքիս փայտի կտորը ինչ կը նշանակէ : Աւրեմն ուշադրութեամբ մտիկ ըրէ և բնաւ մօրդ խօսքերը մի մոռնար :

« Մարդիկ աշխարհիս վրայ այնչափ վատթարացան և այնչափ մոլորեցան որ աշխարհս ապականեցաւ և ամենեւին արքայութեան արժանի մարդ չգտնուեցաւ : Այն ատեն երկնային <sup>ճայրն</sup> Աստուած անոնց վրայ դժարով իւր միակ և սիրելի Արդին երկինքէն ղրկեց , որպէս զի զանոնք մոլորութենէ , դարձընէ , և փրկութեան ճամբան անոնց սորվեցընէ :

« Յիսուս Քրիստոս Աստուծոյ Արդին , որ սրբու-



Թեամբ, գորութեամբ և սիրով Հօր Աստուծոյ հաւատարէ, աշխարհք եկաւ, մարտին առաւ ու ծնաւ զբեթէ մերիննն նման քարայրի մը մէջ, ուր անբան անասուններ ալ կային: Արբ մեծցաւ՝ քիչ մը ժամանակ ևս մեր անտառէն աւելի ահռելի անաստօտի մը մէջ անցուց, ուր շարունակ աղօթք կ'ընէր որ մարդիկ իւր քարոզութիւնները մտիկ ընեն և իրեն հաւատան:

« Այնուհետեւ սկսաւ քաղաքէ քաղաք պարտիլ և քարոզել՝ որ երկնաւոր Հայրը զինքը մարդոց փրկութեան համար աշխարհք զրկած է, թէ ամեն մարդիկ Աստուծոյ զաւակներն են և Աստուծոյ փառաց արժանի ըլլալու համար պէտք է առաքինի ըլլալ, զԱստուած սիրել, և մէկ զմէկ շատել: 'Ան որ խօսքերուս ահանջ կը դնէ, ըսաւ Յիսուս, շարութենէ ետ կը կենայ և արդարութեան ճամբուն մէջ կը մանէ՝ երկնից արքայութեան արժանի պիտի ըլլայ, ուր մշտնջենաւոր երջանկութիւն մը պիտի վայելէ՝ բայց ան որ ձայնիս ահանջ չդնէր, ու ինձ հետեւիր՝ օր մը դժոխք պիտի երթայ, որ սոսկալի և անվերջ տառապանքներով լեցուն է':

« Բայց մարդիկ չուղեցին Յիսուսի մտիկ ընել, և ոչ իսկ հաւատացին թէ երկնային Հօր Արդին է և անոր կողմէն զրկուած: Այն ատեն սկսաւ հրաշքներ գործել, որ իւր Աստուծոյ Արդի ըլլալը ցուցնէ:

« Անգամ մը կին մը ինձի պէս անանկ հիւանդ էր, որ բժիշկները չկրցան առողջացընել: Յիսուս անոր ձեռքէն բռնեց, այսպէս քու ձեռքդ բռնածիս պէս, և անմիջապէս կինը ոտք ելաւ, և առաջուանէ աւելի առողջ և առողջ եղաւ:



« Անգամ մ'ալ՝ քեզմէ քիչ մը աւելի մեծ աղայ մը մեռաւ, որ մօրը մէկ հասիկ զաւակն էր, ինչպէս որ դուն իմ միամօր զաւակս ես, և մայրը սաստիկ կ'ողբար: Հօր Աստուծոյ Արդին անոր լացերուն զթալով՝ քաղցրութեամբ մը ըսաւ. « Մի՛ լար, կին դու՛, և անշնչացեալ մարմնոյն դատնալով, « Այլի՛ր՝ ըսաւ, և դիակը նոյն վայրկենին կենդանացաւ, ոտք ելաւ և իւր մօրը քովը դնաց:

« Ասոր նման շատ հրաշքներ ալ գործեց. կոյրերուն աչքը բացաւ, բորոտները, կաղերը, դիւահարները բժշկեց, ջուրը գինիի փոխեց, քիչ մը հացով և երկու ձուկով մեծ բազմութիւն մը կշտացուց, և այլն:

« Բայց մարդիկ դարձեալ չէին ուզեր հաւատալ որ Յիսուս Աստուծոյ Արդի է և անորմէ զրկուած. վերջապէս անոր քարոզութիւններէն ձանձրանալով, որ անդադար կը կրկնէր թէ իրենք չար մարդիկ են և պէտք են մոլորութենէ դատնալ և բարի մարդիկ ըլլալ, այս բռնած խաչիս ձեռքը խաչ մը շինեցին, Աստուծոյ Արդւոյն ձեռքերն ու ոտքերը անոր վրայ տարածեցին, փուշերու նման բայց աւելի կարծր և աւելի զօրաւոր բեւեռներով դամեցին, և չարչարելով մեռուցին զՅիսուս . . . : Թակե բնաւ մէկու մնաս տուած չէր, այլ ընդ հակառակն՝ իրեն դիմողներուն բարիք ըրած էր:

— Ա՛հ, մարդիկ ինչպէս չարագործ են եղեր, պոռայց Յաւակ. ստուգիւ կը ստկացընեն զիս, բայց երկնային Հայրը թողունց զանոնք որ ուզածնին ընեն, ինչո՞ւ իւր կայծակը և փայլակները անոնց վրայ չտեղացուց, ես աւնոր տեղը ըլլայի, բոլորն ալ կը սաստկեցընէի:



— Աջ, սիրելի զաւակս, Արդին Աստուծոյ խաչին վրայ անտանելի ցաւոյ մէջ եղած ատենն իսկ Հօր Աստուծմէ, անոնց համար ներումն խնդրեց, և հոգին աւանդելու ատեն ըսաւ. « Հայր իմ, ներէ անոնց, քանզի չեն զիտեր ըրածնին »: Արդին Աստուծոյ ամեն մարդոց, նոյն իսկ զինքը մեռցրնողներուն սիրոյն համար մեռաւ: Այն, որդեակս, եթէ Յիսուս չմեռնէր՝ բնաւ մէկը արքայութիւն պիտի չկրնար մտնել, ոչ դուն և ոչ ես, ուրեմն մեր սիրոյն համար իսկ Յիսուս իւր կեանքը զոհեց »:

Օգոյցուն մանուկը անշարժ նստած խիստ մեծ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր և իւր վարդազոյն այտերէն վար արտասուաց կաթիլներ կը հոսէին, քանզի առաջին անգամ Յիսուսի պատմութիւնը լսելուն համար՝ իւր սիրտը չափազանց փղձկեր էր: « Ահ, բարի Յիսուս, կ'ըսէր իւր արտասուքը մորթէ զգեատուք սրբելով, որ մեզի համար մեռար: Ըսէ ինձի, մայր իմ, Յիսուս ալ հիմա ձերկի՞նքն է »:

— Այն, սիրելի զաւակս, Յիսուսի անշնչացեալ մարմինը խաչէն վար առնելով, մեր քարայրին նման գերեզմանի մը մէջ դրին, ու մեծ քարով մը անոր դուռը դոցեցին: Եւ այց երեք օրէն Յիսուս գերեզմանէն յարութիւն առաւ ու իւր սակաւաթիւ հաւատացեալներուն երեւցաւ և ըսաւ. « Մի վշտանաք ինձ համար, ես կ'երթամ Հօրս քովը ձեզի համար սեղ պատրաստելու: Իմ բոլոր ձեզ պատուիրածներս կատարեցէք, և մի վախնաք, քանզի ես ձեր մէջն եմ մինչև աշխարհիս վերջը »: Այս ըսելով օրհնեց զանոնք և անոնց աչաց առջեւը երկինք համբարձաւ, ու աներեւոյթ եղաւ:



— Մինչև հիմա զմեզ կը յիշէ՞ արդեօք . զիտե՞ որ մենք այս անսպասին մէջ կը բնակինք , և պիտի կարենանք օր մը տեսնել զինքը երկինքը :

— Անշուշտ , որդեակս , զմեզ ամեն տեղ կը տեսնէ , և ուր որ ըլլանք՝ մեր քովն է , ան կը սիրէ զմեզ , կը խնամէ , մեր սիրտը բարի զգացումներով կը լեցընէ , և կ'օգնէ զմեզ բարիք գործելու : Միրելի զաւակս , դուն ազնիւ , խոհեմ և բարի սղայ մ'ես , ու քու բարի վարքովդ ինձ մեծ մխիթարութիւններ տուիր . բայց կատարեալ բարի ըլլալու համար այդչափը բաւական չէ . պէտք ես բարիք գործել , Աստուծակէ կաքը քու նմանդ սիրել , և մեզք չգործել : Պէտք ես ամեն վայրկեան ջանալ որ անոր արժանի ըլլաս և անոր նմանիս . նայէ՞ եթէ մարդիկ զքեզ սպաննել ուզէին , դուն անոնց համար բարեխօսութիւն պիտի ջնեիր , ինչպէս ըրաւ Արդին Աստուած . վասն զի հիմա ըսիր որ եթէ կարենայիր՝ ամենքն ալ պիտի սպաննէիր . կը տեսնես որ Աստուծոյ Արդւոյն չափ բարի և սիրելի ըլլալու համար որչափ զոհողութիւն ընելու է : Այսու ամենայնիւ՝ եթէ կ'ուզենք Անոր և երկնային <sup>ձ</sup>օր հաճելի և օր մը երկնից արքայութեան արժանանալ , պէտք ենք Յիսուսի պէս բարի և մարդասէր ըլլալ , որուն համար ինքը աշխարհք եկաւ և խաչին վրայ մեռաւ :

« <sup>ձ</sup>իմա դիւրութեամբ պիտի հասկընաս թէ ինչու այս փոքր խաչը ձեռքս բռներ եմ . այս նշանը Յիսուսի յիշատակն է , որ մեր սիրոյն համար չարչարուեցաւ և մեռաւ խաչին վրայ , և կը յիշեցընէ մեզ որ երկնից արքայութիւնը մտնելու համար մենք ալ փորձութեանց և



մահուան տակէն անցնելու վիճակեալ ենք : Ահա այս պատճառաւ մեծ յարգ կ'ընծայենք այս նշանին որ այնչափ պարզ կերելի :

“Ափսոս, սիրելի զաւակս, այս խաչէն զատ բան մը չունիմ որ քեզ յիշատակ թողում, շարունակեց Սէնըվիէվ արտասուածովմ աչք անոր երեսը նայելով . բայց երբ մեռնիմ, սառուցեալ ձեռայս մէջէն քաշէ առ և պահէ զայն, ու երբ մեծնաս և հարստանաս, մի ամբողջ նար մօրդ այս փոքրիկ յիշատակը բնակութեանդ ամենափառաւոր աւերը դնելու, որպէս զի միշտ յիշեցնէ քեզ թէ Յիսուս մեր սիրոյն համար անոր վրայ մեռաւ, և թէ մայրդ ալ այս վայրկեանս զայն դրկած կը մեռնի : Սիրէ քու նմաններդ, անոնց բարիք ըրէ, և զոհէ քու անձդ անոնց օգտակար ըլլալու համար : Անկող և անըստղիւտ կեանք մը վարէ, և վերջապէս աւելի յարգէ քու մօրդ քեզ թողուցած դուզնաքեայ ժառանգութիւնը քան թէ այն անբաւ հարստութիւնները որ կ'ընայ հայրդ օր մը քեզ թողուլ” :

Այսչափ երկար խօսելէն ետե՛ Սէնըվիէվ ստիպուեցաւ վայրկեան մը հանդչելու :

“Աստուած զքեզ անվտանգ հօրդ քովը տանի, կրկնեց մայրը քանի մը վայրկեան վերջը . քանզի թանձրախիտ և անապատ անտառներէ, սեպացեալ ժայռերու և խորին զահավէժներու վրայէ պիտի անցնիս, և դու, խեղճ զաւակ, խիտ տկար ես այս երկար և վտանգաւոր ճանապարհորդութիւնը ընելու : Սակայն կը յուսամ որ Աստուած պիտի օգնէ քեզ երկրային հօրդ քովը եր-



Թալու, ինչպէս որ այս աշխարհիս աւելի վտանգաւոր պանդխտութեանը մէջ կ'օգնէ մեզ իւր քովը հասնելու: Մի մտնար դղմամանները կաթով լեցրնելու և հետո առնելու, որպէս զի ճամբան ծարաւդ անցրնես, դաւազան մ'ալ առ, որպէս զի ինքզինքդ վայրի դազաններէն պաշտպանես: Անմեղ զաւակ, դուն անտարակոյս տկար ես: Բայց Աստուած, որ այն սոսկալի դայլին դուխր ջախջախելու կարողութիւն տուաւ ինձ, անշուշտ զքեզ ալ սխալի պաշտպանէ կատարի դազաններուն յարձակումէն: Ով որ իւր յոյսը անոր վրայ կը դնէ՝ ամենեւին վախնալու վտանգ մը չունի”:

Իրիկուան մութին հետ Դէնրվիէվի տկարութիւնն ալ չափազանց աւելցաւ, իւր շնչառութիւնը այնչափ դժուարացաւ, որ երեսը ցուրտ քրտինքով պատեց: Այն ատեն վերատին իւր բոլոր ոյժը ժողվելով՝ մամռային անկողնոյն վրայ նստաւ, իւր ցաւազին և հանդարտ նայուածքը իւր վշտալից որդւոյն վրայ դարձուց, և սրտաշարժ ձայնով ըսաւ անոր. « Յաւակ, ծնկան վրայ եկու որ օրհնեմ զքեզ ինչպէս որ իմ մայրս զիս օրհնեց իւր մեռնելու ատենը: Վարժեմ որ վերջին վայրկեանս հասած է”:

Ողորմելի զաւակը հեծկտանօք ծնկան վրայ եկաւ, խորին տխրութեամբ նկարուած դէմքը դէպ ՚ի դետինը խոնարհեցուց, իւր փոքրիկ դողդոջուն ձեռքերը միացուց և ջերմեռանդութեամբ վեր վերցուց. Դէնրվիէվ ձեռքը տղուն դիտուն վրայ դրաւ և սրտաշարժ ձայնով ըսաւ. « Աստուծոյ օրհնութիւնը վրայ ըլլայ, սիրելի զաւակս:



Յիսուս Քրիստոս միշտ հետդ ըլլայ, և Հոգին Սուրբ առաջնորդէ քեզ ու շնորհօքը լեցրնէ զքեզ, որպէս զի առաքինի մարդ մը ըլլաս, երբէք մեղաց մէջ չիյնաս, և ես կարող ըլլամ օր մը զքեզ երկինքը տեսնել”:

Այնուհետեւ իւր գրկացը մէջ առաւ զան, մայրական գգուանօք համբուրեց և յաւելցուց. “Մերեւի զաւակս, եթէ մարդոց մէջ մտնես, անոնց մէջ շատ դէշ օրինակներ պիտի տեսնես, չըլլայ որ անոնց նմանիս, և մոլութեանց մէջ իյնաս: Արբ պատուոյ և հարստութեանց հասնիս, չըլլայ որ անոնց սին փառքերը քու ողորմելի մօրդ յիշատակը մոռցրնել տան քեզ: Յաւակ, թէ որ մոռնաս խանդաղատանքս, մայրական արտասուքս և կենաց վերջին կէտին վրայ եղող մօր մը խօսքերը, ու մոլի մարդ մը ըլլաս, ո՛հ, յաւիտեանս իրարմէ պիտի զատուինք միւս աշխարհին մէջ. կ’աղաչեմ, որդեակս, որ քու առաքինութիւնդ և բարեպաշտութիւնդ միշտ պահես”:

Ժէնը վիէվ չկրցաւ խօսքը աւելի յառաջ տանիլ, ու իւր ցաւոց անկողնոյն վրայ իյնալով աչքը գոցեց . . . . .: Յաւակ չէր գիտեր թէ արդեօք մայրը մեռած էր թէ կը քնանար: Անոր քովը ծուներ դրած կու լար և հեծկտանօք անդադար աղօթք կ’ընէր. “Ո՛վ Տէր, կ’ըսէր, Աստուած իմ բարերար, մի թողուր որ մայրս մեռնի. ո՛ Յիսուս Քրիստոս, կը պաղատիմ քեզ՝ արթնցուր զան նորէն”:





## ՔԼՈՒԹ ԺԳ.

Միկիամոնացի կոմսին խղճի պատգմապարտ : — Արե ժեշքէկէ  
անձեզո-նի-նը կը խոստովանի :

Այդոյի ամբաստանութեան վրայ՝ Միկիամոնացի կոմսը  
իւր դիւրագրգիռ բարկութենէն յաղթուելով՝ ժեշքէկէ վե  
դատապարտութիւնը ստորագրելէն և զրկելէն ետեւ՝ սիր-  
տը կարեւելք խոցուած մտատանջութեամբ իւր վրանը  
քաշուեր էր : Իւր զինակից Ալուֆ ասպետը այն միջո-  
ցին բանակէն քանի մը մղոն հեռի կը դանուէր : Ի դար-  
ձին՝ Միկիամոնացի վրանը մտաւ որ իւր տիրոջը առողջու-  
թեան վիճակն իմանայ :

Ամսը այն ատեն բոլոր եղածները պատմեց անոր ,  
Տերունի և հաւատարիմ ասպետը դունատելով աղաղա-  
կեց . “ Ով սիրելի իշխանա, ի՞նչ բռիւր իմ սպիտակ  
հերացս վրայ կերդնում որ կինդ անակդ է : Այնպիսի  
բարեպաշտ և այնպիսի բարեկիրթ աղջիկ մը այդպէս շու-  
տով չմոլորիր, հաւատա՛ ինձ, ևս փորձով դիտեմ : Բայց  
ներէ համարձակութեանս՝ այն Արցն նշանաւոր չարա-  
գործ մ'է, դիտեմ որ շողքորդութեամբք վստահութիւնդ  
շահելու կարող եղած է, բայց հաճէ՛ հաւատալ իմ այն  
խօսքիս որ շատ անգամ քեզ համարձակեր եմ կրկնե-  
լու . ‘ Այն որ շողքորդութիւն կրնէ և միշտ քեզ ի-



բաւուրք կու տայ՝ քու թշնամիդ է, իւր սրտէն կ'անարգէ զքեզ և միայն իւր մանաւոր օգուտը կը մնառէ : Բայց այն որ քեզ տհաճելի երեւելէն չվախնարով ճրշմարիտը կը խօսի՝ քու բարեկամդ է : Աւտի մտիկ ըրէինձ, սիրելի իշխանս, աճապարէ՛ իսկոյն տուած անխոհեմ վճիռդ ետ կոչելու : Ա՛յլ երկնաւոր Աստուած, ինչպէս բարկութենէն սխալեցաւ մեր բարեմիտ իշխանը : Ամենայետին հպատակներէդ մէկը առանց դատաստանի դատապարտած ատենդ՝ կը մտածէիր թէ ինչ մեծ մեղք դործեցիր, և ի՞նչպէս առանց հարցումորձ ընելու առաքինի կինդ դատապարտեցիր : Ա՛յր պիտի կարենաս բարկութիւնդ սանձելու : Բանի՞ անդամ բարկութեանդ համար զղջացած ես, բայց այս անգամ կը վախնամ որ սոսկալի դժբաղդութիւն մը չպատճառէ" :

Առմար իւր սխալմունքը ճանչցաւ անխոհեմութեամբ աճապարելուն համար, սակայն տակաւին կը տարակուսէր թէ իւր Ժէնրվիէյվ կի՞նը յանցաւոր էր թէ իւր մտերիմ Աղօն, ըստ որում այս տեսուչին իրեն դրած նամակը այնպիսի սուտերով շտկուած էր, և խորամանկ նամակաբերը իւր ճարպիկ խօսքերովը նամակին պարունակութեանը այնպիսի հաստատութիւն կու տար, որ նախանձոտ իշխանը իւր բարկութենէն բոլորովին յափշտակուեցաւ : Այսու ամենայնիւ իւր մտերիմ Աղւթին յորդորներէն շարժեալ՝ նոյն վայրկենին երկրորդ սուրհանդակ մը զրկեց Աղոյին, հրամայելով որ մինչև իւր դալը Ժէնրվիէյվ կոմսուհոյն չզգչի, այլ զան իւր բնակութեան մէջ պահէ առանց անոր ամենաթեթև նեղութիւն մը



տալու, և առանց որ և է կերպիւ զըկանք մը ընելու :  
Իւր ամենէն ընտիր ձին սուրհանդակին տուաւ, և հրա-  
մայեց որ կարելի եղածին չափ շուտով ճամբայ ելնէ,  
մեծ դումար մը խոստանալով անոր՝ եթէ ժամանակին  
իւր բերողը հասնի, և անկէ հաճելի պատասխան մը բերէ :

Մինչև սուրհանդակին դառնալը կոմսը մտատանջու-  
թեան մէջ կը տառապէր : Իւր երեւակայութեան մէջ  
երբեմն Ժէնըվէէվ անակող կերեւէր իրեն, և ժամ մը  
կտրը՝ «Մնհնար է, կըսէր, որ Արլո իմ այնչափ ե-  
րախտիքս վայելելէն ետև՝ այսպիսի սոսկալի կերպով զիս  
խարելու համարձակի» : Այս անտանելի անստուգութիւնը  
անդադար կը տանջէր զինքը, ու օրը անդամ մը իւր մը-  
տերիմ Ալուիֆը կը զըկէր որ ճամբուն վրայ նայի թէ  
արդեօք պատգամաւորը ետ կը դառնայ, ու ամբողջ զի-  
շերներ վայրկեան մը չկրցաւ աչքը դոցել :

Արջապէս պատգամաւորը հասաւ և իմացուց որ  
Ժէնըվէէվ և իւր որդին զիշեր ժամանակ անտառը տա-  
րուելով՝ կոմսին հրամանին համեմատ դադանի զլսատուեր  
են : Այս քստմանելի դուժին վրայ՝ կոմսը զրեթէ ողե-  
սպառ և վհատեալ գետինը ինկաւ : Ալուիֆ սրտի անձ-  
կութենէն դուրս ելաւ վրանէն, և կոմսին ասպետները,  
որոնք իրենց իշխանին վրանին առջեւը ամփոփուեր էին,  
անօրէն Արլոն անիծեցին և երդում ըրին որ ՚ի դարձին  
դան սպաննեն :

Կոմսը պատերազմին մէջ վէրք մը ընդունած ըլլալով  
ամբողջ տարի մը հիւանդ մնաց, վասն զի իւր մտատանջու-  
թիւնը և խղճի տաղնասպը իւր առողջութիւնը կուշա-



ցրնէին : Արբ քիչ մը առողջացաւ , մեկնելու հրամանն  
խնդրեց : Սարասինացիք բոլորովին յաղթուած ըլլալով ,  
և անոնց կողմէն երկիւղ մը չմնալով , թագաւորը հրա-  
մայեց անոր որ մեկնի : Առմար իւր հաւատարիմ Առւ-  
Ֆին և իւր քաջ պատերազմականաց ընկերութեամբը  
խկոյն ճամբայ ելաւ դէպ ՚ի իւր երկիրը :

Իրիկուն մը ուշ ատեն՝ իւր կոմսութեան առաջին  
դիւղակը հասնելով , անոր բարի բնակիչները , այր , կին և  
տղայք իրենց խրճիթներէն դուրս ելան և զան դիմաւո-  
րեցին բարձրաձայն լալով . « Բարի եկար , բարի և յար-  
դելի իշխան , ո՛հ , սոսկալի դժբաղդութիւն մը պատահե-  
ցաւ : Ո՛ւր է մեր բարի կոմսուհին , անիծեալ ըլլայ  
այն անօրէն Առօն » : Առմար ձիւն իջնելով , մարդասիրու-  
թեամբ բոլոր ժողովուրդը բարեւեց , և իւր բացակայու-  
թեան ժամանակ իւր կոմսութեան մէջ պատահածներ  
ըուն վրայ հարցուփորձ ընելով տեղեկութիւն ստացաւ ա-  
նոնցմէ : Ամենքը միաբերան Ժէներվելի առաջինութիւն-  
ները կը դովէին և Առօնի շարութիւնները կը պատմէին :

Առմար արտմութեամբ և սիրար վերաւորեալ իւր  
ճամբան շարունակեց , որպէս զի նոյն իրիկունը իւր պա-  
շտը հասնի : Արբ բերդին մօտերը հասաւ , բոլոր պա-  
տուհանները խիստ լուսաւորեալ տեսաւ , և աւելի մօ-  
տենալով , երաժշտութեան ձայներ լսեց : Առօ ըստ սո-  
վորութեան այս իրիկուն ալ իւր բարեկամաց փառաւոր  
խնջոյք մը ըրեր էր , քանզի կը կարծէր որ կոմսը իւր ըն-  
դունած վէրքէն պիտի չազատի , այդէն ինքզինքը բոլոր  
կոմսութեան իշխանը կը համարէր , և այսպէս շարունակ



դբօսանքով և փառաւոր խնջոյքով իւր խղճմտանքը իւր  
լացրնել կուզէր :

Մոմսը իւր պատերազմականաց հետ բերդին դռնակը  
հասնելով հրամայեց որ փողերը հնչեցրնեն : Բերդին  
պահապանը իւր փողովը պատասխանեց , Մոյօ և բոլոր  
կոչնականները անմիջապէս ոտք ելան և « Մոմսը եկաւ ,  
կոմսը եկաւ » պոռալու ձայները բոլոր բերդը հնչեցուցին :  
Մոյօ , որ ամենեւին կոմսին այսպէս յանկարծ դալը չէր  
յուսար , աճապարելով վար իջաւ , և խոնարհութեամբ  
կոմսին ասպատանը բռնելու եկաւ , քանզի կոմսը դեռ  
ձիուն վրայէն իջած չէր :

Միկիամոնտ երկար և սուր նայուածքով անոր նայե-  
ցաւ՝ առանց անոր խօսք մը խօսելու , և Մոյօ դունատեալ  
և երկիւղալից կերեւէր իրը յանցաւոր իւր դատաւորին  
առջև : Իւր խղճին խռովութիւնը բոլոր դիմացը վրայ  
յայտնի կերեւէր , և անատոյգ ու երկրուն քայլերով իւր  
տիրոջը առջեւէն կը քայլէր , ու իւր գողգոջուն և ուժա-  
թափ ձեռքովը բռնած աշտանակով սանդուղը կը լուսա-  
ւորէր որ կոմսը վեր ելնէ :

Միկիամոնտ բոլոր բերդին միջ անկարգութիւն մը ,  
խառնակութիւն մը և վատնութիւն մը տեսաւ , ամեն  
կողմ օտար դէմքերու հանդիպեցաւ . հին ծառաներէն  
միայն քանի մը հողի մնացեր էին , որոնք արտասուալից  
աչօք կոմսին դալուստը շնորհաւորեցին : Օ ինուց սրահը  
մտնելով իւր սաղաւարտը և սուրը սեղանին վրայ դրաւ ,  
և բոլոր բանալիները Մոյօյէն խնդրեց , ու իւր հաւա-  
տարիմ Ալուֆին տուաւ , հրամայելով անոր որ բերդին



դռնները աղէկ պահպանէ, որպէս զի ամենեւին մէկը չկարենայ դուրս ելնել. այնուհետեւ իւր ծառայից հրամայեց որ խոնջեցած պատերազմականաց պէտքը հողան, և ձեռքովը նշան ըրաւ ամենուն որ իւր առջեւէն երթան և զինքը մինակ թողուն :

Միկիամենա ամենէն առաջ ուղեց իւր ամուսնոյն սենեակը ելնել : Այդ յէնդիվելի բանտարկելէն անմիջապէս ետքը սենեկին դուռը բանլիքեր էր, և ամենեւին հոն ոտք կոխած չէր, քանզի իւր շար խղճմտանքը չէր ներեր իրեն : Ուստի ամեն բան՝ յէնդիվելի անկէ մեկնած ատենն՝ եղած վիճակին մէջ կը դանուէր : Մէկ կողմը՝ տակաւին անոր ձեռագործը կը կենար, որուն վրայ կէս լըմինցած ասղնէգործութիւն մը կը տեսնուէր, որ կը ներկայացընէր մարդարիտներով բանուած դամիւնեայ պսակ մը բոլորտիքը այս վերնադրով :

ՆՈՒԷՐ ՍԻՐՅՅ

ԱՌ.

ԳԻՒՅԱԶՆ ՍԻԿԻՍՄՈՆՏ

Ի ԺԷՆԵՎԱԻԿԷ

ՆԻՐ ՀԱՌԱՏԱՐԻՄ ԱՄՈՒՍԻՆԷՆ

Միւս կողմը՝ յէնդիվելի վինը երաժշտական տեսարակի մը վրայ զետեղուած էր, որու մէջ շատ մը պարզ և բարեպաշտական երգեր և տաղեր կային՝ շատը իրմէ շարագրեալ իւր ամուսնոյն բացակայութեան ժամանակ : Գրասեղանին զգրոցներուն մէջ իրեն ուղղուած քանի մը նամակաց նախարտակներ դտաւ, որոնք խիստ աղնիւ և խիստ առաքինի զգացմունքով, և սիրոյ ու հաւատարմ



մութեան խիստ սրտաշարժ հաւաստիքներով լեցուն էին, բայց այս նամակներէն և ոչ մէկը իւր ձեռքը հասեր էր: Դէնըվիէվ զրեր էր թէ ինչպէս ամեն օր իրեն համար աղօթք կ'ընէ, որ Մատուած ողջ առողջ զինքը իւր հայրենիքը վերադարձընէ, և ինչպէս զիշեր ցորեկ իրեն համար կը մտածէր, և իւր երկար և անխմանաղի լռութեան համար շատ զիշերներ լացերով առանց քնանալու անցուցեր էր: Սոմսուհայն իւր ամուսնոյն զրկած նամակները ինչպէս նաև կոմսէն Դէնըվիէվի զրուածները Սոլո զրբաւեր և անյայտ ըրեր էր:

Սոմսը բոլորովին շուարած մինչև կէս զիշեր իւր կնոջ սենեակը նստեր էր՝ ձեռքը կուրծքին վրայ կապած և սիրտը անձայն տրտմութեամբ լցուած, երբ յանկարծ բանտապետին Պէրթա աղջիկը ներս մանելով՝ ստորերկրեայ բանտին մէջ Դէնըվիէվի զրած նամակը յանձնեց, իրեն նուիրած մարդարտեայ մանեակը ցուցուց անոր, (զոր կոմսը անմիջապէս ձանչցաւ), և կոմսուհայն վրայ իւր ամեն զիտցած պատմութիւնը և դատապարտութեան զիշեր անոր իրեն լրածները մի առ մի պատմեց անոր արտասուակեց աչօք: Մյն ատեն կոմսին վիշտը լացերով յայտնուեցաւ. իւր բոլոր տեսածները և լրածները, և զլիաւորաբար այն նամակը Դէնըվիէվի անմեղութեան յայտնի ապացոյցներն եղան. այնչափ արտասուք թափեց որ Դէնըվիէվի նամակը բոլորովին թրջեցաւ, ու իւր հառաչանաց և հեծեծանաց մէջ կը սրտար. « Դէնըվիէվ, միթէ հնար է որ ես զքեզ ու իմ որդիս սպաննել



տամ : Ա՛հ , ի՛նչ թշուառ մարդ եմ եղեր ես" : Իւր  
հաւատարիմ Առաջ ասպետը անոր հառաչանքը լսելով ,  
վաղեց եկաւ և աշխատեցաւ զան մխիթարելու :

Կոմսը երկար ատեն լալէն ետե՛ յանկարծ աշխուժիւ  
ոտք ելաւ , և իւր սուրբ ուզեց որ իսկոյն երթայ անօրէն  
Աղօն սպաննէ : Բայց Առաջ ճթողուց ըսելով որ զան  
աղ լսելէն առաջ պէտք չէր գատապարտել : Այն ատեն  
կոմսը հրամայեց որ այն անօրէնը նոյն վայրկենին բռնեն ,  
շղթաներու զարնեն , ու նոյն ստորերկրեայ բանար նետեն ,  
ուր Դէնրվիէվ այնչափ երկար ատեն սառապեցաւ : Առ-  
լոյի բարեկամներն ալ առ ժամանակեայ կերպիւ բանտար-  
կուեցան :

Էտեւեալ առտու՝ կոմսը հրամայեց որ Աղօն իւր  
առջևը բերեն և մինչև անոր գալը՝ Դէնրվիէվի վերջին  
նամակը անդամ մը ևս կարդաց , և սիրտը չափազանց  
փղձկեցաւ իւր կնոջ այս խօսքերուն վրայ . «Ներէ՛ ա-  
նոր , սիրելի ամուսինս , ի՛նչպիս որ ես կը ներեմ . չըլայ  
որ բարկութեանդ մէջ սպաննես , կը լսե՛ս , կ'աղաչեմ քե-  
զի , քանզի չեմ ուզեր որ իմ պատճառաւս կաթիլ մը  
արիւն անդամ հոսի" :

Երբ Աղօ ներս մտաւ , կոմսը արտասուքներէ կարմը-  
րած իւր աչքերը ցաւազին անոր վրայ դարձրնելով ,  
քաղցր ձայնով հարցուց անոր . «Աղօ , ի՛նչ ըրի ես  
քեզի որ դուն այսպիսի ցաւ մը պատճառեցիր ինձ : Ի՛նչ  
ըրին քեզ իմ կինս ու զաւակս որ զանոնք սպաննեցիր :  
Տղայ էիր տակաւին երբ այս բերդը եկար , ուր այնչափ  
երախտիք գտար . և ինչո՞ւ այս կերպով վարձատրեցիր  
զանոնք" :



Այս կարծեր էր որ կոմսին սովորական բարկութեան  
 զոհ պիտի ըլլայ, բայց այս անյուսալի քաղցրութիւնը  
 իւր սիրտը վերաւորեց, ուստի հառաչելով ըսաւ. «Մի-  
 սոս, տէր իմ, թշուառ կիւքս զիս կուրացուց, կինդ երկ-  
 նային հրեշտակի մը պէս անարատ է, ես անոր սատա-  
 նան եղայ, և ուղեցի զան հրապուրել. երբ կինդ բող-  
 րովին կամացս դէմ կեցաւ, սիրտս նեղացաւ և միտքս  
 դրի որ վրէժս լուծեմ ու մի և նոյն ժամանակը իմ  
 կեանքս ազատեմ: Այն զի կը վախճայի որ չըլլայ թէ  
 քեզ խնայրնէ, ու դուն զիս սպաննել տաս. ահա այս  
 պատճառաւ սուտ տեղը ամբաստանեցի զան քեզի»:

Ամսը մխիթարուեցաւ քիչ մը, երբ տեսաւ որ Աո-  
 լը իւր կոմսուհւոյն անմեղութիւնը խոստովանեցաւ, ուստի  
 նշան ըրաւ որ զան նորէն բանտը տանին, ու ինքը երեսը  
 երկու ձեռացը մէջ դոցելով՝ վերատին սկսաւ լայ անիծա-  
 նելով իւր բարկասիրտ բնութիւնը:

Այն օրէն կոմսը այնպիսի խորին մելամաղձութեան  
 մէջ ինկաւ, որ շատերը վախցան որ պիտի չապրի. իւր  
 վիշտերը երբեմն զինքը մինչև յիմարութեան կը տանէին:  
 Նորը մերձարնակ բարեկամ ասպետները կու գային զան  
 մխիթարելու. բայց անոնց խօսքերը ամենեւին ազդեցու-  
 թիւն մը չէին ըներ կոմսին, որ ժէնրվիէվին սենեկէն  
 գուրս չէր ուղեր ելնել, և միայն բերդին մատուռը կ'երթար:

Իւր ամենէն մեծ հոգն եղաւ ժէնրվիէվի գերեզ-  
 մանը փնտուել տալ, որպէս զի փառաւոր շերիմի մը մէջ  
 փոխադրէ զան, ու անոր վրայ լալով իւր սիրտը մխի-  
 թարէ. բայց ամենեւին մէկը չկրցաւ անոր թաղուած



տեղը գտնել. որովհետև յինքնակեցիկ երկու գահիճները վախերնէն աներեւոյթ եղեր էին, և մարդ չէր գիտեր ինչ ըլլալնին: Այն ատեն կոմսը ննջեցելոց փառաւոր պաշտօն մը մատուցանել տուաւ բերդին եկեղեցւոյն մէջ, ուր ժողովուեր էին իւր ծառաները, երկրին բոլոր ասպետները իրենց բնտանիքովը, և անթիւ բազմութիւն: Կոմսը աղքատաց առաստ ողորմութիւն բաշխեց, և նոյն եկեղեցւոյն մէջ շքեղ շէրիմ մը կանգնել տուաւ ՚ի յիշատակ իւր կնոջ:



### Ք Ա Ո Ր Ի Ճ Ե:

Կոմսը իւր կնոջ ու զաւակը կը գտնէ:

Քանի մը տարի անցաւ և տակաւին կոմսը բերդէն դուրս շուղեց ելնել. իւր բարեկամ ասպետները և հա-



ւատարիմ՝ Առաջի բոլոր ջանքերնին ՚ի գործ զլին զան  
 ախտիելու և զքօսցրնելու համար : Մէկը խնջոյք մը կ'ը-  
 նէր , որու մէջ հոչակաւոր երաժիշտ մը անոր համար  
 մխիթարական եղանակներ կը նուազէր և երգեր կ'երգէր .  
 ուրիշ մը զան կը հրաւիրէր ասպետական և պատերազ-  
 մական կրթութեանց ներկայ դանուելու . երրորդ մը որ-  
 սորդութեան առաջարկու թիւն կ'ընէր :

Օրօսանայ այս վերջին տեսակը , որ Միկիամոնտ իւր  
 մանկութենէն ՚ի վեր խիստ կը սիրէր , իւր մեղամաղձու-  
 թիւնը փարատելու խիստ յարմար երեւցաւ : Ասպեա-  
 ները այս բանս զիտելով , յաճախ կը պատրաստուէին  
 եղջերուներու և վարազներու , կամ գայլերու և արջե-  
 բու որսի , որոնցմէ այն ատեն Վերամանիոյ ընդարձակ ան-  
 տառները լեցուն էին , և կոմսը կը պարտաւորէր ամեն  
 անգամ անոնց առաջարկութիւնը ընդունելու : Առաջին  
 աղաչանօքը Միկիամոնտ ևս օր մը մեծ որսի պատրաստու-  
 թիւն մը տեսնելով , իւր բոլոր բարեկամները հրաւիրեց  
 իւր հետը գալու : Չմեռուան վերջերը գեղեցիկ օր մի էր ,  
 և ձիւնը նոր իջած ըլլալով՝ որսորդութիւնը կը զիւրա-  
 ցրնէր . առտու կանուխ բոլոր ազնուական ասպետաց և  
 իւր բազմաթիւ ծառայից փառաւոր ընկերութեամբը մեկ-  
 նեցաւ : Ամենքն ալ ձի հեծած էին . բազմաթիւ ջորիներ  
 իրենց պէտք եղածը կը տանէին և պառականներու խումբ  
 մը անոնց հետ կ'երթային : Փողին ուրախալի ձայնը ան-  
 տառը կը հնչեցրնէր : Քաղմաթիւ եղջերուներ և վա-  
 րազներ որսալէն ետե՛ կոմսը որս մը տեսնելով , իւր ձիուն  
 բոլոր արագընթացութեամբը անոր ետեւէն վազեց . կեն-



դանին ժայռերուն վրայէն ու մացառներուն մէջէն փախ-  
չելով, վերջապէս ապաստանեցաւ . . . Դէնրվիւի վե քա-  
րայրը, վասն զի կոմսը այն եղնիկին ետեւէն կը վազէր,  
որ այնչափ ժամանակ իւր կաթովը՝ անուցեր էր իւր կինն  
ու զաւակը :

Կոմսը ձիէն իջաւ, կապեց զան ծառի մը, ու նոր  
վազած ձիւնին վրայ եղնիկին քայլերուն հետքին ետեւէն  
երթալով մինչև քարայրին բերանը հասաւ, ու ներս նա-  
ջելով մեծ զարմանքով դունատեալ և ծիւրած մարդ-  
կային կերպարանք մը տեսաւ : Դէնրվիւի իւր վերջին  
հիւանդութիւնը անցրնելով, այնչափ նիհարցեր էր որ այս  
անապատին մէջ առողջանալու յոյս չկար, և ամեն օր  
իւր մահուան կ'ըսպասէր :

« Եթէ մարդկային էակ մ'ես, դուրս ելիր և լոյսին  
եկու », պռուպ կոմսը : Դէնրվիւի ոչխարի մորթովը ծած-  
կուած, խարտեաշ երկայն մազերը ուսերուն վրայ թո-  
ղուցած, թեւերը և ոտքերը մերկ, պաղէն դողդղալով  
և մահատիպ դէմքով դուրս ելաւ :

« Ո՞վ ես դուն, պռուպ կոմսը սոսկումէն ևս քաշ-  
ուելով, և ի՞նչպէս այս տեղս կը գտնուիս » : Քանզի  
կոմսը չճանչցաւ զան, բայց Դէնրվիւի զան տեսնելուն  
պէս ճանչցեր էր :

« Միկիւմնաւ, ըսաւ տկար ձայնով մը, ևս քու Դէ-  
նրվիւի ամուսինդ եմ, զոր դուն 'ի մահ դատապարտե-  
ցիր, բայց զիտէ Մատուած որ ևս անմեղ եմ » :

Մ. յս խօսքերուն վրայ՝ կոմսը կայծակի հարուածէ  
զարնուածի պէս մնաց, չէր զիտեր թէ երանգ կը տեսնէ, եթէ



արթուն է : Իւր մեղամաղձութիւնը շատ անգամ զինքը յիմարութեան տանելով , և այս միջոցիս իւր բոլոր մարդոցմէ հեռու՝ այս առանձին և սոսկալի ձորին մէջ զրտնուելով , կարծէր թէ Դէնրվիէվի զայրացեալ ոգին է իւր տեսածը :

“ Ո՛հ , պռապ կոմսը սրտածմիկ ձայնով մը , ո՛վ վախճանեալ կնոջս ոգին , ինչո՞ւ իմ մեղքս երեսս զարնելու համար առջեւս կը ներկայանաս : Արդեօք ահռելի սպանութիւնը նոյն այս տեղս գործադրուեցաւ , և քու անշնչացեալ մարմինդ այս քարայրին մէջ թաղեցին : Այո՛ , այսպէս պէտք է ըլլայ , և քու ոսկերտախօքդ ՚ի բարկութիւնս դրգռուած են ինձ դէմ . քու արիւնովդ ներկուած հողը կոխելուս համար , և քու ստուերդ կը զայրանայ քու մարդասպանիդ դէմ , որ կը համարձակի հանդարտ գերեզմանիդ մօտենալու : Տեղդ դարձիր ուրեմն , երանելի ստուեր , իմ խղճմտանքիս տառապանքը բաւական է ինձ : Դարձիր խաղաղութեան օթեւանդ և աղօթք ըրէ այնպիսի թշուառի մը համար , որ երբէք հանդատութիւն պիտի չտեսնէ երկրի վրայ . եթէ ոչ այդպիսի ցաւազին դէմքով մի երեւիր ինձ , հրեշտակի մը կերպարանքը առ ու ըսէ՛ թէ կը ներես իմ յանցանացս :

— Միկիամոնտ , ըսաւ Դէնրվիէվ հառաչելով , իմ ազնիւ և սիրասուն ամուսինս , ես ստուեր չեմ , այլ ստուղիւ քու Դէնրվիէվ ամուսինդ եմ : Աս դեռ կենդանի եմ , իմ երկու դահլիճներս զթալով խնայեցին ինձ” :

Բայց կոմսը տակաւին երկիւղով և սոսկումով պաշարուած մնացեր էր . կարծես թէ ստուար քող մը իւր



աչքերը մթաղներ էր, և յէնրվիէվի խօսքերը ամենեւին չէր լսեր: Շարունակ անշարժ նայուածքով կը նայէր անոր, և իւր առջեւը ողի մը կը կարծէր զան:

Ենրվիէվ սիրով անոր ձեռքը բռնեց, բայց կոմսը խկոյն քաշեց և դողդոջուն ձայնով պոռաց. «Թող զիս, թող կ'աղաչեմ, ձեռքդ ցուրտ և սառած է . . . . բայց ոչ, զիս ալ քու հանդած գերեզմանդ տար, ըստ որում կեանքը ինձի տանջանք է, և մահը քաղցր կերևի ինձ:

— Սիկիսմոնտ, կրկնեց դարձեալ Ենրվիէվ, իմ ամենասիրելի ամուսինս», մի և նոյն ժամանակը սիրով և հրեշտակային քաղցրութեամբ անոր երեսը նայեցաւ. «Քու կինդ չե՞ս ճանչնար, նայէ՛ անգամ մը՝ ես քու Ենրվիէվդ չեմ. ձեռքդ ինձ տուր, քու ինձ տուած մատնիդ տակաւ ին մատս է, ինքզինքիդ եկուր. Ա՛վ Աստուած ամենակարող, ազատէ՛ զան իւր աղետալի ցնորքէն»:

Կոմսը վերջապէս իւր սոսկումը փարատելով, և իբր դժնդակ երազէ մը արթնցածի պէս՝ «Ա՛յո՛, դուն ես, ո՛վ Ենրվիէվս», ըսաւ անոր ոտքը իյնալով . . . :

Արկար ասուն Ենրվիէվի դունատեալ և ծիւրեալ դէմքը դիտեց, և քանի մը վայրկեան չկրցաւ բերանէն խօսք մը հանել: Ա՛յնքապէս յորդ արտասուք թափելով իւր սիրտը հանդարտեցուց և ըսաւ. «Աւրեմն դո՞ւն ես, սիրելի ամուսինս, ո՛հ, ի՛նչ աւաղելի վեճակի մէջ կը գտնուիս, ես եմ այդ թշուառութեան անդունդը դահավիժելուդ պատճառը: Ա՛հ, ալ երկրի վրայ ապրելու արժանի չեմ ես, ու չեմ համարձակիր երեսդ նայելու: Ա՛ղաչեմ՝ ներէ՛ ինձ:



— Սիրելի Միկիմոննա, պատասխանեց Դէնրվիէվ լայով, քեզի դէմ ամենեւին ոխ չպահեցի սրտիս մէջ, ըստ որում շատ աղէկ դիտէի թէ նենգամիտ մարդիկ զքեզ խաբեցին, այլ միշտ մի և նոյն սիրով կը սիրէի զքեզ: Ոտք ելիր և բազկացս մէջ եկու. զքեզ նորէն տեսնելու ուրախութենէս է որ կու լամ”:

Սակայն կոմսը հազիւ անոր երեսը նայելու կը համարձակէր. “Քայց ինչո՞ւ զիս չես յանդիմաներ, ըստ անոր, ո՞վ երկնային հրեշտակ, անմեղ և քաղցր էակ, ի՞նչպէս թշուառ եմ եղեր որ այս աստիճան զքեզ տանջեր եմ”:

— Զանգարակցուր սիրտդ, սիրելիդ իմ Միկիմոննա, պատասխանեց Դէնրվիէվ. այս ամենը Մատուծոյ նախախնամութեանը կողմանէ եղած համարէ. ինքը այսպէս ուզեց, ու անոր կամքը օրհնեալ ըլլայ: Աթէ այս անսպասար չդայի, գուցէ աշխարհիս փառքը և հարստութիւնները զիս մոլորեցրնէին, քանի որ առանձնութեանս մէջ հողուոյս փրկութիւնը շահեցայ”:

Այս խօսակցութեան վրայ հասաւ Յաւակ կաշիէ հազուատով, բարձրակոյտ ձիւնին վրայ փոկոտն քայելով, իւր թեւին տակը աղբիւրին բոլորախփէն հաւքած թարմ խոտեր առած ու ձեռքը արմատ մը բռնած, զոր մեծ ախորժակով կ’ուտէր:

Արբ Յաւակ ասպետի փառաւոր հազուատով և սաղաւարաին վրայ տատանող շքեղ փետուրով կոմսը տեսաւ, վախցաւ ու կանգ առնելով պոռաց. “Մայր իմ,



ով է այս մարդը. արդեօք այն չարագործ մարդոց մէջն է, զոր դուն յիշեցիր, և զմեզ սպաննելուն համար հոս եկած է: Ո՛հ, մի լար, մայր իմ, յաւելցուց իւր մօրը քով վազելով, ես դքեզ կը պաշտպանեմ, մինչև ոտիցդ ներքև մեռնիլս պիտի չթողում որ քեզ չարութիւն մը ընէ:

— Սիրելի զաւակս, պատասխանեց Սէնրվիէվ, մի վախնար. աղէկ նայէ անոր ու դնա ձեռքը համբուրէ. ան քու հայրդ է, տես ի՞նչպէս կու լայ: Աստուած զան հոս զրկեց որ զմեզ հետը իւր տունը տանի”:

Յաւակ իւր գոռուզ մազերովը, բարձր ճակատովը, փայլուն մեծ աչքերովը, կոր քիթովը, և ձեւաւոր դեղեցիկ բերանովը իւր հօրը կենդանի պատկերն էր: Արբ կոմսը իւր սիրելի և մատղաշ զաւակը այս խեղճ վիճակին մէջ տեսաւ, սկսաւ դառն արտասուք թափել, ու զան իւր բազկացը մէջ առնելով, սիրով կը համբուրէր զան անդադար կրկնելով. “Ո՛վ սիրելի զաւակս, սիրելի զաւակս”:

Այնուհետև սրտի խորին յուզմամբ աչքը դէպ ՚ի երկինք վերցրնելով, ու իւր սիրելի զաւակը միանգամայն և կինը գրկընդխառնելով պոռաց. “Ո՛վ Աստուած, օրհնեալ ըլլայ անունդ որ արժանի ըրիր զես գտնելու իմ սիրելի զաւակս, որ առաջին անգամ կը տեսնեմ, և իմ սիրայօդ կինս, որ մեռելներէ յարութիւն առած կերեւի ինձ”:

Սէնրվիէվ իսկ ջերմեռանդութեամբ իւր ձեռքը միացուց, ու բարեպաշտ նայուածքը դէպ ՚ի երկինք վերցը-



մելով . “ Այո , ո՞վ Տէր , ըսաւ , քու բարերարութիւնս  
 ներդ անասանն են , և մէկ վայրկենի մէջ կարող ես  
 երկար տարիներու տառապանքը մոռցնել տալ : Փառք  
 երկնային նախասնամութեան ” : Յաւակ ալ իւր ծնո-  
 ղաց հրատելով՝ փոքրիկ ձեռքերը դէպ ՚ի երկինք վերցուց  
 և իւր մօրը վերջին խօսքերը կրկնեց . “ Փառք երկնային  
 նախասնամութեան ” : Արեքնին ալ երկար ատեն ան-  
 շարժ և լռիկ մնացին :

Ա երջասպէս յէնդվիէվ բերանը բանալով . “ Աիրելի  
 ծնողքս կենդանի են տակաւին , ըսաւ , ի՞նչպէս են , դի-  
 տեն արդեօք որ ես անմեղ եմ . ափսոս , եօթը տարիէ  
 ՚ի վեր անտէք անշուշտ իմ մահուանս վրայ կու լան , և  
 այսչափ ատենէ ՚ի վեր անտնց վրայօք լուր մը առած չեմ :

— Այո , կենդանի են , պատասխանեց կոմսը , ա-  
 ոողջ վիճակի մէջ կը դանուին , ու քու անմեղութիւնդ  
 կը ճանչնան : Հիմա իսկոյն պատգամաւոր մը կը զրկեմ  
 անտնց քու դանուիրդ իմացըներու համար ” :

Ենդվիէվ վերատին ձեռքերը միացուցած դէպ ՚ի  
 երկինք վերցընելով , ու երախտադիտութեան արտասուք  
 թափելով գոչեց . “ Օրհնեալ ըլլայ անունդ , ո՞վ Տէր ,  
 որ իմ աղաչանքս ընդունեցիր և սրտիս ամեն դաղտնի  
 բաղձանքները կատարեցիր . ամուսինս պատերազմէն դար-  
 ձուցիր , անմեղութիւնս յայտնեցիր , զիս ամեն փորձանքէ ,  
 քանտէ և մահուանէ ազատեցիր , իմ սիրելի զաւակս ա-  
 նոր հօրը բազկաց մէջ յանձնելու երջանկութիւնը նուի-  
 րեցիր ինձ , և իմ սիրելի ծնողքս ալ տեսնելու արժանի  
 կընես . ո՞հ , այո , ո՞վ Տէր , բարեխնամ և մարդասէք  
 ես դու ” :



Այսուհետև Դէնրվիէվ իւր էրիկը քարայրին մէջ տարաւ, քանզի իւր մերկ ոտքերը ձիւնին մէջ ըլլալուն՝ սաստիկ ցուրտին չէր կրնար դիմանալ: Աոմար ներս մտնելու ատենը գձկուելու պարտաւորեցաւ, ու քարայրին չոր սլափերը, մամուռով ծածկուած փոքր խաչը, ասոր առջեւի քարը, որ Դէնրվիէվի յաճախ ծնրադրութիւններէն յղկուեր էր, մամուռային անկողինը, դղմամանները, եղէգներէ շինուած փոքր կողովները քննելով, որոնք ողորմելի իշխանուհւոյն բնակութեան բոլոր կարասիքն էին, սիրտը փղձկեցաւ, իւր կնոջ քովը նստաւ, ու իւր զաւակը ծնկացը վրայ առաւ: Քարայրին մէջէն արտաքին սեպացեալ ժայռերուն և տխուր եղեւիններուն ձիւնապատ պատկերները հեռուէն կը տեսնուէին:

« Դէնրվիէվ, ըսաւ այն ատեն կոմսը, Աստուած իւր ամենակարող զօրութեան ո՞ր հրաշքով զքեզ այս ահռելի անապատին մէջ պաշտպանեց, և միթէ երկինքէն հրեշտակ մը զրկեց զքեզ սնուցանելու և խնամելու համար: Աւանդ, ի՞նչպէս անցուցիր այս եօթը երկաթ տարիները առանց պատառ մը հացի, առանց կրակի, առանց անկողնոյ, առանց կարեւոր զգեստուց, մերկ ոտքերդ ձիւններուն մէջ. . . . մանաւանդ քեզի պէս իշխանուհի մը և դուքսի մը աղջիկը, որ ժամանակաւ ոսկի և արծաթ ամաններով կ'ուտէր, ծիրանի և մետաքսեայ զգեստներ կը հագնէր, և փափկութեան ամենաքնքուշ խնամքով մեծցեր էր: Այսչափ փորձութեանցդ և տառապանացդ պատճառը ես ըրալէս ետե՛ տակաւին կը սիրեն զիս, ո՞վ խանդակաթ և հաւատարիմ սիրտ. ո՞հ, ի՞նչ մեծ զանձ մ'եւ եղեր դու ինձ »:



Եւնրվելի վ անոր խօսքը ընդմիջեց, և հրեշտակային ժպիտ մը անոր դեղնած երեսին վրայ երեւցաւ. « Առէ, սիրելի Սիկիամոնտ, ըսաւ, այդ նիւթին վրայօք չխօսինք ալ, ճշմարիտը ես իսկ այս անտառին մէջ շատ զուարճութիւններ ունեցայ: Միթէ շքեղ պալատներն ալ վիշտերէ ազատ են, միթէ երջանկութիւնը միշտ կը թագաւորէ՞ հոն, և միթէ դուն ալ վիշտեր չունեցար: Թողունք այս խօսքերը, ու միտքերնիս ուրիշ աւելի կարեւոր նիւթերու վրայ տանինք: Տես ինչպէս զաւակդ վարդի պէս մեծցած է պարզ սնունդով, և բաց օդին շարունակ սովորելով խիստ քաջառողջ եղած է. մեր բերդին մէջ գուցէ փափկութեամբ մեծնայով՝ տժգոյն, անզօր և թուլամորթ պիտի ըլլար մեծ գերդաստաններու մանկանց նման, և մենք անոր բնական և բարոյական վիշտեր պիտի պատրաստէինք, ուստի ուրախացիր. և մենք փառք տանք Աստուծոյ »:

Այնուհետեւ պատմեց անոր թէ ինչ հրաշալի կերպով Աստուած զինքը և իւր որդին պահպանել էր այն անապատին մէջ, և Սիկիամոնտ մեծ անձկութեամբ մը տիկ ընելէն ետեւ՝ վերջապէս պոռաց. « Ախախնամութիւնը իւր դործոց մէջ զարմանալի և մարդոց օգնութեան հասնելու համար խիստ հարուստ է: Օւաւակս, չըլլայ որ ամենեւին մոռնաս զան. քանզի դուն անզօր մանուկ մ'էիր հօրմէդ զրկուած, և մայրդ զքեզ սնուցանելու անկարող էր, ու Աստուած զձեզ երկուքնիդ ալ պահպանելու համար այս բարի անասունը զրկեց ձեզի, և երբ մայրդ կրած տառապանքներէն պիտի մեռնէր, և դու,



խեղճ դաւակ, այս վայրենի գազաններով լեցուն անատլատին մէջ պիտի կորսուէիր, ու մէկը պիտի չկրնար քութշուառութիւնդ ինձ իմացընելու, այս նոյն անասունը իմ առաջնորդս եղաւ և զիս ձեր բնակած տեղը բերաւ: Ահա Աստուած այսպիսի պարզ, զիւրին և հրաշալի միջոցներով մեզ օգնութեան կը հասնի ճիշդ պէտք եղած ժամանակը: Աւրեմն, որդեակս, որչափ ժամանակ որ ապրիս, յոյսդ Աստուծոյ վրայ դիր”:



### Ք Ա Ո Ր Ի Ք Ձ .

#### ԺԵՆՔԷԼ ԲԵՐԵ ԵՐ ԿԱՐՆԱՅ :

Արմար վերջապէս իւր կինն ու դաւակը առնելով՝ քարայրէն դուրս ելաւ, և իւր քովը կախուած արծաթեայ որսի փողը հնչեցուց իւր մարդիկը կանչելու համար: Արջակայ անտառներուն և հովիտներուն արձագանքը փողին ձայնը հնչեց, և Յաւակ, որ այսպիսի ձայն մը լսած չէր, ուրախութենէն կը ցատկէր, ուղեց իւր հօրը բրածին պէս փողը հնչեցընել, և մայրը անոր տղայական ջանքերուն վրայ կը ժպտէր:



Անմիջապէս կոմսին ասպետները և ծառաները ոմանք ձիով և ոմանք ոտքով ամեն կողմերէն վազելով եկան, և ասպետական մնացին երբ կոմսը տժգոյն և նիհար կնոջ ձեռքը բռնած ու շնորհազեղ մանուկը դրկած տեսան. շրջանակի ձևով լուռ և ակնածութեամբ անոր բոլորտիքը շարուեցան, վասն զի նայեցան որ կոմսը, կինն ու մանուկը կու լային: Այն ատեն կոմսը խռովեալ ձայնով մը ըսաւ. « Ազնիւ ասպետներ, և դուք, իմ հաւատարիմ ծառաներս, ահա իմ Եփեսոսի վիկարի կինս, և ահա իմ Յաւակ զաւակս »:

Այս խօսքերուն վրայ՝ ամենքն ալ զարմացան և ուրախութեան ձայներ հանեցին. « Այլ Աստուած, ի՞նչ կը տեսնենք, մեր յարգելի կոմսուհին է. ուրեմն չապանանցի՞ն զան, թէ մեռելներէն յարութիւն առաւ: Այ, անկարելի է. բայց այո՛, նոյն ինքն է, ո՛հ, այս ի՞նչ թրշուառ վիճակի մէջ է. տեսէք ի՞նչպէս դունատեալ է, և ի՞նչպէս սիրելի և դեղեցիկ է իւր զաւակը »: Այսպէս ուրախութեան, վշտակցութեան, հիացման և հետաքրքրութեան ձայներով անդադար հարցումներ կ'ընէին:

Կոմսը իւր կնոջ պատմութիւնը համառօտիւ անունց պատմելէն ետե՛ղանազան հրամաններ ըրաւ. երկու ասպետ զրկեց որ երթան բերդէն կոմսուհւոյն համար զգեստներ և գահաւորակ մը բերեն, և իւր ընդունելութեանը մեծ պատրաստութիւններ ընեն: Քանի մը ուրիշ ասպետներու հրամայեց որ բեռնակիր ջորիներն ու ձիերը ճամբայ հանեն. ծառաներուն ալ պատուիրեց որ փայտ ժողվեն, ժայռի մը տակ մեծ կրակ մը վառեն, ու ճաշ



մը պատրաստեն : Արակին քովը օթոց մը փրել տուաւ ,  
 ու իւր ամուսինը նստեցընելով՝ գեղեցիկ սև մուշտակով  
 իւր ծիրանի վերարկուն անոր ուսին վրայ դրաւ , և գը-  
 լուխը ծածկելու համար ազնիւ կերպաս մը տուաւ անոր :  
 Այն ատեն բոլոր ասպետները , զորոնք ճաննայու հա-  
 մար դժուարութիւն չունեցեր էր Դէնրվիէվ , մի առ մի  
 ակնածութեամբ մօտեցան ու բարեւեցին զան , և իրենց  
 վշտակցութիւնը և ուրախութիւնը յայտնեցին անոր :

Ասոնցմէ վերջը ազնիւ Առլֆ մօտենայով , կոմսու-  
 հայն ձեռքը համբուրեց և զան արտասուօք թրջելով  
 ըսաւ . “ Սիրելի տիկին , գոհ եմ հիմա որ Սարասինա-  
 ցոց սուրը իմ սպիտակացեալ հերացս խնայեց ու պա-  
 տերազմին մէջ շինկայ , վասն զի այս երջանիկ օրը տես-  
 նելու բարեբաղդութիւնն ունեցայ . այսուհետև առանց  
 վշտի պիտի մեռնիմ ” :

Անկէ ետև Յաւակը գրկելով , անոր գեղեցիկ առոյգ  
 այտերը համբուրեց և ըսաւ . “ Քարի եկար , սիրուն  
 զաւակ , հօրդ կենդանի պատկերն ես : Արանի թէ ա-  
 նոր պէս քաջ և ազնիւ ըլլաս , մօրդ պէս քաղցր և գը-  
 թասիրտ , ու անոնց երկուքին պէս առաքինի և բա-  
 րեպաշտ ” :

Յաւակ , որ ՚ի սկզբան վախցեր էր ինքզինքը յան-  
 կարծ այնչափ բազմութեան մէջ տեսնելով՝ քիչ քիչ  
 համարձակութիւն առաւ , և անոնց մօտեցաւ : Ամեն  
 կողմ անթիւ նորանոր առարկաներ տեսնելով , շարունակ  
 հետաքրքրական և ծիծաղաշարժ հարցումներ կ'ընէր , և  
 բոլոր բազմութիւնը մասնաւորաբար ձերուսին Առլֆ



աշխոյթ մանկան միամիտ դիտողութեանց և խելացի հարցումներուն վրայ կը դուարձանային :

Ամեն բանէն աւելի զինքը զարմացրնողն էր ձիաւորներուն երեւոյթը . քանզի ինչպէս որ առաջին անգամ ձիաւոր տեսնող քանի մը ժողովրդոց սրատահեցաւ , Յաւակ կը կարծէր թէ ձին և վրայի մարդը միայն մէկ էակ մ'է : “ Հայր իմ , ըսաւ , վեց ոտք ունեցող մարդիկ կան աշխարհիս մէջ ” :

Այն ատեն կոմսին առաջարկութեամբը ձիաւորներէն մէկը ձիէն իջաւ և կենդանին Յաւակին քովը տարաւ : “ Հայր իմ , ըսաւ մանուկը , այս կենդանին ուրկից բռնեցիր . մեր անտառին մէջ ասոր նման կենդանի մը տեսած չեմ ” : Չին աւելի մօտէն քննելով և անոր բերանը ոսկիէ և արծաթէ զեղեցիկ սանձ մը տեսնելով հարցուց . “ Ուրեմն ձիերը ոսկի և արծաթ կ'ուտեն ” :

Արբ կրակին բոցը տեսաւ . “ Վայր իմ , ըսաւ , մի թէ մարդիկ այս նիւթը ամպերուն մէջի փայլակներէն ժողված են , թէ այս ալ Աստուծոյ մէկ պարգեւն է : Ահ , ինչ զեղեցիկ պարգեւ մ'է այս , շարունակեց կրակին տաքութիւնը զգալով : Աթէ զիանայինք , մենք ալ բարի Աստուծոյ կ'աղաչէինք որ մեզ ալ տար , որպէս զի այս սաստիկ ձմեռուան մէջ զմեզ տաքցրնէր ” :

Ճաշը ընելու ատեն՝ զեղեցիկ պտուղները մանաւանդ զեղեցիկագոյն ծիրանները իւր ուշադրութիւնը դրաւ եցին , որոնցմէ հատ մը առնելով , “ Հայր իմ , ըսաւ , անշուշտ ձեր երկրին մէջ ձմեռ չկայ , որ այսպիսի զեղեցիկ պտուղ-



Ներ ունիք • ինչ երջանիկ էք որ այնպիսի երկրի մէջ կը բնակիք” ։

Արկար ատեն իւր ուշադրութիւնը իւր առջեւը դրո-  
ուած բաժակին վրայ յարեր էր, և չէր համարձակեր ա-  
նոր դաչելու • բայց ետքը զգուշութեամբ զայն բռնելով •  
“ Ո՛հ, ես կարծէի թէ պիտի հալի • ուրեմն սառ չէ այս” ։  
Արք իրեն հասկըցուցին ինչ բանով շինուած ըլլալը •  
“ Բարի Աստուած ինչ դեղեցիկ և զարմանալի բաներ  
ստեղծեր և մարդոց տուեր է”, ըսաւ • այնուհետեւ շա-  
փաղանց զուարճութիւն մը զգաց երբ ապակիին մէջէն  
իւր մայրը, հայրը և ճաշի նստող բոլոր բազմութիւնը կը  
տեսնէր ։

Սառային մէկը իւր առջեւը արծաթի պէս փայլուն  
պնակ մը դրաւ • Յաւակ զայն դիտելու ժամանակը իւր  
պատկերը անոր մէջը տեսնելով, այնչափ վախցաւ որ  
ձեռքէն ձգեց զայն, վասն զի կարծէր թէ մարդկային  
էակ մը կայ անոր մէջ և իւր ձեռքը պնակին տակը դրաւ  
որ իւր տեսած տղան բռնէ • սակայն երբ զինքը վստա-  
հացուցին և ինչ ըլլալը յայտնեցին, աներկիւղութեամբ  
պնակին մէջ նայեցաւ, ու իւր դէմքը զուարթ կամ տը-  
խուր ձեւացրնելով կըզբօսնուր, որով և բոլոր սեղանա-  
կիցները իւր ըրածներովը և խօսքերովը կը զուարճացը-  
նէր ։ Ամսը և կոմսուհին անդադար լալու ատեննին իսկ՝  
չէին կրնար իրենց ծիծաղը զսպել ։

Ճաշը հաղիւ լմնցեր էր, երբ կոմսուհւոյն զգեստները  
բերին • Ժէնրվիէվ քարայրը մտաւ, և նախ ծնկան վրայ  
գալով շնորհակալ եղաւ Աստուծոյ որ այնպիսի հրաշ-



քով զինքր ազնտեց, այնուհետև վրան հազուեցաւ, փայտեայ խաչը առաւ իբր իւր տառապանաց յիշատակը, և քարայրէն դուրս ելաւ իւր բարձր աստիճանին վայելուչ կերպով հազուած:

Այս որովհետև զահաւորակը բերելու համար՝ դարձուածոյ և զարտուղի երկար ճամբաներէ, սփտի անցնէին, ուստի մինչև անոր հասնիլը՝ ծառաները եղեւնի ամուր փայտեր կտրելով՝ տեսակ մը պատգարակ ձեւացուցին: Ամսը անոր վրայ օթոց մը փրել տուաւ, Եւնրվիէվը ու Յաւակը անոր վրայ դրաւ, և բազմութեամբ ճամբայ ինկան դէպ ՚ի բերդը:

Ահա ճամբան զահաւորակը առջեւնին ելաւ, Եւնրվիէվ իւր որդւոյն հետ անոր մէջ մտաւ, ու աւելի հանդիսաւ եղաւ: Արբ անտառէն դուրս ելան, ժողովուրդը բազմութեամբ անտեց առջեւն ելաւ. բարի կոմսուհոյն զանուերուն լուրը շուտով բոլոր երկրին մէջ և շրջակաները տարածուեր էր: Ամբողջ զխղերը պարպուեր էին, միայն հիւանդները և պահապանները մնացեր էին, ու երկրագործները իրենց աշխատութիւնը թողլով, ամենքնին ալ իրենց ամենէն գեղեցիկ զգեստնին հագած՝ անոր ճամբուն վրայ լցուեր էին որ իրենց բարի իշխանուհին տեսնեն: Տոլոր երկրին համար ընդհանուր սոճախմբութիւն մը եղեր էր: Եւնրվիէվ նրչափ բերդին կը մօտենար, նայնչափ աւելի բազմաթիւ էին անոր ճամբան սպասող ժողովուրդը: Տոլորն ալ ուրախութեան ձայներով և վշտակցութեան արտասուքով կը բարեւէին զան:

Այս բազմութեան մէջ երկու ուխտաւորներ տես-



նուեցան երկար մօլուքով ու դիտարկնուն և վերարկունն  
 օձիքնուն վրայ խեցիներ փակցուցած : Պահաւորակին եր-  
 կու կողմը Դէնրվիէվի առջև ծնկան վրայ եկան : Աստիք  
 այն երկու դահիճներն էին , որոնք հրաման ընդունած  
 էին կոմսուհին սպաննելու : Արկուքնին ալ , մանաւանդ  
 Քորէնց ներումն խնդրեցին անորմէ , որ փոխանակ զինքը  
 Պրասպանա իւր ծնողաց քովը տանելու՝ անոք անօգնա-  
 կան այն անտպասին մէջ թողուցեր էին . և իրենք Առ-  
 լոյի վրէժխնդրութենէն վախնալով՝ սուրբ երկիրները ուխ-  
 տի դացեր ու քանի մը օր առաջ վերադարձեր էին . բայց  
 ինքզինքնին իրենց ընտանեաց անգամ ճանչցրնելու հա-  
 մարձակելով , դալերնէն ՚ի վեր թափառական կը պտը-  
 տէին կոմսութեան մէջ . և կարծելով թէ Դէնրվիէվ  
 մեռած է , որոշեր էին որ իրենց ըրածը կոմսին չըսեն ,  
 որպէս զի անոր վեշտը չկրկնապատկեն : « Օրհնեալ ըւ-  
 լայ Աստուած , շարունակեցին դահիճները , որ զձեզ կա-  
 տաղի գազաններուն ճիրաններէն ազատելով , ձեր պա-  
 լատը կը վերադարձրնէ :

— Բարի մարդիկ , պատասխանեց Դէնրվիէվ , դա-  
 նոնք ոտք ելնել տալով և անոնց ձեռքը բռնելով , Աս-  
 տուծմէ ետքը ձեզ կը պարտաւորիմ իմ և որդւոյս  
 կեանքը : Յաւակ , շնորհակալ եղիր ասոնցմէ , քանզի  
 ասոնք են այն մարդիկը , որոնք պիտի սպաննէին զքեզ  
 եթէ մարդոցմէ աւելի Աստուծմէ չվախնային : Անշուշտ  
 զղջացած չէք հիմա , շարունակեց դքսուհին ուխտաւո-  
 րաց դատնալով , մեր կենացը խնայելուդ համար :

— Ամենեւին , պոռայցին միատեղ , այն օրը զձեզ



չսպաննելով, մեծ պատու իրանազանցութիւն մը բրած կը կարծէինք. բայց այսօր յայտնի կը տեսնենք որ սխալութեանք, պէտք էինք զձեզ ձեր ծնողացը քով տանիլ” :

Ախտաւորները այնուհետեւ կոմսին առջև ծնկան վրայ եկան անորմէ ներողութիւն խնդրելով և անոր իւրենց կանանց և զաւակաց բրած երախտեաց համար շնորհակալ բըայով. քանզի մեծ զարմանքով իմացեր էին որ Ժէնրվիէվ իւր վերջին նամակին մէջ մեծանունութեամբ մը զանոնք իւր ամուսնոյն խնամոցը յանձներ էր և կոմսը իւր կնոջ այս բարեպաշտ կամքը հայրական հողատարութեամբ ՚ի գործ դրեր էր :

« Անոջա և զաւակիս զթալնիդ և անոնց կենացը խնայելնիդ չէի դիտեր, ըսաւ կոմսը, բայց ձեր ողորմելի ընտանիքը խնամելով՝ առանց դիմնալու Պրիշին այն խօսքը կատարեցի թէ՛ Աղորմածները ողորմութիւն պիտի դրանեն : Գացէք ուրեմն խաղաղութեամբ և ես իմ պաշտպանութիւնս պիտի չզլանամ ձեզմէ” :

Արկուքն ալ ոտք՝ ելնելով դահաւորակը տանողներուն օգնեցին և ճամբան շինց Քորէնցին ըսաւ. « Ար տեսնես, բարեկամ, որ մարդ պէտք չէ վախնայ երբէք բարի գործ մը ընելէն՝ որչափ և վտանգաւոր իսկ երեւի, քանզի վաղ կամ անագան անոր բարի արդիւնքը երեւան կ'ելնէ” :

Արք Ժէնրվիէվ բերդին մօտեցաւ, ժողովուրդը իւրենց ընդհանուր ուրախութիւնը ցուցնելու համար՝ առանց հրամանի մը սպասելու բոլոր զանգակները կը հնչեցրնէին. բազմութիւնը անոր ճամբուն վրայ խռնելէն զատ՝ ոմանք երկու կողմի ծառերուն վրայ ելեր, և ոմանք պա-



տուհանները և մինչև տանիքները լցուել էին, որպէս զն  
իրենց սիրելի կոմսուհին տեսնելու կարող ըլլան, որուն  
մահուան համար այնչափ երկար առեն արտասուք թա-  
փեր էին: Ընդհանուր խնդակցութեան և դովարանու-  
թեան ձայները այնչափ եռանդուն և այնչափ բարձր էին,  
որ զանդակներուն հնչելը հազիւ կը լսուէր:

Դողովրդեան այնչափ յարգանաց վրայ Դէնրվիէվ  
ամենայով՝ պարկեշտութեամբ աչքերը կը խոնարհեցնէր.  
Յաւակ իւր մօրը ծնկան վրայ նստած էր՝ տակաւին կա-  
շիէ զգեստը հագած և քարայրին փոքր խաչելութիւնը  
ձեռքը բռնած: Վահաւորակին աջ կողմը Միկիամոնա  
կոմսը կը յառաջանար ձիով, ձախ կողմը անոր հաւա-  
տարիմ Ալուֆը, և եղնիկը փոքր շան պէս ետեւնէն  
կերթար. իսկ ասպետները և կոմսին բազմութիւնը եր-  
կու խումբ եղած զահաւորակին բոլորախքը շրջապատեր  
էին և անոր անցնելու ճամբան կը բանային:

Այս անհամար բազմութեան մէջէն որչափ կը յա-  
ռաջանային, այնչափ ուրախութեան և յուզման ձայները  
ընդհանուր կը լային: Մայրերը իրենց մանկանց կը ցու-  
ցնէին այն կոմսուհին, որոնց համար այնչափ ժամանակ  
լացեր էին. հայրերը իրենց զաւակնին վեր վերցրնելով,  
իրենց մանկութեան բարեբարը կը ճանչցնէին անոնց:  
Ծերերն անգամ իրենց դաւաղանին վրայ կոթրնած  
ուրախութենէն կու լային և սրտի յուզմունքէն կը  
դողային:

Արբ Դէնրվիէվ այսպիսի մեծ պատուով բերդին բա-  
կը հասաւ, ներքին մեծ դրանտ առջեւ բոլոր շրջաբնակ



ասպետաց տիկիները և օրիորդները տեսաւ, որոնք կոմս  
սուհին պատուով ընդունելու և իրենց յարդանքը անոր  
մատուցանելու համար հոն ժողովուեր էին :

Ամենքն ալ կոմսուհւոյն անմեղութիւնը ճանչցուելուն  
և իւր հրաշքով մը ազատելուն համար խիստ ուրախ  
կերեւէին, ու այն երջանիկ օրը առաքինութեան յաղ-  
թութեան օրը կը նկատէին : Ամենքն ալ իրենց ամենէն  
ընտիր զարդերով զարդարուած էին, և իրենց գլուխը կե-  
ցեր էր սպիտակներ հաղած և պարանոցը շքեղ մար-  
դարտեայ մանեակ մը դրած նորատի և դեղեցիկ օրիորդ մը,  
որ յառաջ անցնելով ծաղկած մրտենեայ պսակ մը ներ-  
կայացուց յէնրվիէվին ՚ի նշան անոր անմեղութեանը և  
հաւատարմութեանը : “ Նոգունեցէք այս պսակը, ազնիւ  
տիկին, ըսաւ անոր, զոր ձեզ կը նուիրեմ ՚ի դիմաց ա-  
մեն տիկնանց . Աստուած աւելի դեղեցիկը պահած է  
ձեզ երկինքը ” :

Արմսուհին այս ծաղկահաս օրիորդը չճանչնալով, ի-  
մացուցին իրեն թէ Պէրթան է, նոյն օրիորդը որ բան-  
տին մէջ իրեն այցելութիւն ըրեր էր, և հիմա հաղե-  
տասն և չորս տարեկան էր : “ Ազնիւ տիկին, ըսին միւս  
կիները, միայն Պէրթա ձեր դժբաղդութեան ցաւակից  
ըլլալու արժանի եղաւ, ուստի և մեք արժան համարե-  
ցինք որ դարձեալ ան առաջինը ըլլայ ձեր բարօրութեանը  
խնդակից ” :

Ենրվիէվ իսկոյն այն սոսկալի գիշերը յիշելով . “ Ո՛վ  
Աստուած, ըսաւ, իբր թշուառ մեղապարտ այս պատե-  
լին գուրս ելած միջոցիս՝ ո՞վ կը կարծէր թէ օր մը այս-



պիտի փառաւոր կերպով նորէն պիտի վերադառնամ :  
 Դուն միայն դիտելի , ո՛վ Աստուած , և ինձ համար  
 այս սոյն դեղեցիկ օրը պատրաստելի էիր : Աթէ առաքի-  
 նութիւնը և անմեղութիւնը , շարունակեց կոմսուհին  
 ամօթխած պարկեշտութեամբ պսակը ընդունելով և Պէր-  
 թան համբուրելով , այսպիսի պատիւներով և այսպիսի  
 ուրախութիւններով կը պսակես երկրի վրայ , արդեօք եր-  
 կինքը ինչ բարօրութիւններով պիտի վարձատրես :

— Իրաւունք ունիս , տիկին , ըսաւ Ալուֆ , թէ և  
 միշտ ամեն անգամ անմեղութիւնը երկրի վրայ այսպէս  
 չպսակուիր , և այսպիսի փառաւոր յաղթութիւն մը չըն-  
 դունիր , սակայն Աստուած երբեմն այսպէս կ'ուզէ որ ըւ-  
 լայ , որպէս զի նախաձաշակ մը տայ մեզ թէ ինչպէս պի-  
 տի վարձատրէ երկինքը : Տէր կոմս , յաւելցուց դէպ ՚ի  
 անոր դարձնալով , գրեթէ ութսուն տարի է որ զինուո-  
 թական պաշտօնը կը վարեմ , և շատ անգամ յաղթու-  
 թեան փառաւոր հանդէսով այս բերդը մտած եմ , բայց  
 այսպիսի մեծաշուք յաղթութեան օր մը ամենեւին չեմ  
 տեսած :

— Ազնիւ բարեկամս , պատասխանեց կոմսը , պատ-  
 ճառը այն է որ Աստուած այս օրը պատրաստեց՝ մոլու-  
 թեան վրայ առաքինութեան յաղթութիւնը հռչակելու  
 համար :

Ի՞նչոր ասպետները և տիկիները այս խօսքերուն վրայ  
 ծափահարեցին : Օրիորդները այն ատեն որոշեցին որ  
 մշտադալար և մշտածաղիկ մրտենին այնուհետեւ հարսա-  
 նեկան պատկներու համար պահուի ՚ի նշան կուսական



անոնցութեան և հաւատարմութեան : Այս սովորութիւնը մինչև ցայսօր կը պահուի շատ երկիրներու մէջ :

Այս խնդակցութիւնները և սրտի յուզմունքները յենդիվիլին այնչափ ազդեցութիւն ըրին, որ հանդրատանալու խիստ պէտք ունենալով՝ իւր սենեակը տարին զինքը, ուր այնչափ տարիներէ ՚ի վեր ոտք կոխած չէր : Աերստին Աստուծոյ շնորհակալ ըլլալէն և թշուառ ու հաւատարիմ Տրադոյին այրի կինն ու որբ զաւակները մխիթարելէն և իւր պաշտպանութիւնը անոնց խոստանալէն ետե՛ ազաչեց որ զինքը առանձին թողուն որպէս զի հանգստանայ :

Այն օրէն ետե թէ Տրադոյի և թէ մտերիմ Աերթայի ընտանիքը կոմսին բերդին մէջ երջանիկ կեանք մը վարեցին :



ԲԼՈՒԲ ԺԷ.

Ենդիվիլի Ժողով :

Աիկիամոնտի բերդը այսպիսի ուրախութեան մէջ եղած միջոցին՝ Արապանտի դուքսին բերդը խորունկ սուզի



մէջ էր : Դէնըվիէվի բերկրառիթ լուրը անոր ծնողացը տանելու համար, Առլֆ ճանապարհին դժուարութեանց, իւր ծերութեան և կոմսին խօսքերուն ջնայելով, տասն և երկու ձիաւոր ընկերներով մեկնեցաւ, բայց յանկարծական ուրախութեամբ մը անոնց վտանգաւոր ազդեցութիւն մը չտալու համար՝ որոշեց որ նախ այն եպիսկոպոսը գտնէ, որ Արկիամոնտի և Դէնըվիէվի ամուսնութեան արարողութիւնները կատարեր էր. քանզի զիտէր որ այն եպիսկոպոսը Պրապանտի դուքսին խիստ մտերիմ բարեկամներէն մէկն էր, և անոր միջոցաւ կրնար առանց վշտանդի այն երջանիկ լուրը կոմսուհւոյն ծնողացը հազորդել :

Գրեթէ կէս ճամբան խմացաւ որ այն եպիսկոպոսը իւր ճամբուն աջ կողմը քանի մը մղոն հեռու քաղաքի մը մէջ նորահառոյց եկեղեցւոյ մը օժման հանդէսը կը կատարէր. անմիջապէս իւր ճամբայէն շեղելով՝ գնաց գտաւ զան և իւր նպատակը խմացուց : Եպիսկոպոսը ուրախութեամբ լցուած փառք տուաւ Աստուծոյ որ վերջապէս այնպիսի բարեպաշտ և պատուաւոր ընտանիքի մը տառապանաց վերջ տուաւ : « Ա՛նհոգ եղիր, բարեկամ, ըսաւ անոր, այս երջանկառիթ լուրը անոնց հազորդելու անվտանգ միջոց մը կը գտնեմ. վաղը այն վշտակիր ծնողաց տունը գործով երթալու միտք ունէի, և հիմա կրնանք միատեղ մեկնիլ » : Անմիջապէս եպիսկոպոսը, Առլֆ և ձիաւորները ճամբայ ելան :

Պրապանտի դուքսը և դքսուհին իրենց սիրելի աղջկան ՚ի մահ դատապարտուելուն գոյժը առած օրէն ՚ի



վեր՝ ամեն տարի իրենց բերդին եկեղեցւոյն մէջ անոր  
 յիշատակին տարեգարծը կը կատարէին : Աօթերորդ տա-  
 րեգարծին առտուն՝ խորունկ տրամութեամբ առանձին  
 իրենց սենեակը քաշուեր էին : Իրենց վիշտերնէն ծերա-  
 ցեր և մաղերնին ժամանակէն առաջ ճերմկեր էին . բերդը  
 միշտ սգոյ մէջ էր , և ամենեւին ուրախութիւն մը չէր  
 լսուեր հոն : Դէնըվիէվի տարեգարծին հանդէսը կատա-  
 րելու ժամը հասեր էր և միայն եպիսկոպոսին կըրպատէին ,  
 որ նոյն պաշտօնը կատարէ այն եկեղեցւոյն մէջ , որուն  
 սեղանին առջև Դէնըվիէվի և Միկիամոնտի ամուսնու-  
 թեան հանդէսը կատարեր էր :

Ղուքսը խորին լռութիւն մը կը սրահէր . « Ինչ  
 ամօթ , կըսէր ինքնիրեն , որ մեր ընտանիքը այս կերպով  
 անհետ ըլլայ . . . . . ասկայն , ո՛վ Տէր , թող քու  
 կամքդ ըլլայ » : « Ափսոս , կըսէր դքսուհին ինքնիրեն՝ հա-  
 ուաչելով , մեր միակ աղջիկը , մեր սիրոյն արժանի այն  
 անսկզբ զաւակը դահիճներու զոհ ըլլայ , ո՛հ , ինչ սոս-  
 կալի բան : Ո՛վ Դէնըվիէվ , կը յուսայինք որ մխիթա-  
 րիչ հրեշտակի մը պէս զքեզ մեր մահուան անկողնոյն  
 քովը տեսնէինք , որպէս զի մեր աչքը գոցէիր . . . : Տայց ,  
 ո՛վ Տէր , կը յաւերարնէր անմիջապէս , թող քու կամքդ  
 օրհնեալ ըլլայ » :

Նոյն վայրկենին պատուելի եպիսկոպոսը ներս մտաւ .  
 իւր դէմքը երկնային ուրախութեամբ մը կը վայելէր .  
 « Փարատեցէք ձեր տրամութիւնը , ըսաւ , և ուրախա-  
 ցէք Աստուծով » . . . : Այնուհետև սկսաւ Վախախնա-  
 մութեան զարմանալի անօրէնութեանց վրայ մեծ ազդե-



ցութեամբ խօսիլ, իրենց սիրելի աղջկան վրայ ունեցած արամութիւննին: Յակոբ նահապետին իւր Յովսէփ որդւոյն կորստեան վրայ ունեցած վշտին նմանցուց, ու նկարագրեց անոնց թէ ինչպէս ուրախացաւ Յակոբ երբ իւր որդին նորէն գտաւ: Ապիսկոպոսին քաղցր պերճախօսութիւնը մեծ ազդեցութիւն ըրաւ անոնց վրայ:

Յակոբին ուրախութեանց պատկերը և մարդուս բազդին Աստուծոյ անօրէնութենէն կախեալ ըլլալուն մտածութիւնը զիրենք ուրախութեամբ լցուց և իրենց տրտմութիւնը փարատեց:

« Ինչպէս երջանիկ պիտի ըլլայինք, ըսաւ զքսուհին, եթէ Յակոբին ուրախութիւնը մենք ալ ունենայինք:

— Այս կեանքին մէջ պիտի չկրնանք մեր աղջկեր տեսնել, պատասխանեց կոմսը հառաչելով, այլ երկինքը:

— Այս կեանքին մէջ ալ պիտի տեսնէք զան, կրօնեց եպիսկոպոսը, Աստուած կարող է նոյն հրաշքները այսօր ալ գործել. եթէ Աստուած մեզ վէրք մը կու տայ, զայն բժշկելու սպեղանիքն ալ կը զրկէ, եթէ զմեզ թըշուառութեան կը տանի, անկէ ազատելու կարող է: Յակոբին և Յովսէփին Աստուածը դեռ կենդանի է, ան որ ձեր սիրտը զօրացուց և չթողուց որ չափազանց արամութենէն խորտակուի, նոյնպէս պիտի զօրացնէ և հիմա որ չափազանց ուրախութենէն վտանգի մէջ չիյնայ: Փոխանակ ցաւազին ողբեր երգելու՝ երթանք ուրեմն մատուռ, գոհանանք Աստուծոյ, քանզի Դէնրվիէվ կենդանի է, և պիտի տեսնէք զան»:

Արկու ազնիւ ծերունիները հիացմամբ անօր կը նա-



Եւ ինչ, և կը դողային : Յոյսն ու երկիւղը իրենց սիրտը կը յուզէր, ու պատուելի եպիսկոպոսին խօսքերուն ջէին կրնար հաւատալ :

Այն ատեն եպիսկոպոսը դուռը բացաւ, և Առլֆը կանչեց, որ նախասենեակին մէջ կըստասէր, և ըսաւ .  
 « Ահա պարոնը աւելի ընդարձակ տեղեկութիւն կրնայ տալ մեզ » :

Առլֆ ներս մտաւ ըսելով, « Այո՛, տէր իմ, ստոյգ է . Եւնրվիէվ կոմսուհին կենդանի է տակաւին, իմ աչքովս տեսայ զան, ահանջներս անոր ձայնը լսեցին, և ձեռքս անոր ձեռքը սեղմեց » :

Այս լուրը անմիջապէս բոլոր բերդին մէջ տարածուեցաւ, դուքսին ամեն մարդիկը և դքսուհւոյն բոլոր տիկիները հիացմամբ անոնց սենեակը վազեցին եկան :

Առլֆ Եւնրվիէվի պատահած երեւելի դէպքերը մանրամասն պատմած ատեն՝ աչքերը արտասուօք կը լեցուէին, և շատ անգամ ձայնը կը քաշուէր : Բոլոր բազմութիւնը մեծ ուշադրութեամբ և անձկութեամբ մտիկ կընէին, և դուքսը ու դքսուհին հազիւ կը հաւատային :

Այրջապէս դիպուածներուն ճշմարտութեանը վրայ տարակուսիլ չկրնայով, և իբր դժնդակ երազէ մը արթննայով, կարծես թէ կենդանութիւն մը առին և երկուքնին մէկ տեղ պոռացին . « Աւրեմն Եւնրվիէվ մեր սիրելի զաւակը կենդանի է . երթանք մեռնելէն առաջ գրկենք զան » :

Ամենքնին ալ հանդիսաւոր կերպով Աստուծոյ փառարանութիւններ մատուցանելէն ետեւ, սուանց ժամաւ



նակ կորանցրնելու՝ բարեպաշտ եպիսկոպոսը, Առաջ իւր ձիաւոր ընկերներովը, և կոմսն ու կոմսուհին իրենց բազմաթիւ ծառաներովը ճամբայ ելան:

Այս միջոցին Դէնրվիէլ մեծ խնամք ստանալով անողգայարար առողջացեր էր, և իւր այտերը սկսեր էին իրենց վարդի գոյնը ստանալ: Աշխարհի մէջ ունեցած իւր ամենէն մեծ բաղձանքն էր իւր սիրելի ծնողքը տեսնել: Յանկարծ անոնք եկան յուսացածէն աւելի շուտ: Անկարելի է իրար տեսած ատեննին անոնց զգացմունքը նկարագրել: «Այսուհետեւ թող մեռնիմ, բացազանչեց բարեպաշտ մայրը Յակոբ նահապետի նման, որովհետեւ դուն դեռ կենդանի ես, և քու անմեղութիւնդ ճանչցուեցաւ»: Բարի ծնողքը փոփոխակի իրենց աղջկան սրտանոցին վրայ իյնալով, երկար ատեն լացին:

Այլ սիրելի Յաւակը տեսան. «Այս է մեր թոռը, ըսին երկուքնին միատեղ, ո՛հ, եկո՛ւ սիրասուն զաւակ, եկո՛ւ մեր զրկացը մէջ:

— Աստուած օրհնէ զքեզ, սիրելի որդեակ, ըսաւ Պրապանտի դուքսը զան իւր զրկաց մէջ առնելով և համբուրելով:

— Աստուծոյ աջը վրայդ ըլլայ, սիրուն զաւակ», կրկնեց հանին Յաւակը հաւին զրկէն առնելով և լալով համբուրելով զան: Անկէ ետեւ երկուքնին մէկտեղ խիստ ջերմեռանդութեամբ պոռացին. «Այլ Աստուած, ինչպէս զարմանալի է նախախնամութիւնդ: Մենք քու մահուանդ վրայ կու լայինք, սիրասուն աղջիկ, և աշխարհիս վրայ մէկ մ'ալ զքեզ տեսնելու ամենեւին յոյս չունէինք:



և ահա Աստուած զքեզ մեր սիրոյն նու իրելէն զատ՝ մեզ զաւակ մ'ալ կու տայ" :

Այն միջոցին եպիսկոպոսը անոնց մօտեցաւ . Սիկիսմոնտ և իւր ամուսինը իրենց ուրախութեան յափշտակութեանը մէջ զան շտեմեր էին . Դէնըվիէվ երբ յանկարծ իւր առջևը տեսաւ զան , կարծեց թէ երկինքէն իջած հրեշտակ մ'է : Ահեղեցականը իւր խնդակցութիւնը յայանելէն ետե՛ւ՝ ազդու ձայնիւ մը յաւերցուց . « Չեր հարսանեաց հանդիսին օրը իմ նախազգացածս ահա այսօր կատարուեցաւ : Սիրելի աղջիկս , Աստուած քեզ մեծ փորձութիւններ զրկեց , որպէս զի այս աշխարհիս երջանկութիւններէն աւելի մեծ երջանկութիւն մը պատրաստէ քեզ երկինքը . դիպուածները այնպէս տնօրինեց որ վերջապէս մեր ակնկալութեան հակառակ՝ զմեզ վերստին միացուց . ուրեմն ուրախութեան արտասուօք փառք տանք երկնային նախախնամութեան որ մինչև ցայսօր անվտանգ պահպանեց զքեզ : Այրանի՛ անոր որ դժբաղդութեան փորձութեանը արիութեամբ կը համբերէ . վասն զի արժանի կըլլայ այն անթառամ պսակին , զոր Աստուած իւր սիրելիներուն խոստացաւ : Այլ ահա այն պսակը քեզ երկինքը պատրաստած է" :





## Գ Լ Ո Ր Թ Թ Ե Ը Թ

Ճէնրվիէլ էր հայապահայ այցելութիւնը կ'ընդունի :

Արք Ճէնրվիէլ կատարեալ առողջացաւ, ամեն կողմէն ամեն աստիճանի այցելուներ կու գային զինքը տեսնելու և իրենց յարգանքը անոր մատուցանելու : Ճէնրվիէլ սիրով և պատուով անոնց այցելութիւնները կ'ընդունէր, և որպէս զի ամեն զինքը տեսնել ուզողները գոհ ընէ, հրամայեց Առլֆին որ ամենեւին մէկու մը արգելք չըլլայ և ամեն մարդ մինչև ամենէն յետին ծառաները ազատ ըլլան իւր սենեակը մտնելու : Այն ժամանակ այցելուներուն թիւը աւելի սաստկացաւ. սակայն ամեն մարդ մեծ ակնածութեամբ և խոնարհութեամբ կ'ուսուհայէր սենեակը կը մտնէին և ձայն հանելէն անգամ կ'ըզգուշանային :

Ճէնրվիէլ սպիտակ զգեստներ հագած սովորաբար կամ թեւթոռի մը և կամ իւր անկողնոյն վրայ նստած կ'ըլլար : Իւր քնքուշ դիմացը վրայ բարեպաշտութեան և քաղցրութեան այնպիսի հրեշտակային տպաւորութիւն մը կ'երեւէր, որ կարծես թէ փառաց ճաճանչափայլ շրջանակ մը անոր երեսը կը շրջապատէր : Իւր այցելուաց հետ միշտ մեծ մարդասիրութեամբ կը վարուէր. քաղցր և օգտակար խօսակցութիւններով զանոնք կ'ըզմայլեցընէր, և անոնց սիրտը կը շահէր ՚ի բարին :



«Արեւի բարեկամներս, կրտէր անոնց արտառուչ ձայնով մը, ձեր սրտին ազնուութիւնը կը ճանչնամ, և իմ դժբաղդութեանս և երջանկութեանս մէջ ինձ վշտակից և ուրախակից ըլլալուդ համար շնորհակալ եմ ձեզ: Ափսոս, ձեզմէ շատերն ալ տեսակ տեսակ վիշտերէ և արտաճութիւններէ ազատ չեն, և դիտեմ որ այս աշխարհիս մէջ նեղութիւններ և փորձութիւններ պիտի կրեն: Բայց միշտ ապահով եղէք, սիրեցէք Վստուած, անոր սուրբ նախասնամութեանը վստահացիք և ամենեւին մի վհատիք: Աստուած զինքը սիրողները վտանգէ կ'ազատէ: Արբ ամեն կողմէ կորսուած կը կարծէք ինքզինքնիդ, Աստուած կարող է ձեզ օգնութեան հասնելու: Երբ վերջին թշուառութեան մէջ կը գտնուիք, Աստուծոյ զթութիւնը պատրաստ է զմեզ ազատելու: Այլ ջապէս ամեն բան մեզի օգտաւար ընելու կարող է. թող իմ կենացս մէջ սրտահաճները ձեզ օրինակ ըլլան:

«Պահ եղիք ձեր վիճակէն, վասն զի դժգոհութեան մէջ երջանկութիւն չկայ. որչափ և աղքատ ըլլաք, անապասին մէջ իմ եօթը տարուան եղածիս չափ չէք կրնար ըլլալ: Ամենքդ ալ դոնէ խրճիթ մը, անկողին մը, զգեստներ, և ձմեռուան մէջ տաքնալու համար կրակ և ուտելու կերակուր ունիք: Պահ կեանք մը վարելու համար խոհեմ մարդու մը ասկէ աւելի ինչ պէտք է: Ուրեմն ձեր սիրտը երկրային դիւրեղձական իրերու մի յարէք. ձեր վստահութիւնը միայն կենդանի Աստուծոյ վրայ դրէք, և ոչ ստակի, որ անարգ մետաղ մ'է: Աստուած կարող է ամենէն հարուստ մարդը յետին չքաւորու



Թեան մէջ ընկղմել, և յեօին չքաւորութենէ զմեզ  
հարստութեանց և փառաց գագաթը բարձրացրնել յան-  
կարծ: Աստուծոյ ամենակարողութեան մէկ օրինակը իմ  
պատմութեանս մէջ կրնաք տեսնել:

“Սերտիւ Աստուծոյ յարեցէք. աղօթք ըրէք շատ  
անգամ և խիղճերնիդ մաքուր պահելու ջանացէք: Ան  
որ զԱստուած կը սիրէ, և անոր երկիւղը իւր սրտին մէջ  
կը կրէ՝ երկինքը կը շահի: Աղօթքը բարի գործեր գոր-  
ծելու և դժբաղդութեան մէջ համբերելու ոյժ կու տայ  
մեզ. աղօթքը ամպերուն մէջէն վեր կը բարձրանայ, և  
Աստուած կը լսէ զայն: Թէ՛ ձախորդութեանց և թէ՛  
ստորերկրեայ բանտերուն, ինչպէս նաև հիւանդութեան  
և մահուան մէջ մաքուր խիղճէն աւելի քաղցր հանգստու-  
թիւն չկայ: Չեր կենաց ընթացքին մէջ ինձի պէս դուք  
ալ փորձեցէք:

“Արբ ձեր խիղճը ձայն կու տայ ձեզ, ամեն բանէն  
առաջ աշխատեցէք որ Աստուծոյ հետ հաշտուիք, և  
Յիսուս Քրիստոս իւր միածին որդին ձեր ապաւէնը  
ըրէք, որ մեր փրկութեանը համար աշխարհ եկաւ, ու  
մեր մեղաց քաւութեանը համար իւր արիւնը թափեց:  
Եթէ ըսենք թէ ամենեւին մեզք չունինք, ինքզինքնիս  
կը խաբենք. բայց եթէ մեր մեղքերը խոստովանինք, ան-  
կեղծութեամբ ստրջացած և զղջացած սիրտ մը ունե-  
նալնիս կը յայտնենք, որով և Աստուած իւր արդարա-  
սիրութեամբը կը զթայ մեզ, կը ներէ և մեր մեղքերը  
կը քաւէ”:

Այսպէս Ժէնրվէլ իւր փորձառութեան և իւր



դժբաղդու թեանց օրինակներովը իրեն այցելու թեան եկողներուն խիստ օգտակար դասեր կու տար . մասնաւոր խրատներ կու տար ամուսնացելոց , հարց և մարց : Ամուսնացեալները կը յորդորէր որ իրարու փոխադարձ սէր , միաբանութիւն և վստահութիւն ունենան . « Օգուշացէք զըպարտիչ թիւնալի լեզուներուն ահանջ դնելէ , կըսէր անոնց , վասն զի անոնք ձեր ընտանեկան հազատութիւնը կը վըդովեն » :

Օնտղաց կը խրատէր որ իրենց զաւակը Աստուծոյ երկիւղին մէջ մեծցընեն . « Տարի կին , կըսէր օր մը ընտանիքի տէր կնոջ մը , որ իւր զաւակը զրկած զինքը տեսնելու եկեր էր , այդ սիրուն զաւակին ճակատին վրայ իւր կենաց ընթացքին մէջ ինչ ճակատադիր ունենալէքը դրուած չէ : Այսօր քաղցր ժպիտ մը իւր կենաց արշալոյսը կ'ողջունէ . բայց ժամանակ կու դայ որ այդ ժպիտը տրամութիւններու , վիշտերու և արտասուաց կը փոխուի , վասն զի ամենեւին մարդկային արարած մը բաղդին փոփոխութիւններէն ազատ չէ : Ձեր պարտքն է հոգ տանիլ որ անոնց լաւ դաստիարակութիւն մը տաք , որպէս զի կենաց ընթացքին մէջ ամեն տեսակ դժբաղդութեանց դիմանալու կարող ըլլան : Մայրս զիս զրկած ժամանակը՝ անտարակոյս մտքէն չէր անցընէր որ օր մը զլուխս այնչափ դժբաղդութիւններ պիտի դան : Աթէ զիս Աստուծոյ երկիւղին մէջ չմեծցընէր և չորովեցընէր ինձ որ երկնային սուրբ նախախնամութեանը ապաստանիմ , անշուշտ դժբաղդութեանց լուծին տակը պիտի կորսուէի , և ո՞վ դիտէ անապատին մէջ յուսահատու-



Թե՛նէ ի՛նչ պիտի ըլլայի : Աթէ Ըստուծոյ, Յիսուսի և մեր հոգւոյն անմահութեանը չհաւատայի՛ք, մեր աշխարհային կեանքը իւր բոլոր վեշտերովը և թշուառութիւններովը խիստ ափսոսալի և յուսահատական պիտի ըլլար : Սիրելի բարեկամուհիս, նայէ որ քու զաւակացդ սրտին մէջ անոնց մատաղ հասակէն կենդանի հաւատոյ սկզբունքները դնես ; որոնք անոնց երջանկութեան միակ պատճառը պիտի ըլլան” :

Դէնրվիէվի սենեակը մանող ամեն փոքր տղայք մէկ մէկ ընծայ ընդունելով դուրս կեյնէին, և այս ընծաները Յաւակին ձեռքը կը բաշխուէին :

Կոմսուհւոյն բարեպաշտութիւնը, դժբաղդութիւնները, համբերութիւնը, մարդասիրութիւնը և բարի խրատները իրեն այցելութեան եկողներուն այնչափ ազդեցութիւն կը ընէին որ ամենէն խստասիրտ մարդերուն անդամ սիրտը կը փղձկէր և աչքերնին արտասուք կը լցուէին :

Շատ մոլի մարդիկ իրենց չար սովորութիւններէն ետ կեցան և կոմսուհւոյն խրատներուն հետեւելով առաքինի մարդիկ եղան. բազմաթիւ տուներու մէջ, ուր առաջ ատելութիւնն ու անկարգութիւնը կը տիրէր, սէր, միութիւն և երջանկութիւն մտան :





## ՔԼՈՒԲ ԺԲ.

Արք ե-ր պատիժը կ'ընդունի :

Այցելութեան եկող ամեն բաղնու թիւնը կոմսուհւոյն արահէն ելնելով կուղէին Աղօն ալ տեսնել : Արք իրը զրպարտիչ , հարստահարիչ և մարդասպան ՚ի մահ դատապարտուեր էր . իւր դատաստանէն ան միջապէս ետքը զինքը կտոր կտոր պիտի ընէին , բայց Դէնքվիկի թախանձանաց վրայ՝ իւր պատիժը մշանջնաւոր բանախի ջեղուցին : Բանտապետը անօրէն Աղօն՝ տեսնելու եկող բաղնութեան ցուցնելու համար օրը զրեթէ ժամ մը հանդատութիւն չունէր : Սակայն յօժարութեամբ բանախին դուռը բանալով , “Նկէք , կ'ըսէր անոնց , վերը կոմսուհւոյն սենեակը՝ առաքինութեան և անմեղութեան օրինակը տեսաք , ու հոս այս ստորերկրեաց բանախի մէջ մտութեան և մեղաց պատկերը պիտի տեսնէք” :

Բանտապանը ձեռքը լապանի մը ու բանալինէ բուտրցակ մը բռնած ստորերկրեաց բանտը տանող քարեղէն սանդուղէն վար կ'իջնար , և երբ երկաթեաց ահագին դուռը կը բանար , բանախն մթութիւնը , խոնաւութիւնը , Աղօնի ահուելի կերպարանքը սոսկում մը կը պատճառէին դայտղներուն : Բանտարկեալին մտղերը տակնու վրայ եղած , և ոլորուած տնկուած էին , մօրուքը երկնցած և տղեղացած , գէմքը դուռնատեայ և նիհար



ցած, նայուածքը վայրենի և սոսկալի էր: Իւր խղճնը  
տանքը այն տատիճան կը նեղէր զինքը որ շատ անգամ  
խեղագարու թեան մէջ կ'իյնար. և սոսկալի ձայնիւ հա-  
նելով, կատաղու թեամբ իւր շղթաները կը շարժէր, ու  
դրուխը պատին կը զարնէր: Զանդարտած ատենն ան-  
գամ այնպիսի այլանդակ խօսքեր կ'ընէր, որ լսողները  
կը սոսկացընէր:

«Ինչ անմիտ եմ եղեր ես, կ'ըսէր շատ անգամ,  
վայ անոր որ Աստուծոյ ճանապարհէն կը զարտուղի,  
իւր սիրտը մոլի կրկն կը ծառայէ, և խղճմտանաց ձայնը  
չսեր: Այլ է 'ի սկզբան քիչ մը կեղծ ուրախութիւն մը  
կըզգայ, այլ վերջապէս իւր բաժինը տառապանք և  
թշուառութիւն է: Օտաղկանց վրայ կը քայլէ, բայց  
յանկարծ անոնց տակը պահուած անդունդին մէջ կ'իյ-  
նայ: Այն անոր որ ապօրինաւոր ցանկութեանց կու տայ  
ինքզինքը, մացառի մը մէջ ծաղկեալ վարդը քաղելու  
յուտով ձեռքը երկնցուցած ատենը՝ յանկարծ մացառին  
մէջէն օձ մը դուրս կը յարձակի սուլելով, անոր մար-  
մնոյն կը փաթթուի, կը խեղդէ, կը պատառէ զան, և  
անվերջ տառապանաց մէջ կը թողու»: :

Թէեւ կոմսուհւոյն դէպքերը շատ անգամ պատմեր  
էին իրեն, սակայն միշտ կը հարցընէր. «Ըսէք՝ կ'աղաչեմ,  
ասոյց է որ կոմսուհին իւր զաւակին հետ զանուեցաւ,  
ճշմարիտ է այս թէ երազ: Ա՛յ, ո՛չ, երազ չէ տեսածս,  
ասուգիւ զան գտան, քանզի, կը յաւելցընէր ցաւազին  
ձայնով մը, Աստուած ահաւոր վրէժխնդիր է, այս նոյն  
բանտէն ազատեց զան, ուր ես բանտարկեր էի, և զիս



նեանց հոս: Այն, այն, հոս՝ ահա այս նոյն անոր նստած էր ան, ուր ես հիմա անոր անոր նստած եմ: Հիմա հաւատացիք որ Աստուած իրաւարար է . . . .”:


Արիշ անգամ մ'ալ կ'ըսէր. “Օյս տանելու համար եկած էք վերջապէս, երթանք ուրեմն. տարեք զիս կառափնարանը, յօժարակամ կ'երթամ, կը յաւելցրնէր ոտք ելելով: Աս առաքինի մայր մը ու անոր զաւակը սպաննեցի, ուստի արժանի եմ որ իմ զլուխս կտրեն: Անմեղին արիւնը թափեցի . . . . ո՛հ, նայեցէք, դեռ ձեռքերս անոր արիւնովը շաղախեալ են: Աճքերէս վազած արտասուաց աղբիւրը բաւական չէ ձեռացս արիւնը լուարու. ուստի պէտք է որ արիւնս զլիսատութեան բեմին վրայ հոսի. յօժարութեամբ կը փափաքիմ ասոր, քանզի աւելի կ'ուզեմ դահճին սուրին տակ իսկոյն կեանքս վերջացրնել, քան թէ սրտիս սոսկալի տառապանաց մէջ տակաին երկար ատեն տանջուիլ”, կը յաւելցրնէր ձեռքը բաց կուրծքին վրայ դնելով:

Արբեմն՝ բանտին դուռը բացուած ժամանակը՝ զինքը տեսնելու եկող մարդիկը ուշադրութեամբ դիտելով է բարձրաձայն ծիծաղելով կ'ըսէր. “Օձե՛ղ ալ հոս բերին ինձ ընկեր ընելու համար. դո՛ւք ալ հեշտութեանց հրապուրանքէն խարուեցաք. դո՛ւք ալ անմեղը մոլորեցուցիք: Մայիմ՝ ձեռքերնիդ, ձերն ալ մօր մը և խեղճ մանկան մը արտասուօքը և արեամբը շաղախեալ են: Ինչո՞ւ կը պահէք, ինչո՞ւ չէք համարձակիր ցուցրնել. այո՛, ստոյգ է . . . . ձեր ձեռքերն ալ թաթաւեալ են իմիններուս պէս: Իմ արժանաւոր ընկերներս էք, ու դո՛ւք ալ ինձի



պէս յանցաւ որ էք : Մերս մտէք, ընկերներս, հոս ձեզ համար բաւական տեղ կայ . . . . : Մտնէք որ ինձ կը նմանին՝ պէտք են ինձ ընկերանալ” :

Մհա այս յուսահատական վիճակին մէջ Աղօ իւր խղճի տաղնապէն նեղուած, և իւր մեղաց զղացմամբը շարաշար քանի մը տարի տառապելէն ետե՛ իւր դատաւճուոյն զործազրութիւնը ընդունեց :



## ՔԼՈՐԵ Բ.

Մեայնանացք :

Քորը տղայք Դէնրվիէվը, Յաւակը և Աղօն տեսնելէն ետե՛ իրենց հասակին հետաքրքրութեամբը կը փափաքէին հաւատարիմ եղնիկն ալ տեսնել : Աոմսը բերդին պարտեղին մէջ խիստ գեղեցիկ խղճիթ մը շինել տուաւ անոր համար, ու եղնիկը պարտեղին և բակին մէջ մինչև բերդին ներքին կողմը համարձակ կը պտտէր :



Օրք քանի մը անգամ յիշխելի սենեակը կենէր և մինչև որ կոմսուհւոյն գրուանքը չընդունէր՝ վար չէր իջներ : Ամենուն հետ այնպէս ընտանեցած էր , որ իրեն ուտելիք սուտղներուն ձեռքին մէջ կ'ուտէր . որսական բարակներն անգամ անոր հետ ընտանենայով անոր չէին դաչեր : Փոքր տղայք մեծ հաճութիւն կ'ըզգային այն գեղեցիկ կենդանին տեսնելու , զան շոյելու և անոր հաց տալու : « Ո՛վ Աստուած , կ'ըսէին մայրերը , առանց այս հաւատարիմ եղնիկին՝ մեր պատուելի կոմսուհին և սիրելի կոմսը անապատին մէջ պիտի կորսուէին :

— Պէտք չէ ամենեին որ և է կենդանի մը նեղել , կ'ըսէր եղնիկը խնամող ծառան . եթէ մեր սայլը լծող եղերը և մեզ կաթ սուտղ կովերը չըլլային , անապատին մէջ կոմսուհւոյն վարած կեանքին պէս մենք ալ տխուր կեանք մը պիտի վարէինք աշխարհիս մէջ : Այո՛ , երկիրը առանց կենդանեաց մեզի համար ճշմարիտ անապատ մը պիտի ըլլար : Խիստ քիչ դաշտեր մշակուած պիտի ըլլային , և ամենէ ընտիր մարդագետնները քանի մը պիտի չծառայէին : Ուրեմն մեր ընտանի կենդանիները նեղելէն զգոյշ կենանք , և փառք տանք Աստուծոյ որ զանոնք մեզ սուեր է » :

Ստոյգ չգիտցուիր թէ յիշխելի մինչև քանի տարեկան ապրեցաւ . բայց միշտ առաքինութեամբ և բարեպաշտութեամբ երջանիկ և հանդարտ կեանք մը անցուց : Իւր կենաց վերջին օրը՝ անվտանգ անցած մըրկայոյզ փութորիկէ մը ետև գարնան գեղեցիկ իրիկունի մը կը նամանէր և իւր մահը վախճանող արեւուն հետ կրնայ բաղ-



գատուիլ, որ կը լուսաւորէ զմեզ մինչև որ աներեւոյթ  
կըլլայ մեր աչաց առջևէն, որպէս զի լուսազոյն աշխարհի  
մը մէջ աւելի պայծառ կերպով ծագի :

Անթիւ բազմութիւն մը անոր յուղարկաւորութեանը  
ներկայ դտնուեցաւ, մարդ չկար որ անոր մահուանը վրայ  
չար : Միկիամնատ և Յաւակ իրենց արտասուօքը անոր  
գերեզմանը թրջեցին, իսկ եղնիկը անոր գերեզմանին քովէն  
ամենեւին չզատուեցաւ, և ոչ իսկ իրեն տրուած ուտե-  
լիքը կ'ուտէր. առտու մը զան իշխանուհւոյն գերեզմանին  
վրայ մեռած գտան : Արմար Ժէնրվիէվի համար ձերմակ  
մարմարիոնէ, փառաւոր գերեզման մը շինել տուաւ, վրան  
եղնիկին պատկերն ալ նկարելով :

Ժէնրվիէվի աղաչանօքը կոմսը անապատին մէջ քա-  
րայրին ձախ կողմը միայնանոց մը և աջ կողմը փոքրիկ  
մատուռ մը շինել տուաւ, որուն պատերուն վրայ քաջ  
պատկերահաններու ձեռօք Ժէնրվիէվի պատմութեան  
գլխաւոր պարագաներուն պատկերները նկարել տուաւ :  
Ժողովուրդը յաճախ այցելութիւններ ընելով, այս տեղը  
երեւելի եղաւ. միայնանոցին կրօնաւորը ամեն եկողներուն  
Ժէնրվիէվի մանրամասն պատմութիւնը ընելով, անոր  
բնակած քարայրը, խաչը և դժուած պատկերները կը  
ցուցնէր :

